Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Supporting Democracy Since 2013

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երևան | 2026

Զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Նպաստել դատական համակարգի անկախությանը և արդարադատության հասանելիությանը» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Հետազոտությունն իրականացրել ու զեկույցը կազմել են Հասմիկ Հարությունյանը, Աննա Մելիքյանը և Արաքս Մելքոնյանը: Դատական ակտերի ուսումնասիրությունն ու տեղեկատվության հավաքումն իրականացրել է Դիանա Հարությունյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

I. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 6

1.1 Օրենսդրություն 6

1.1.1 Հատուկ մասի նորմերի փոփոխություն 7

1.1.2 Ընդհանուր մասի նորմերի փոփոխության ազդեցությունը զինված ուժերում ծառայության ընթացքում կատարվող հանցագործությունների քննության վրա 8

1.1.3 Խոշտանգման հանցակազմ պարունակող արարքների որակումը 10

1.2 Քաղաքականության փաստաթղթեր 16

II. ՄԻԵԴ մոտեցումները զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ 18

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՄԲ ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ 22

3.1 Ընդհանուր տվյալներ 22

3.2 Տվյալներ քրեական գործերով ներգրավված մեղադրյալների վերաբերյալ 26

3.3 Գործով տուժողը 37

IV. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 38

4.1 Խախտման բնույթը և մեղադրանքը 39

4.2 Վեճերի պատճառները 40

4.3 Կարգապահական և քրեական պատասխանատվության տարանջատում 49

4.4 Պաշտպանության իրավունք 50

4.5 Տուժողի շահերի պաշտպանություն 52

4.6 Խափանման միջոցի կիրառում 53

V. ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ 56

5.1 Քրեական գործով վարույթի կարճելը 56

5.1.1 Քրեական գործով վարույթ կարճելը կողմերի հաշտության հիմքով 57

5.2 Արագացված վարույթի կիրառում 63

VI. ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԻԺ 69

6.1 Մեղմացնող հանգամանքների գնահատում 73

VII. ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 74

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 83

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 88

ՆԱԽԱԲԱՆ

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը և արժանապատիվ միջավայրի ապահովումը ցանկացած իրավական պետության համար ունի առաջնային նշանակություն: Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ զինծառայողները գտնվում են փակ և խիստ հիերարխիկ համակարգում, որտեղ կարգապահությունը, ենթակայության հարաբերությունները և փոխադարձ հարգանքը հանդիսանում են ոչ միայն ծառայողական արդյունավետության, այլև անձի արժանապատվության պահպանման հիմնարար նախապայմաններ: Սակայն գործնականում զինված ուժերում շարունակում են արձանագրվել բռնության, վատ և նվաստացնող վերաբերմունքի դրսևորումներ, որոնք վտանգում են զինծառայողների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունն ու անձեռնմխելիությունը, ինչպես նաև խաթարում իրավական պետության սկզբունքների լիարժեք իրագործումը:

Հաշվի առնելով այս հանգամանքները, ինչպես նաև ՀՀ-ում տարիներ շարունակ զինված ուժերում արձանագրված և արձանագրվող խնդիրները՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից նախաձեռնվել է զինված ուժերում վատ վերաբերմունքի և բռնության տարբեր դրսևորումների վերաբերյալ վարույթների դատական պրակտիկայի վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտելու դեպքերի հիմնական բնույթն ու պատճառները, ինչպես նաև իրավական արձագանքման առանձնահատկությունները՝ ՀՀ միջազգային պարտավորությունների լույսի ներքո:

Զեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մեղադրյալների և տուժողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերին, խախտումների առաջացման պատճառներին ու խախտմանը նախորդած հանգամանքներին, արարքի որակման առանձնահատկություններին, դատական վարույթի ընթացքին, կիրառված խափանման միջոցներին և դատարանների կողմից կայացված վերջնական դատական ակտերին: Քննարկվում են զինված ուժերում վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունը և քրեաիրավական արձագանքման մոտեցումները՝ ՀՀ միջազգային պարտավորությունների, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների լույսի ներքո:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունն իրականացվել է որակական և քանակական հետազոտական մեթոդների կիրառման համակցությամբ: Ուսումնասիրության հիմնական աղբյուրը հանդիսացել են դատական պրակտիկայի տվյալները: Մասնավորապես, մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ դատական տեղեկատվական համակարգի Datalex.am կայքում (այսուհետ՝ դատալեքս) հասանելի, 2020-2025թթ.-ին ՀՀ դատարաններ մուտքագրված 51 դատական գործեր, որոնք ընտրվել են ըստ հանցակազմի համապատասխանության ուսումնասիրության նպատակներին և որոնցով 2025թ. դեկտեմբերի դրությամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է վճիռ: Դիտարկման շրջանակում ընդգրկվել են ՀՀ քրեական օրենսգրքի 519–524-րդ հոդվածներով (2003թ. ընդունված ՔՕ 358, 358.1, 359–360, 360.1–360.2) հարուցված քրեական գործերը, որոնք վերաբերում են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների խախտումներին:

Վերլուծություն. ուսումնասիրված գործերը ժամանակագրական առումով ընդգրկել են 2018–2025 թվականներին տեղի ունեցած դեպքերը, ինչը հնարավորություն է տվել դիտարկել ինչպես վերջին տարիների դատական պրակտիկան, այնպես էլ որոշակի միտումներ և կրկնվող օրինաչափություններ: Դատական գործերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են գործի քննության ժամկետները, ներգրավված մեղադրյալների և տուժողների կարգավիճակը, նրանց սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը, առաջադրված մեղադրանքների տեսակները, խափանման միջոցների կիրառման պրակտիկան, ինչպես նաև դատարանների կողմից կայացված դատական ակտերը և կիրառված պատժատեսակները:

Դատական ակտերը ենթարկվել են նաև բովանդակային և համեմատական վերլուծության, ինչի ընթացքում ուշադրություն է դարձվել կրկնվող մոտեցումներին, դատարանի հիմնավորումներին և պրակտիկ խնդիրներին: Առանձնակի ուշադրություն է դարձվել հաշտության հիմքով քրեական վարույթների կարճման դեպքերին, արագացված վարույթի կիրառմանը, ինչպես նաև պատժի անհատականացման չափանիշներին:

Փորձագիտական հարցազրույցներ. Ուսումնասիրության շրջանակներում իրականացվել են ոլորտային մասնագետների՝ փաստաբանների, իրավապահ և դատական մարմինների ներկայացուցիչների և այլ պաշտոնատար անձանց հետ քննարկումներ և փորձագիտական հարցազրույցներ: Վերջիններիս նպատակը եղել է դատական ակտերից դուրս վեր հանել համակարգային խնդիրներն ու պրակտիկայի մարտահրավերները: Ստացված դիտարկումները կիրառվել են որպես վերլուծական նյութ՝ դատական տվյալների համադրման և մեկնաբանման համար: ՀՀ պաշտպանության նախարարությունը հրաժարվել է մասնակցել հարցազրույցի՝ նշելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Հարցումներ. Ուսումնասիրության շրջանակներում տեղեկատվական հարցումներ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ զինվորական դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ դատարաններ, ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակ:

ՄԻԵԴ նախադեպերի վերլուծություն. Ուսումնասիրվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և վատ վերաբերմունքի կանխարգելման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Սահմանափակումներ. Վերլուծությունը հիմնված է բացառապես դատական համակարգում արտացոլված և հասանելի գործերի վրա, մինչդեռ զինված ուժերում վատ վերաբերմունքի, բռնության հիմքով հարուցված բոլոր քրեական վարույթները չեն ուղարկվում դատարան, այդ թվում՝ այն պատճառով, որ քրեական հետապնդումը դադարեցվում է նախաքննության փուլում: Միաժամանակ, որոշ գործերով դատական ակտերում առկա տվյալները եղել են թերի կամ ոչ ամբողջական, ինչը որոշ չափով սահմանափակել է վերլուծության խորությունը:

Այնուամենայնիվ, կիրառված մեթոդաբանությունը թույլ է տվել ձևավորել համապարփակ և փաստահեն պատկեր, որն արտացոլում է դատական պրակտիկան, և որի հիման վրա արվել են զեկույցում ներկայացված եզրահանգումները:

I. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Զինված ուժերում կանոնադրային հարաբերությունների ապահովումը, զինծառայողների հիմնարար իրավունքների պաշտպանությունը և վատ վերաբերմունքի կանխարգելումը պետության անվտանգության և մարդու իրավունքների քաղաքականության կարևոր բաղադրիչներից են: Այդ նպատակով ձևավորվել են իրավական, ինստիտուցիոնալ և ռազմավարական տարբեր մեխանիզմներ, որոնք ամրագրված են ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ ոլորտային քաղաքականության փաստաթղթերով:

1.1 Օրենսդրություն

Պետության քաղաքականությունը, նախ, արտացոլվում է արարքների քրեականացման միջոցով: Այդպես, և՛ 2003թ. քրեական օրենսգրքում (այսուհետ՝ նաև ՔՕ), և՛ գործող քրեական օրենսգրքում Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները զետեղված են առանձին գլխում: 2021թ. ընդունված նոր քրեական օրենսգրքում հետազոտության առարկա հանցակազմերը առաջին հայացքից նույն կերպ են քրեականացված, բոլոր հանցակազմերը կրկին ներառված են: Այնուամենայնիվ, օրենսգրքերի նորմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են էական

փոփոխություններ ինչպես արարքի հանցակազմերում, այնպես էլ հանցագործության ծանրության առումով: Վերանայվել են նաև մինչև 21 տարեկան լրանալը հանցանք կատարելու դեպքում պատասխանատվությունից ազատելու հիմքերը:

1.1.1 Հատուկ մասի նորմերի փոփոխություն

➢ *Սանկցիաների փոփոխություն*

Նոր քրեական օրենսգրքով մի շարք հանցակազմերի համար նախատեսված սանկցիաները մեղմացվել են: Դա վերաբերում է ինչպես բռնություն գործադրելուն, այնպես էլ որոշ դեպքերում՝ ինքնասպանության հասցնելուն: Արդյունքում որոշ դեպքերում միջին ծանրության հանցագործությունը դարձել է ոչ մեծ ծանրության հանցագործություն[1] կամ ծանր հանցագործությունը դարձել է միջին ծանրության[2], կամ առանձնապես ծանր հանցանքը դարձել է ծանր[3]՝ դրանից բխող հետևանքներով: Օրինակ՝ թեև զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ բռնությունը ներկայումս սահմանված է 4-րդ մասով, այնուամենայնիվ, նախատեսված պատիժը ավելի մեղմ է, քան 2003թ. ՔՕ-ով, երբ այդ հանցակազմը նախատեսված էր 3-րդ մասով[4]:

Նման փոփոխությունները ազդեցություն ունեն ինչպես վաղեմության ժամկետների, այնպես էլ պատասխանատվությունից ազատման ինստիտուտների կիրառման վրա:

Միևնույն ժամանակ փոքր ինչ խստացվել են զինծառայողին վիրավորանք հասցնելու համար սանկցիաները, որոնք միևնույնն է չեն փոխել հանցանքի ծանրության աստիճանը: Խստացվել է նաև անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու սանկցիան, եթե դա կատարվել է ռազմական դրության կամ մարտի դաշտի պայմաններում (ՀՀ ՔՕ 522-րդ հոդվածի 3-րդ մաս):

➢ *Հանցակազմի տարրերի փոփոխություն*

Հանցակազմերում այլևս չի տարանջատվում ծեծը և այլ բռնությունը, օգտագործվում է բռնություն եզրույթը:

Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության

---

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 1, 2-րդ մասերը, 520-րդ հոդվածի 1-ին մասը և համապատասխանաբար 2003թ. ՔՕ 358-րդ հոդվածի 1, 2-րդ մասերը և 358.1-րդ հոդվածի 1-ին մասը

[2] Տե՛ս, օրինակ՝ ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 3-րդ մասը և 2003թ. ՔՕ 358-րդ հոդվածի 3-րդ մասը, 520-րդ հոդվածի 3-րդ մասը և 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի; ՀՀ ՔՕ 522-րդ հոդվածի 1-ին մաս և 2003թ. ՔՕ 360.2-րդ հոդվածի 1-ին մաս:

[3] Տես, օրինակ՝ ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը և 2003թ. ՔՕ 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը; ՀՀ ՔՕ 520-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը և 2003թ. ՔՕ 358.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը

[4] Տե՛ս, օրինակ, ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետ և 2003թ. ՀՀ ՔՕ 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Նշվածը վերաբերում է նաև ՀՀ ՔՕ 520 և 521-րդ հոդվածներին:

դեպքում, եթե դա արտահայտվել է պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելով, հանցակազմում նոր ՔՕ-ով ավելացել է «պարբերաբար» պահանջը (ՀՀ ՔՕ 521-րդ հոդվածի 1-ին մաս): Միևնույն ժամանակ պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու «պարբերաբար» կատարվելու պահանջը հանվել է ինքնասպանության հասցնելու հանցակազմից (ՀՀ ՔՕ 522-րդ հոդվածի 1-ին մաս): Հանվել է նաև անուղղակի դիտավորության պահանջը դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու հանցակազմում:

➢ *Որոշ արարքներիր ապաքրեականացում*

Պետք է նշել նաև, որ որոշ հանցակազմերի դիսպոզիցիայում կամ ծանրացնող հանգամանքներում նույնպես կատարվել են կարևոր փոփոխություններ: Նախ, ապաքրեականացվել է պետի կամ ստորադասի մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ (2003թ. ՔՕ 358-րդ հոդվածի 1-ին մաս, 358.1-րդ հոդվածի 1-ին մաս), միևնույն ժամանակ քրեականացվել է պետի կամ ստորադասի մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը (ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 2-ին մաս, 520-րդ հոդվածի 2-ին մաս): Առողջությանը թեթև վնաս պատճառելով բռնությունը նույնպես ապաքրեականացվել է:

➢ *Ծանրացնող հանգամանքների փոփոխություն*

Սահմանվել է նոր ծանրացնող հանգամանք՝ հրամանատարի (պետի) կամ ստորադասի նկատմամբ կամ ենթակայության պայմանների բացակայության դեպքում բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից (ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 520-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ), ինչպես նաև եթե այն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (ՀՀ ՔՕ 519-րդ հոդվածի 5-րդ մաս, 520-րդ հոդվածի 5-րդ մաս, 521-րդ հոդվածի 4-րդ մաս):

Փոփոխվել են ծանրացուցիչ հանգամանքները, հանվել է զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ լինելու պահանջը:

1.1.2 Ընդհանուր մասի նորմերի փոփոխության ազդեցությունը զինված ուժերում ծառայության ընթացքում կատարվող հանցագործությունների քննության վրա

Գործով քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներում նույնպես կատարվել են էական փոփոխություններ, որոնք զգալի ազդեցություն ունեն ուսումնասիրության առարկա հանցանքների քննության, պատժի նշանակման և պատասխանատվությունից ազատման համար:

- *Մինչև 21 տարեկանում հանցանք կատարած լինելու դեպքում պատասխանատվությունից ազատման հիմքերի մեղմացում*

Նոր օրենսգրքում սահմանված են մինչև 21 տարեկան մեղադրյալների պատժի նշանակման և քրեական պատասխանատվությունից ազատման առանձահատուկ կարգավորումներ[5]: Իսկ քանի որ ուսումնասիրվող գործերով հիմնականում ներգրավված են մինչև 21 տարեկան մեղադրյալներ, ուստի այս տեսակ գործերով նոր կարգավորումները զգալի ազդեցություն են ունենալու:

Մեղմացվել են վաղեմության ժամկետի հաշվարկի նորմերը, հատկապես տարիքով պայմանավորված՝ 18-ից մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են մեկ երրորդի չափով[6]:

- *Հաշտության ընթացակարգի կիրառման հիմքերի ընդլայնում*

Փոփոխվել է նաև հաշտություն կնքելու նկատմամբ մոտեցումը, ընդլայնվել է դրա կիրառման շրջանակը՝ այն տարածվում է նաև միջին ծանրության հանցագործությունների վրա, և կողմերի ազատ կամարտահայտության պայմաններում դրա կիրառումը դառնում է պարտադիր: Նշված գործերով հաշտության կիրառելիությունը հատկապես ընդլայնվել է՝ հաշվի առնելով հանցակազմերի սանկցիաների մեղմացումը:

Գործող քրեական օրենսգիրքը նախատեսում է հնարավորություն մեղադրյալին քրեական պատասխանատվությունից ազատել՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ: Այդպես, Օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված են մի քանի նախապայմաններ՝

- անձը պետք է հանցանք կատարած լինի առաջին անգամ,
- նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է,
- նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

Սահմանված է նաև արգելք՝ նախկինում այս հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

2003թ. քրեական օրենսգրքով նույնպես թույլատրելի էր մեղադրյալի քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու հիմքով: Սակայն

[5] Տե՛ս ՀՀ ՔՕ Գլուխ 16 և 17:
[6] ՀՀ ՔՕ 106-րդ հոդվածի 2-րդ մաս:

նախապայմանները այլ էին: Այդպես, հաշտությունը թույլատրելի էր միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում, եթե մեղադրյալը հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը (հոդված 73):

Իսկ ամենաէական տարբերությունն այն է, որ եթե 2003թ. օրենսգրքով այս հիմքով պատասխանատվությունից ազատելը դատարանի հայեցողությունն էր, ապա գործող քրեական օրենսգրքով՝ պարտադիր պահանջ:

Նշված փոփոխությունները փաստում են, որ նոր քրեական օրենսգրքով պետությունը մի կողմից պահպանել է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված արարքների քրեականացումը, սակայն մյուս կողմից՝ որոշ դեպքերում մեղմացրել է պատասխանատվության շրջանակը: Սա կարող է ազդեցություն ունենալ նման գործերով կանխարգելման արդյունավետության վրա՝ հատկապես հաշվի առնելով հաշտության և պատասխանատվությունից ազատման ընդլայնված հնարավորությունները, ինչպես նաև արագացված ընթացակարգի լայնածավալ կիրառումը:

1.1.3 Խոշտանգման հանցակազմ պարունակող արարքների որակումը

Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում զինված ուժերում բռնության գործադրման դեպքերով հանցագործությունները չեն որակվում որպես խոշտանգում՝ անկախ բռնության դրսևորումներից և պատճառված ցավի ու տառապանքի ուժգնությունից: Նշված եզրահանգում հաստատել են նաև հարցված մասնագետները և դատախազություն և քննչական կոմիտեի աշխատակիցները:

ՀՀ գլխավոր դատախազության տարեկան հաղորդման մեջ՝ զինվորական դատախազության գործունեության մասին բաժնում նշված են խոշտանգման հոդվածով հարուցված գործերի մասին տեղեկությունները[7]: Համաձայն դատախազության ներկայացուցչի պարզաբանման՝ նշված հոդվածով քրեական վարույթ նախաձեռնվում է, երբ անձը վարույթ իրականացնող մարմնին, հիմնականում դատարանում, հայտնում է, որ ցուցմունք ստանալու նպատակով ենթարկվել է ճնշման կամ բռնության:

Իսկ եթե բռնությունը՝ ֆիզիկական, թե հոգեբանական, տեղի է ունեցել զինված ուժերում, ապա կիրառվում են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները գլխի հանցակազմերը: Որոշ մասնագետներ նման մոտեցումը բացատրում են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները գլխի հանցակազմերը որպես հատուկ նորմ դիտարկելով: Նշված հանցակազմերի դեպքում բացակայում են խոշտանգման

[7] Տե՛ս, օրինակ՝ ՀՀ դատախազության 2023թ. գործունեության մասին հաղորդում, էջ 70, ՀՀ դատախազության 2022թ. գործունեության մասին հաղորդում, էջ 77:

հանցագործությանը բնորոշ՝ անպատժելիությունը բացառող իրավական երաշխիքները՝ ներման/համաներման, վաղեմության ժամկետի կիրառման արգելքները և այլն:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն բազմիցս մտահոգություն է հայտնել Հայաստանի զինված ուժերում արձանագրվող ինքնասպանությունների և ոչ մարտական պայմաններում մահվան այլ դեպքերի բարձր թվի, ինչպես նաև ոչ կանոնադրական հարաբերությունների և հոգեբանական ճնշման շարունակական տարածվածության վերաբերյալ՝ որպես նպաստող գործոններ: Կոմիտեն Հայաստանին կոչ է արել ապահովել զինված ուժերում տեղի ունեցած բռնության և մահվան բոլոր դեպքերի, ներառյալ՝ ինքնասպանությունների, արագ և արդյունավետ քննության իրականացումը, պատասխանատուների քրեական հետապնդումն ու պատշաճ պատժատեսակներով պատժումը, ինչպես նաև զոհերի և նրանց ընտանիքների համար արդյունավետ իրավական պաշտպանության և հատուցման միջոցների հասանելիությունը:[8]

Ուսումնասիրության արդյունքները, որոնք հաստատվում են նաև իրավասու մարմինների պաշտոնական վիճակագրական տվյալներով, ցույց են տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածը գործնականում չի կիրառվել զինված ուժերում կատարված բռնության դեպքերի նկատմամբ: Դիտարկված ժամանակահատվածում, չնայած արձանագրվել են պարբերական ծեծերի, հարկադիր մերկացման, նվաստացման, սպառնալիքների, հարկադրանքի և ինքնասպանությանը նախորդած բռնությամբ զուգորդված վարքագծի բազմաթիվ դեպքեր, խոշտանգման հատկանիշներով որևէ քրեական վարույթ չի հարուցվել: Փոխարենը բոլոր դեպքերը քննվել են բացառապես Քրեական օրենսգրքի 46-րդ գլխի 519–521-րդ հոդվածների շրջանակում:

Թեև արձանագրված արարքներից մի մասը կարող էր համապատասխանել ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման կամ արգելված վատ վերաբերմունքի այլ ձևերի հատկանիշներին, դրանք որակվել են պարզապես որպես զինծառայողների միջև բռնի հանցագործություններ: Արդյունքում չեն կիրառվել այն հատուկ իրավական երաշխիքները, որոնք նախատեսված են խոշտանգման դեպքերում անպատժելիությունը կանխելու նպատակով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում բռնության գործադրման դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ գլուխը կիրառվում է որպես զինված ուժերում բռնության գործադրման որակման ինքնաբավ և բացառիկ իրավական ռեժիմ: Թեև գործող օրենսդրությունը ուղղակիորեն չի բացառել Օրենսգրքի 450-րդ հոդվածի

[8] See, Concluding observations on the fifth periodic report of Armenia, CAT, Armenia, CAT/C/ARM/CO/5, 02 May 2025, paras. 26-27, available at https://digitallibrary.un.org/record/4084312?v=pdf; Concluding observations on the fourth periodic report of Armenia, CAT, Armenia, CAT/C/ARM/CO/4, 26 January 2017, available at https://digitallibrary.un.org/record/1306830?v=pdf

կիրառումը զինծառայողների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված արարքների առնչությամբ, խոշտանգման վերաբերյալ քրեական վարույթների բացակայությունը վկայում է, որ իրավակիրառ պրակտիկայում զինված ուժերում բռնության գործադրման դեպքում Քրեական օրենսգրքի 46-րդ գլխի դրույթները փաստացի համարվում են հատուկ նորմեր *(lex specialis)*: Հետևաբար, խոշտանգման հատկանիշներ պարունակող վարքագիծը պրակտիկայում որակվում է որպես զինծառայողների միջև բռնության գործադրում՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Արդարադատության ոլորտի մի շարք մասնագետների կարծիքով՝ զինվորական ծառայության ընթացքում կատարված բռնությամբ զուգորդված հանցագործությունները պետք է որակվեն բացառապես Քրեական օրենսգրքի 46-րդ գլխի հատուկ նորմերով (*lex specialis*), քանի որ նույն գլխում արդեն իսկ առկա են զինծառայողների միջև բռնությունը քրեականացնող հատուկ դրույթներ: Նման մոտեցման արդյունքում զինված ուժերում կատարված ֆիզիկական կամ հոգեբանական բռնության դեպքերը, անկախ դրանց ծանրությունից, գործնականում չեն դիտարկվում խոշտանգման համատեքստում:

Այս մոտեցումը կարող է խաթարել Հայաստանի կողմից Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով (այսուհետ՝ Խոշտանգումների դեմ կոնվենցիա) ստանձնած պարտավորությունների նպատակը և էությունը: *Lex specialis* սկզբունքը չի կարող արդարացում հանդիսանալ խոշտանգման դեպքերի համար նախատեսված հատուկ իրավական երաշխիքների չկիրառման համար, եթե առկա են խոշտանգում հանցակազմի հատկանիշները:

Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ թե՛ նախաքննության մարմինները, թե՛ դատարանները չեն գնահատել, թե արդյոք արարքների բնույթը, ծանրությունը, նպատակը և կատարման համատեքստը պահանջում էին այլ իրավական որակում:

Արդյունքում գործող օրենսդրական կարգավորումները բավարար կերպով չեն տարբերակում սովորական բռնարարքներն այնպիսի վարքագծից, որը նպատակաուղղված է անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուն՝ պատժելու, խտրականության ենթարկելու կամ այլ արգելված նպատակներով:

- *Գործող օրենսդրության բացը*

ՀՀ քրեական օրենսգրքի 519-րդ, 520-րդ և 521-րդ հոդվածներով քրեականացվում են ստորադասի կողմից վերադասի նկատմամբ բռնությունը, ենթակայության հարաբերությունների բացակայության պայմաններում զինծառայողների միջև բռնությունը, ինչպես նաև վերադասի կողմից ստորադասի նկատմամբ բռնությունը: Այս դրույթների հիմնական նպատակն է պաշտպանել զինվորական կարգապահությունը, ծառայողական կարգը և ենթակայության հարաբերությունները:

Սակայն դրանք չեն կարգավորում այն դեպքերը, երբ բռնությունը կիրառվում է հետևյալ նպատակներով.

- պատժելու,
- վախեցնելու/ահաբեկելու
- հարկադրելու
- նվաստացնելու կամ արժանապատվությունը վիրավորելու,
- ոչ ֆորմալ հիերարխիկ հարաբերություններ հաստատելու կամ պահպանելու,
- անձի ընկալվող կամ առկա խոցելիության հիմքով խտրական վերաբերմունք դրսևորելու,
- կամ դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու:

Դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ծանր և բարձր հանրային վտանգավորություն ունեցող հանցագործությունները ենթարկվում են նույն իրավական գնահատականի և պատժվում նույն կերպ, ինչ զգալիորեն ավելի ցածր ծանրություն ունեցող բռնության դրսևորումները: Նման մոտեցումը, սակայն, պատշաճ կերպով չի արտացոլում ոչ միայն տուժողների կրած վնասի իրական բնույթն ու ծանրությունը, այլև զինվորական ծառայությանը բնորոշ փակ, վերահսկվող և խիստ հիերարխիկ միջավայրից բխող առավել բարձր պատասխանատվությունը:

- *Հայաստանի միջազգային պարտավորությունները*

Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություններ, որոնք արգելում են խոշտանգումը և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը:

Այս պարտավորությունները պետություններից պահանջում են ոչ միայն ձեռնպահ մնալ խոշտանգումներից, այլև ներդնել արդյունավետ իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կապահովեն խոշտանգման և վատ վերաբերմունքի կանխարգելումը, արդյունավետ քննությունը, պատշաճ իրավական որակումը, քրեական հետապնդումն ու պատիժը: Միջազգային իրավունքի համաձայն՝ խոշտանգման հատկանիշներ պարունակող յուրաքանչյուր արարք պետք է թե՛ իրավական, թե՛ գործնական առումով քննի և պատժվի որպես խոշտանգում:

Միջազգային չափանիշները սահմանում են, որ պատժելու, ահաբեկելու, հարկադրելու կամ խտրականության նպատակով դիտավորությամբ պատճառված ֆիզիկական ուժեղ ցավը կամ հոգեկան ուժեղ տառապանքը պահանջում է առանձնահատուկ իրավական արձագանք, որն արտացոլում է նման վարքագծի բացառիկ ծանրությունը:

Մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից բազմիցս ընդգծվել է, որ վատ վերաբերմունքի լուրջ դեպքերի ոչ պատշաճ իրավական որակումը կարող է խաթարել քննության արդյունավետությունը և նպաստել անպատժելիությանը: Անպատժելիության

վտանգն առաջանում է հատկապես այն դեպքերում, երբ արարքը պատշաճ կերպով չի քննվում, սխալ է որակվում կամ մեղավորը չի ենթարկվում համարժեք պատժի:[9]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում այն դեպքերում, երբ ներպետական մարմինները խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի փաստերը որակել են որպես ավելի թեթև հանցագործություններ, ինչի արդյունքում կիրառվել են ավելի կարճ վաղեմության ժամկետներ և մեղավոր անձինք խուսափել են քրեական պատասխանատվությունից:[10]

Հայաստանում խոշտանգումը քրեականացվել է 2015 թվականից: Գործող Քրեական օրենսգրքում խոշտանգման սահմանումը համահունչ է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիային, այն նաև բացառում է համաներման, ներման և վաղեմության ժամկետների կիրառումը խոշտանգում հանցագործության համար: Բացի այդ, հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, խոշտանգման գործերով կիրառելի չէ նաև հաշտության ընթացակարգը: Միաժամանակ, Քրեական օրենսգրքով սահմանափակումներ չեն տարածվում համաձայնեցման և արագացված վարույթի վրա, ինչի արդյունքում նույնիսկ ծանր հանցագործություններ կատարողները կարող են օգտվել այդ ընթացակարգից, եթե դրա դեմ չեն առարկում դատախազը և տուժողը:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն հստակեցրել է, որ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները տարածվում են բոլոր այն անձանց վրա, որոնք պաշտոնապես կամ փաստացիորեն գործում են պետության անունից, նրա հանձնարարությամբ, վերահսկողության ներքո կամ պետական լիազորությունների իրականացման շրջանակներում:[11]

Հետևաբար, զինված ուժերում կատարված հանցագործությունը, որը հասնում է խոշտանգման շեմին, պետք է որակվի և քննվի որպես խոշտանգում, այլ ոչ թե որպես այլ, հատկապես առավել մեղմ պատիժ նախատեսող հանցագործություն:

Օրենսդրության և միջազգային ատյանների դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոշտանգման առկայությունը պայմանավորված է ոչ թե դրա կատարման վայրով կամ ինստիտուցիոնալ միջավայրով, այլ արարքի բնույթով, ծանրությամբ և նպատակով: Այն դեպքերում, երբ առկա են խոշտանգման հանցակազմի տարրերը, պետությունը պարտավոր է ապահովել նման վարքագծի որակումը որպես խոշտանգում՝ անկախ նրանից, թե այն կատարվել է քրեակատարողական, ոստիկանական կամ զինվորական միջավայրում:

---

[9] See, for example,Chember v. Russia, no. *7188/03*, 03 July 2008, para. 61.

[10] See, among other authorities, Pădureţ v. the Republic of Moldova, no. 33134/03, § 75, 05 January 2010; Velev v. Bulgaria, no. 43531/08, § 61, 16 April 2013; and O.R. and L.R. v. the Republic of Moldova, no. 24129/11, §§ 73-74, 30 October 2018

[11] CAT General Comment No. 2, CAT/C/GC/2, para. 15.

- *Ինչո՞ւ գործող խոշտանգման դրույթները բավարար չեն*

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ միայն Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի վրա հիմնվելը բավարար չէ խնդրի արդյունավետ լուծման համար:

Նախ, Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածը պահանջում է պաշտոնատար անձի անմիջական մասնակցություն կամ առնվազն նրա համաձայնությունը կամ թողտվությունը: Արդյունքում դրա կիրառության շրջանակից դուրս են մնում այն դեպքերը, երբ խոշտանգման բնույթ ունեցող վարքագիծը դրսևորվում է համածառայակիցների կողմից, քանի որ շարքային զինծառայողները Քրեական օրենսգրքի իմաստով պաշտոնատար անձինք չեն համարվում:

Երկրորդ, մշտադիտարկված վարույթների որոշ դեպքերում բռնությունը կատարվել է ժամկետային զինծառայողների կամ համածառայակիցների կողմից՝ ոչ ֆորմալ ենթակայության շրջանակում, առանց բավարար ապացույցների, որոնք կհաստատեին անհրաժեշտ կապը որևէ պաշտոնատար անձի հետ: Ընդ որում, գործող օրենսդրության համաձայն, ժամկետային շարքային զինծառայողները չեն կարող համարվել պաշտոնատար անձինք:

Երրորդ, իրավակիրառ պրակտիկան հետևողականորեն նախապատվությունը տալիս է արարքների որակմանը Քրեական օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված հանցակազմերով: Արդյունքում նույնիսկ այն դեպքերում, երբ անձին դիտավորությամբ պատճառվում է ֆիզիկական ուժող ցավ կամ հոգեկան տառապանք՝ պատժելու, ահաբեկելու, հարկադրելու կամ այլ արգելված նպատակներով, գործող կարգավորումները գործնականում չեն ապահովում խոշտանգման պատշաճ իրավական գնահատական և համարժեք արձագանք:

- *Ինչո՞ւ է անհրաժեշտ զինվորական ծառայությանը հատուկ քրեաիրավական կարգավորում*

Նման դրույթի ներառումը քրեական օրենսգրքում չի հանգեցնի գործող հանցակազմերի կրկնության, այլ հնարավորություն կտա պատշաճ կերպով արձագանքել զինվորական ծառայությանը բնորոշ առանձնահատուկ իրողություններին:

Մշտադիտարկված վարույթները ցույց են տալիս, որ զինված ուժերում բռնությունը հաճախ տեղի է ունենում՝

- փակ ինստիտուցիոնալ միջավայրում,
- կախվածության և ուժերի անհավասար բաշխվածության պայմաններում,
- այլ զինծառայողների ներկայությամբ,
- գերիշխանություն հաստատելու նպատակ հետապնդող կրկնվող գործողությունների միջոցով,
- հրամանատարական կազմի թողտվության կամ ոչ արդյունավետ միջամտության պայմաններում,

- այնպիսի իրավիճակներում, երբ տուժողները գործնական խոչընդոտների են բախվում բռնության մասին հայտնելիս:

Ավելին, բացի այն հանգամանքից, որ Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածը գործնականում կիրառելի չէ շարքային զինծառայողների կողմից կատարված արարքների նկատմամբ, ինչպես նաև հաշվի առնելով զինվորական ծառայության ընթացքում կատարված հանցագործությունների նկատմամբ հատուկ նորմերի *(lex specialis)* մոտեցումը, գործող Քրեական օրենսգրքի 519-521-րդ հոդվածները կարգավորում են միայն ֆիզիկական բռնության դրսևորումները՝ իրավական գնահատականից դուրս թողնելով այն վարքագիծը, որը հանգեցնում է հոգեկան տառապանքի:[12]

Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ գլուխը լրացնել նոր՝ 521.1-րդ հոդվածով, որը պատասխանատվություն կսահմանի զինվորական հարաբերությունների շրջանակում կատարվող խոշտանգմանը համարժեք արարքների համար:

Նոր հոդվածով պետք է քրեականացվի զինծառայողի կողմից դիտավորությամբ մեկ այլ զինծառայողի ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ պատժելու, ահաբեկելու, հարկադրելու, խտրականության կամ արգելված այլ նպատակներով:

1.2 Քաղաքականության փաստաթղթեր

Այսպես, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ-ի գործողությունների ծրագիրը ինչպես կյանքի իրավունքի պաշտպանության, այնպես էլ խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքի ներքո նախատեսում է նաև զինված ուժերում այս իրավունքների առավել արդյունավետ իրացումը[13]: Մասնավորապես, նախատեսված են հետևյալ գործողություններ.

- Զինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ իրավունքի իրականացումը:
- Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:

[12] Articles 519-521 use a term ‘violence’ which is defined in the Criminal Code as այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը (Art. 3, part 1 (9)).

[13] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության Ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիր:

Զուգահեռաբար, գործում է նաև ՀՀ ՊՆ կողմից ընդունված Բանակի կերպափոխման հայեցակարգը[14]: Հայեցակարգի նպատակն է ՀՀ զինված ուժերում պրոֆեսիոնալիզացման, այդ նպատակով արմատական համակարգային բարեփոխումների իրականացման հիմնական ուղենիշների սահմանումը, որոնք հիմք կհանդիսանան Զինված ուժերի կառուցվածքային ու բովանդակային կերպափոխման ու կիրառման, ղեկավարման ու կառավարման համակարգերի զարգացման, նոր սերնդի սպառազինության ու ռազմական տեխնիկայի համալրման, ազգային գիտատեխնիկայի ներուժի ստեղծման և արդյունավետ օգտագործման, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գործընթացների վերանայման, զինծառայության գրավչության, զինծառայողների կրթական, կարգապահության և սոցիալական ապահովվածության մակարդակների բարձրացման համար: Օրինակ՝ նախատեսված է ռազմական կրթության և գիտության զարգացում, զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում, առողջ և հավասարակշիռ ռազմաքաղաքական հարաբերությունների ձևավորում, մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործում և այլն:

Այս առումով առաջնային դերակատարում ունի նաև Զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը: Մասնավորապես, հարցված փորձագետներից բոլորը միանշանակ արձանագրել են, որ պետության կողմից վարվում է զինված ուժերում հարաբերությունները կարգավորելու և հանցանքները կանխելու քաղաքականություն, սակայն դա բավարար չէ և դեռևս շատ անելիքներ կան, ինչը մեծամասամբ կապվել է նաև կրթության և կրթության ոլորտի բարեփոխումների հետ: Բոլոր հարցված փորձագետները արձանագրել են, որ միջոցառումները ձևական են և ոչ արդյունավետ:

> *Քաղաքականությունը կարծես կա, ռեսուրսներ հատկացվում են, բայց շոշափելի տեսանելի արդյունքներ չկան: Քաղաքականության առումով և օրենսդրությունն է լավը, և տեսականը, բայց մենք միջին օղակներում ունենք մտածողության ու բարքերի խնդիր: Ցավոք սրտի, սա առկա է ոչ միայն բանակում, այլ ամենուր, մտածողության խնդիրը ավելի լայն տարածված է և համակարգային:*
>
> *Հարցված մասնագետ*

> *Օրինակ, բոլորը ներկայացնում են, որ իրականացվում է անձի և պաշտոնի համապատասխանելիության գնահատում, բայց իրականում դա նույնպես ֆորմալ գործընթաց է*:
>
> *Հարցված մասնագետ*

Միևնույն ժամանակ նշված ոչ մի քաղաքականության փաստաթղթով չի նախատեսվում օրենսդրորեն ամրագրել զինված ուժերում առերևույթ խոշտանգում հանդիսացող

[14] ՀՀ պաշտպանության նախարարություն, Բանակի կերպափոխման ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

բռնության դեպքերում կիրառել ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգում հանցագործության համար նախատեսված երաշխիքները, այն է՝ վաղեմության ժամկետի, ներման/համաներման կիրառման արգելք, պատժի խստություն և այլն:

Զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերը կանխելու հարցում պետության կողմից վարվող քաղաքականության մեջ առանձնակի շեշտադրվել է կրթության դերը՝ ինչպես մինչև զինված ուժեր զորակոչվելը, այնպես էլ զինծառայության ընթացքում: Խոսելով վերապատրաստումների մասին՝ նշվել է, որ դրանք կարևոր են, սակայն բավարար չեն, երբեմն վերապատրաստումները անց են կացվում խիստ ձևական:

> *Երբեմն զինվորականների համար նախատեսված վերապատրաստումներին ներկայացվում են նյութեր, որոնք ակտուալ չեն նրանց համար, կամ ծայրահեղ տեսական են, որը նրանց իրական կարիքներին չի ծառայում:*
>
> *Հարցված մասնագետ*

Որպես արդյունավետ քաղաքականության իրականացման մաս նշվել է նաև զինված ուժերում վերահսկողություն իրականացնող մեխանիզմների անհրաժեշտությունը, որը ներկայումս բացակայում է, մինչդեռ նախկինում գործել են:

Մյուս կողմից՝ իրավասու մարմինների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ կատարված հանցանքների, տարբեր հիմքերով կարճված վարույթների վիճակագրություն չի վարվում: Նշվածը թույլ չի տալիս համապարփակ խոր վերլուծություն անել բռնության դրդապատճառների, կիրառվող միջոցների՝ կանխարգելիչ ազդեցության և այս ոլորտում քրեական քաղաքականության արդյունավետության մասին:

Վիճակագրական տվյալների հավաքագրումը, դրանց հիման վրա քաղաքականության մշակումը, իսկ խոշտանգման դեպքում՝ արարքի ճիշտ որակումը այն առաջնային քայլերից են, որ ՀՀ քննչական կոմիտեն և դատախազությունը պետք է օր առաջ ապահովեն:

II. ՄԻԵԴ մոտեցումները զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ

Խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքը միջազգային իրավունքի հիմնարար և հանրաճանաչ նորմ է, և այդ արգելքից որևէ վերապահում երբևէ անթույլատրելի է: Խոշտանգման արգելքը հստակ ամրագրված է նաև ներպետական իրավունքում: Ընդ որում, պետությունը պարտավոր է ոչ միայն զերծ մնալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկելուց, այլ պարտավոր է արդյունավետ քննություն իրականացնի ցանկացած նամն դեպքով:

Այսպես, Եվրոպական դատարանը բազմիցս վերահաստատել է, որ պետության պարտականությունների մեջ մտնում է նաև ապահովել, որ զինվորական ծառայությունը

իրականացվի անձի իրավունքներն ու արժանապատվությունը հարգող միջավայրում, նմանապես, որ զինվորական վերապատրաստումների ժամանակ կիրառվող մեթոդները անձին չեն ենթարկում տանջանքների և զրկանքների՝ զինվորական կարգապահության ոչ համահունչ: Նման մոտեցումը, ըստ ՄԻԵԴ-ի, բխում է խոշտանգման և վատ վերաբերմունքի համընդհանուր ճանաչում գտած բացարձակ արգելքից[15]: Օգտագործելով այս մոտեցումը՝ ՄԻԵԴ-ը, օրինակ, խախտում է գտել այն դեպքում, երբ զինծառայողը ծեծի է ենթարկվել իր պարտականությունները կատարելու ժամանակ քնով անցնելու պատճառով, որակել է այն որպես վատ վերաբերմունք, որը կապ չի ունեցել զինվորական կարգապահության հետ[16]:

Պետությունը պարտավոր է ապահովել, որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ անձի առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պահպանված են՝ տրամադրելով նրան համապատասխան բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլև մարդկային տարրի պատճառով, երբ պետությունը քաղաքացիներին զորակոչում է զինվորական ծառայության[17]:

Այս համատեքստում, ՄԻԵԴ-ը մեկ այլ գործով խախտում ճանաչել է այն դեպքում, երբ ծնկի հետ խնդիրներ ունեցող զինծառայողը ստիպված է եղել 350 անգամ կքանստել զորանոցի մաքրությունը ոչ բավարար կատարելու համար[18]: ՄԻԵԴ-ը գտել է, որ չնայած ծառայության ընթացքում հնարավոր է ծանր ֆիզիկական վարժություններ կատարել, սակայն այն չպետք է անձի արժանապատվությունը նվաստացնի և առողջությանը վնաս պատճառի, իսկ տվյալ պարագայում ծանր ֆիզիկական վարժությունները հարկադրվել են և կիրառվել որպես պատիժ, որի մասին տեղեկացված է եղել հրամանատարական կազմը:

Դատարանի կողմից վատ վերաբերմունք և խոշտանգում է որակվել նաև այն դեպքը, երբ զինծառայողը, ով փախուստի է դիմել, հետագայում բռնվել է զինվորական ղեկավարության կողմից և ներկայացվել զորամաս, ինչից հետո նրան մերկացրել և կանգնեցրել են զորքի առջև, հետո կանգնեցրել պատի մոտ՝ զենքը պահելով գլխին և սպառնացել, որ կսպանեն: Այն բանից հետո, երբ վերջինս խնդրել է իրեն ներել, նրան տեղափոխել են զորամաս, սակայն վատ վերաբերմունքը շարունակվել է, քանի որ անձնակազմը վերջինիս ծեծել է, մեկ այլ զինծառայող պարանը կապել վզից և քարշ տվել զորքի առաջ և սպառնացել, որ զորացրվելուց հետո կենթարկվի սեռական բռնության:

[15] Kılınç and Others v. Turkey, no. 40145/98, 7 June 2005
[16] Styazhikova V Russia, no 14791/04, 14 January 2020
[17] Chember v.Russia, no 7188/03, 03 July 2008
[18] Նույն տեղում

ՄԻԵԴ-ը հաստատված է համարել ոչ միայն խոշտանգման հանգամանքը, այլ զինծառայողին խոշտանգման դեպքով պետության կողմից արդյունավետ քննության բացակայությունը, ինչը ունակ է հանգեցնել անպատժելիության և նոր խախտումներին[19]:

Վատ վերաբերմունքի դրսևորումներ զինծառայության ընթացքում արձանագրվել են նաև Հայաստանի դեմ կայացված մի շարք գործերով, որոնցով հաստատվել է համանման պրակտիկայի առկայություն նաև ՀՀ զինված ուժերում: Օրինակ, ***Մուրադյանն ընդդեմ Հայաստանի*** գործով դիմումատուի ներկայացուցիչները ներկայացրել են, որ զինծառայող Մուրադյանը մահացու հարված է ստացել փայծաղի շրջանում, առկա են եղել հին ու նոր արյունազեղումներ, ինչը վկայում է այն մասին, որ նա սպաների կողմից տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել է վատ վերաբերմունքի: Իշխանությունները, սակայն, այս հանգամանքների արդյունավետ քննություն չեն իրականացրել: Հակառակը, արվել է ամեն ինչ իրական պատճառները չբացահայտելու համար: Հանցագործություն կատարած անձանց հովանավորելու նպատակով նրանք ներկայացրել են մահացու վնասվածքի վերաբերյալ կեղծ տեղեկություններ, մասնավորապես այն մասին, որ վնասվածքն առաջացել է պատահաբար հասցված թեթև հարվածի հետևանքով, ինչպես նաև կիրառել են քննչական մի ամբողջ մեխանիզմ, ներառյալ դատաբժշկական փորձաքննությունը, տեղեկությունները ճշմարտանման դարձնելու համար՝ անտեսելով առկա բազմաթիվ հերքող ապացույցները: Դիմումատուն պնդել է, որ քննության արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ թե կատարված քննչական գործողությունների թվով, այլ այդ գործողությունների որակով: ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ պետության կողմից բավարար և համոզիչ բացատրություն չի ներկայացվել զինծառայողի մահվան վերաբերյալ, իսկ ինքնասպանության հանգամանքը որևէ փաստով չի հաստատվել: Հաստատվել է նաև, որ պետությունը թերացել է զինծառայողի կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի ապահովման հարցում, քանզի առկա են տվյալներ այն մասին, որ Ս. Մուրադյանը ենթարկվել է ճնշումների և չարաշահումների զինված ուժերի անձնակազմի կողմից, առողջական խնդիրները անտեսվել են և պատշաճ օգնություն չի ստացել[20]:

Միրզոյանն ընդդեմ Հայաստանի գործով դատարանի առջև դիմումատուների կողմից բարձրացվել է խնդիր այն մասին, որ զորամասի սպայի կողմից տևական ժամանակ դրսևորվել է ագրեսիվ վարքագիծ, իր ենթակաների նկատմամբ իրականացվել է բռնություն և զինվորական կարգապահությունը չի պահպանվել, սակայն ղեկավար անձնակազմի կողմից այս խնդիրները լուրջ չեն ընդունվել, իսկ հետագայում դրանց վերաբերյալ արդյունավետ քննություն չի իրականացվել: Ըստ այդմ, եզրահանգվել է, որ պետությունը չի կանխել զինծառայողի կյանքի և վատ վերաբերմունքի խախտումները: ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ գործով առկա փաստերը թույլ են տալիս արձանագրել զինծառայողի կյանքի իրավունքի խախտումը ընթացակարգային հիմքով, քանզի չի իրականացվել արդյունավետ քննություն ոչ մահվան, ոչ բարձրացված վատ վերաբերմունքի

[19] Lyalyakin v. Russia, no 31305/09, 12 March 2015
[20] Մուրադյանն ընդդեմ Հայաստանի, գործ համար 11275/07, 24 նոյեմբերի 2016

դրսևորումների առնչությամբ, ավելին՝ զոհվածի ընտանիքը գործի քննությանը չի ներգրավվել[21]:

Վարյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ը ներպետական մակարդակում իրականացված քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով (ինչպես նաև ծառայողական քննության եզրահանգումներով) հաստատվել է զինծառայողին իր վերադասների և համածառայակիցների կողմից դաժանաբար նվաստացնելու, ծաղրուծանակի ենթարկելու և ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունք ցուցաբերելու, այդ թվում՝ բռնություն գործադրելու և ֆիզիկական շահագործման ենթարկելու կրկնվող դեպքերի մի ամբողջ շղթա, ինչը ճանաչվել է որպես նրա կողմից ինքնասպանություն գործելու պատճառ: Մասնավորապես ավագ լեյտենանտ Հ.Հ.-ն՝ Տ. Վարյանի վերադասը, հայհոյանքներ է հնչեցրել նրա հասցեին և հարվածել է նրան մի քանի անգամ այնպիսի անհիմն պատրվակներով, ինչպիսիք են, օրինակ՝ Հ.Հ.-ի գլխարկը անմիջապես չբերելը կամ մեկ այլ դեպքում՝ նրա գոտին չտալը: Ավագ լեյտենանտ Հ.Հ.-ն նաև նվաստացրել է Տ. Վարյանին, ի թիվս այլնի, ստիպելով նրան կատարել լրացուցիչ աշխատանք, ինչպես, օրինակ՝ զուգարանի համար փոս փորելը, և նրան վրդովվեցնելու նպատակով նրա սեռական կյանքի վերաբերյալ անպարկեշտ կատակներ անելով՝ Տ. Վարյանի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերել նաև կրտսեր սերժանտ Գ.Մ.-ն: Այս ամենի համատեքստում ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ տվյալ դեպքում իշխանության մարմինները չեն կատարել իրենց հսկողության ներքո գտնվելու ընթացքում Տ. Վարյանի կյանքի իրավունքը պաշտպանելու իրենց դրական պարտավորությունը[22]:

Վարյանն ընդդեմ Հայաստանի գործը կարևոր նշանակություն ունի, քանի որ ՄԻԵԴ-ը վատ վերաբերմունքի գնահատման շրջանակում հաշվի է առել ոչ միայն ֆիզիկական բռնությունը, այլև շարունակական նվաստացումը, հոգեբանական ճնշումը և արժանապատվությունը վիրավորող վարքագիծը: Դատարանը փաստացի ընդունել է, որ նման միջավայրն ինքնին կարող է ստեղծել զինծառայողի կյանքի և հոգեկան անձեռնմխելիության համար վտանգավոր պայմաններ:

Հայաստանի դեմ կայացված մի շարք վճիռներ վկայում են, որ զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերը ՄԻԵԴ-ի կողմից չեն դիտարկվել որպես մեկուսացված միջադեպեր, այլ արձանագրվել են համակարգային բնույթի խնդիրներ՝ կապված հրամանատարական վերահսկողության անբավարարության, բռնության հանդեպ հանդուրժողականության և արդյունավետ քննության բացակայության հետ:

ՄԻԵԴ որոշումներով հստակեցվել է նաև խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև տարբերությունները: Այսպես, խոշտանգումը միայն այն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն է, որը կիրառվում է դիտավորությամբ և պատճառում է լուրջ և դաժան տառապանքներ: Խոշտանգմանը

[21] Միրզոյանն ընդդեմ Հայաստանի, գործի համար 57129/10, 23 մայիսի 2019
[22] Վարյանն ընդդեմ Հայաստանի, գործի համար 48998/14, 04 հունիսի 2024

հատուկ է նաև նպատակայնության տարրը, այն կիրառվում է տեղեկություններ կորզելու, պատժելու կամ խտրականության ենթարկելու նպատակով:

Պետք է նաև նշել, որ համանման գործողությունները մի դեպքում կարող են որակվել որպես «խոշտանգում», մյուս դեպքում՝ որպես «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք»: Սա նշանակում է, որ դրանց միջև սահմանը հստակ չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները[23]:

Գնահատման համար Դատարանը հաշվի է առնում կիրառված բռնության ուժգնությունը, դրա տևողությունը, նպատակը, զոհի ֆիզիկական և հոգեբանական վիճակը, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչների վարքագիծը: Զինված ուժերի համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում իշխանության և ենթակայության հարաբերությունների գործոնը, որը կարող է էապես խորացնել պատճառված տառապանքի աստիճանը:

Ինչպես տեսնում ենք, ՄԻԵԴ-ը նաև հարցին մոտենում է երկու տեսանկյունից՝ նյութական իրավունքի խախտումն է գնահատում (պետությունը պետք է կանխի բռնությունը, ապահովի անվտանգ ծառայություն, պաշտպանի արժանապատվությունը), ինչպես նաև ընթացակարգային (պետությունը պետք է իրականացվի արդյունավետ, անկախ, արագ, բազմակողմանի քննություն, և տուժողի շահերը պետք է երաշխավորվեն):

Վերոնշյալ գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԴ-ը զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերի գնահատման հարցում որդեգրել է պետության դրական պարտավորությունների լայն մեկնաբանություն: Դատարանը կարևորում է ոչ միայն անմիջական բռնության կանխումը, այլև հրամանատարական վերահսկողության արդյունավետությունը, առողջ և անվտանգ ծառայողական միջավայրի ապահովումը, ինչպես նաև վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների արդյունավետ քննությունը:

Ներպետական մակարդակում բռնության փաստերով քննության արդյունավետությունը, և պետության պոզիտիվ պարտավորության իրացման գնահատումը պետք է իրականացվեն վերը նշված չափանիշների հիման վրա:

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՄԲ ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

3.1 Ընդհանուր տվյալներ

Մշտադիտարկման շրջանակներում datalex.am դատական տեղեկատվական համակարգի միջոցով դիտարկվել են ՀՀ քրեական օրենսգրքի 519-524-րդ հոդվածների /նախկին Քրեական օրենսգրքի 358, 358.1, 359-360, 360.1-360.2-ի/ հիման վրա հարուցված թվով **51** դատական գործեր, որոնցով արդեն վճիռ է կայացվել առաջին ատյանի դատարանի

[23] Aksoy v. Turkey, no 21987/93, 18 december 1996, Petrosyan v Azerbaijan, no 32427/16, 04 November 2021

կողմից: Այս գործերը վերաբերել են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններին:

Հարկ է նշել, որ դատալեքսում հասանելի գործերի թիվը չի արտացոլում ՀՀ զինվորական դատախազությունից ստացված պատկերը, հատկապես ինքնասպանության հասցնելու գործերով: Ենթադրաբար, գործերից մի մասը, հատկապես լուրջ մեղադրանքով, անցկացվում են դռնփակ: Իսկ ներկայիս մոտեցման համաձայն՝ անգամ եթե մեկ նիստ անց է կացվել դռնփակ, ապա դատալեքսում գործի ողջ տվյալների հասանելիությունը փակվում է, այդ թվում՝ մեղադրանքի էությունը և վճռի եզրափակիչ մասը: Նման պրակտիկայի մասին նշել են նաև հարցված մասնագետները:

Ուսումնասիրված գործերը դատարան են մուտքագրվել, քննվել և դրանցով վճիռ է կայացվել վերջին հինգ տարիների ընթացքում՝ 2020 թվականից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

➢ *գործը քննող դատարանը*

Ուսումնասիրված քրեական գործերի գերակշիռ մասը՝ 57%-ը քննվել են Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Ըստ մարզերի և մարզային դատարանների՝ ուսումնասիրված քրեական գործերը ունեն հետևյալ թվային պատկերը՝

- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ 29 գործ.
- Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ 7 գործ.
- Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ 6 գործ.
- Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ 5 գործ.
- Արարատի և Վայոց Ձորի ընդհանուր իրավասության դատարան՝ 2 գործ.
- Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ 2 գործ:

Գծապատկեր 1. Գործը քննող դատարանը.



Ինչ վերաբերում է գործը քննած դատավորներին, ապա առավել մեծ թվով գործեր քննվել են դատավոր Բորիս Բախշիյանի /8 գործ/, Հրաչյա Մեխակյանի /7 գործ/, Ռիմա Առաքելյանի /5 գործ/ և Դավիթ Սարգսյանի /4 գործ/ կողմից:

- *Վերագրվող դեպքը տեղի ունենալու տարին*

Դիտարկված գործերով առավել մեծ թվով մեղսագրվող արարքներ տեղի են ունեցել 2019 և 2023-2024 թվականներին:

Գծապատկեր 2. Դեպքը տեղի ունենալու տարին.



➢ *Գործով նախաքննության տևողությունը և քննության առանձնահատկությունները.*

Դիտարկված գործերով նախաքննությունը հիմնականում տևել է մինչև 6 ամիս՝ 32 գործով (63%), 5 գործով՝ 6 ամսից մինչև 1 տարի, 1-ից 2 տարի՝ 9 գործով, իսկ մնացած գործերով՝ 2 տարուց ավելի, բացառությամբ երկու գործի, որոնց մասին տվյալներ առկա չեն: Նախաքննության ամենաերկար արձանագրված ժամկետը **4 տարի 2 ամիս**[24], իսկ ամենակարճ տևած նախաքննությունը՝ **9 օր**[25]: Վերջին գործով պարտադիր ժամկետային զինծառայողին մեղադրանք է առաջադրվել մեկ այլ ժամկետային զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելու համար, որի արդյունքում պատճառվել է առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

> *Ամենաերկար քննված գործով արձանագրվել է նախաքննության մարմնի անգործություն, որի արդյունքում քննիչը հեռացվել է վարույթից՝ կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով: Գործով մեղադրյալը զորամասի հրամանատար, գնդապետ էր, իսկ տուժողը՝ պարտադիր ժամկետային ծառայող: Մեղադրանքի համաձայն՝ մեղադրյալը ֆիզիկական պատրաստությանը չմասնակցելու շուրջ առաջացած խռսակցության ընթացքում վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադաս պարտադիր*

[24] ՍԴ3/0018/01/25, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065631735
[25] ՍԴ3/0006/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594052

ժամկետային զինծառայողի հետ և բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ՝ բռունցքով հարվածներ է հասցրել նրա դեմքին և քաշքշել: Այս գործով մեղադրյալի միջնորդությամբ քրեական հետապնդում իրականացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով գործը կարճվել է: Դատարանը վարույթ իրականացնող մարմնի անգործությունը գնահատել է ոչ միայն որպես օրենսդրական պահանջների խախտում, այլև՝ արդարադատությունից խուսափելու օժանդակություն[26]:

Ըստ մասնագետների՝ խնդրահարույց է նաև այս դեպքերում նախաքննություն իրականացնելը, քանի որ տարածված ընկալումների պատճառով հաճախ ծառայակից վկաները հաճախ խուսափում են ցուցմունք տալուց՝ ծառայողական միջավայրում բացասական վերաբերմունքի արժանանալու մտավախությամբ պայմանավորված:

Դատավճռում արտացոլված վկայությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում վկաների նկատմամբ գործադրվում է ազդեցություն՝ դեպքի հանգամանքները թաքցնելու կամ խեղաթյուրելու նպատակով, որպեսզի մեղավորները խուսափեն պատասխանատվությունից:

➢ *Դատարանում գործի քննության տևողությունը*

Գործը ստանալուց հետո գործի քննության և վճիռ կայացնելու ժամկետները եղել են տարբեր, սակայն որպես ընդհանուր կանոն այս խումբ գործերով նկատվել է առավել արագ գործի ավարտ՝ մեծամասամբ պայմանավորված արագացված կարգի կիրառմամբ կամ հաշտության կնքմամբ: 27 (53%) գործով քննությունը տևել է **մինչև 5 ամիս**, 12 (24%) գործով՝ 6 ամսից մինչև մեկ տարի, ևս 12 (24%) գործով՝ մեկ տարուց ավելի: Նվազագույն տևողությամբ գործի քննությունը եղել է **9 օր**, իսկ առավել երկար քննված գործով՝ շուրջ **5 տարի 8 ամիս**:

Առավել կարճ տևած դատաքննությամբ գործով մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մեկ այլ պարտադիր ժամկետային զինծառայողի հետ զրուցելու ժամանակ, վերջինիս կողմից իրեն ձեռքերով շարժումներ (ժեստեր) կատարելով խոսելու համար դիտողություն կատարելու պատճառով, ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել շարքային զինծառայողի մարմնի տարբեր մասերին[27]*:*

Որոշ գործերով դատարանում քննության տևողության վրա ազդել է դատավորի փոփոխությունը, որը տեղի է ունեցել դատավորի գործուղման ժամկետի ավարտի, լիազորությունների դադարեցման կամ այլ դատարան տեղափոխվելու պատճառով:

---

[26] Հարկ է նշել, որ Վերաքննիչ քրեական դատարանը դատախազի բողոքի հիման վրա բեկանել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու մասին որոշումը և վարույթը փոխանցել նույն դատարան նոր քննության: ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598

[27] Տե՛ս ԳԴ3/0062/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228674558: *Այս գործով կիրառվել է արագացված վարույթ, մեղադրյալը դատապարտվել է ազատազրման 2 ամիս ժամկետով, բայց նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով*

Առավել երկար տևողությամբ քննված գործով փոխվել է հինգ դատավոր, գործի քննությունը սկսվել է նորովի, արդյունքում՝ ինքնասպանությամբ ավարտված բռնություն գործադրելու մեջ մեղադրվող երեք մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով[28]:

Հատկանշական է, որ այս գործով տուժողը կատարել է ինքնասպանություն, սակայն նման մեղադրանք դատարան ուղարկված մեղադրական եզրակացությամբ ներառված չի եղել: Ավելին՝ դատարանում գործի քննության ընթացքում փոխվել է քրեական օրենսգիրքը, և մինչև 21 տարեկան մեղադրյալների պարագայում նախատեսվել է վաղեմության ժամկետի հաշվարկման ավելի բարենպաստ նորմ: Դատավորների բազմաթիվ փոփոխությունների արդյունքում գործի քննությունը չի իրականացվել ողջամիտ ժամկետում, իսկ արարքի որակումը և այդ ընթացքում քրեական օրենսգրքի փոփոխությունը հանգեցրել են քրեական պատասխանատվության բացառման:

Նշված պատկերը ցույց է տալիս, որ անգամ այն պայմաններում, երբ քննարկվող հանցանքների դեպքում հիմնականում կիրառվում է արագացված վարույթ կամ հաշտություն, այնուամենայնիվ, նախաքննությունը և դատարանում գործի քննությունը տևում են մեկ տարուց ավելի, իսկ որոշ դեպքերում՝ շատ ավելի երկար: Այսինքն՝ անկախ մեղադրանքի ծանրությունից՝ ծանրաբեռնվում է դատաիրավական համակարգը, մյուս կողմից՝ ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, որոշ հանգամանքներ մնում են խորությամբ չբացահայտված:

3.2 Տվյալներ քրեական գործերով ներգրավված մեղադրյալների վերաբերյալ

Ուսումնասիրված գործերի մեծամասնության պարագայում քրեական գործով ներգրավված է եղել մեկ մեղադրյալ: Մասնավորապես՝

- 30 գործով՝ 1 մեղադրյալ.
- 15 գործով՝ 2 մեղադրյալ.
- 5 գործով՝ 3 մեղադրյալ.
- 1 գործով՝ 6 մեղադրյալ:

Գծապատկեր 3. Գործով ներգրավված մեղադրյալների թիվը.

[28] ՍԴ1/0001/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065593922 *Վերաքննիչ քրեական դատարանը դատախազի բողոքը մերժել է, և Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը թողել է անփոփոխ*



Թեև գործերով հիմնականում մեկ մեղադրյալ է ներգրավված, այնուամենայնիվ, պետք է նշել, որ նշվածը լիարժեքորեն չի արտացոլում իրական պատկերը: Որոշ դեպքերում ի սկզբանե գործով ներգրավված են եղել մեկից ավելի մեղադրյալներ, սակայն նրանց նկատմամբ քրեական հետապնդումը տարբեր հիմքերով դադարեցվել է նախաքննության փուլում, հիմնականում՝ հաշտվելու կամ վերագրվող արարքը կատարած չլինելու հիմքով:

Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ գործի նյութերից հասկանալի չէ, թե ինչ հիմքերով որոշ զինծառայողների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ չի նախաձեռնվել:

> *Գործերից մեկով մեղադրյալին՝ ժամկետային զինծառայող Հ.Մ.-ին դատարան հասած գործով մեղսագրվում է միայն ռազմական զինամթերքի վատնում, իսկ նախաքննության փուլում մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա գումարտակի մասնաշենքում նույն գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Ա.Մ.-ի հետ գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գ.Փ.-ի դիմադրությունը հաղթահարելու նպատակով օժանդակել է մեկ այլ շարքային Գ.Փ.-ի գործողություններին՝ բռնել է տուժողի ձեռքերը, իսկ Գ.Փ.-ն զինվորական սրբիչով հարվածել է տուժողի դեմքին: Մեկ այլ օր մեղադրյալը տուժողին հրավիրել է դիվիզիոնի մարտկոցի հրամանատարի սենյակ, որտեղ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հայհոյել, ապա խմբով՝ համածառայողներ, նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Հ.Բ.-ի և ժամկետային զինծառայող, շարքային Տ.Ղ.-ի հետ ծեծի է ենթարկել տուժողին՝ ձեռքերով հարվածներ է հասցրել վերջինիս գլխի շրջանին: Նշված անձինք նախ ներգրավվել են որպես մեղադրյալ, իսկ այնուհետև քննիչի կողմից որոշումներ են կայացվել Տ.Ղ.-ի, Հ.Բ.-ի, Գ.Փ.-ի և գործով մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով: Արդյունքում Հ.Մ.-ն մեղավոր է ճանաչել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով,*

նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով[29]*:*

Ըստ հարցված մասնագետների՝ առաջին հայացքից նման խումբ գործերով կա թվային աճ, ինչի պատճառն այն է, որ գործող քրեական օրենսգիրքը պահանջում է անգամ չնչին գործով վարույթ հարուցել, եթե նույնիսկ քերծվածք կա, փոքր վնասվածք, ապա պետք է վարույթ հարուցվի: Հետագայում այդ գործերից շատերը կարճվում են, բայց հարուցված վարույթները այս գործերի իրական պատկերը ցույց չեն տալիս: Նախնական փուլում դեռևս գործը կարող է կարճվել, ինչի պատճառները տարբեր են, օրինակ՝ դեպքը չի հաստատվում և հանցագործության տարրեր չեն բացահայտվում, կամ մեղադրյալն ու տուժողը հասնում են հաշտության: Պնդվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պարզ է դառնում, որ հաշտությունը իրական չէ, գործը շարունակում են:

ՀՀ դատախազության վիճակագրությունը փաստում է, որ ընդհանուր առմամբ պահպանվում է նշված հանցատեսակների կատարման տարեկան դինամիկան:

2025թ.-ին ՀՀ զինվորական դատախազության կողմից արձանագրվել է զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 516-524 հոդվածներ)՝ 351 դեպք, 2024 թ.-ին՝ 317, 2023 թ.-ին՝ 350, 2022 թ.-ն՝ 348, 2021 թվականին՝ 270 (2003թ. Քրեական օրենսգրքի 356-360 հոդվածները), իսկ 2020թ.՝ 306 դեպք[30]:

Գծապատկեր 4. 2020-2025թթ. զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ.



- *տարիք*

Դիտարկված քրեական գործերով ներգրավված անձինք պատկանել են տարբեր տարիքային խմբերի: Այսպես, վերագրվող հանցագործությունը կատարելու պահին 81

[29] ՏԴ/0002/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=32369622321760590
[30] Տե՛ս ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումները, հասանելի են https://www.prosecutor.am/dynamicWebPages/report

մեղադրյալներից 50-ը (62%) եղել են 18-20 տարեկան, 17-ը (21%)՝ 21-ից 30, 9-ը (11%)՝ 31-ից 40, 2-ը՝ 41-ից 47 տարեկան, իսկ 3 դեպքում տվյալներն առկա չեն:

Գծապատկեր 5. Մեղադրյալների տարիքը հանցանքը կատարելու պահին.



Այս առումով հարցված մասնագետները նշել են, որ հաճախակի՝ հատկապես համածառայակիցների միջև բռնությունը տեղի է ունենում նոր միջավայրում ադապտացիայի և մինչև զորակոչվելը վարքագծի առանձնահատկությունները զորամաս տեղափոխելու արդյունքում:

> *«… մտնում են նոր միջավայր, իրար չեն ճանաչում, ադապտացիայի խնդիր կա, և հաճախ են վեճեր լինում: Նոր զորակոչը բերում է նոր մարդիկ ու նոր բարքեր: Այս առնչությամբ ՁՈՒ գերխնդիրն է, որ սպայական կազմը կանխի նման դեպքերը և կանոնադրային հարաբերությունները կարգավորվեն, քանի որ փողոցային բարքերը գալիս են բանակ»*:
>
> Հարցված մասնագետ

Հարցված փորձագետների հետ համակարծիք է նաև դատախազությունը: Ըստ դատախազության՝ դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառների ու պայմանների թվում շարունակում է էական տեղ զբաղեցնել զինծառայողների վարքագիծն ու փոխհարաբերությունները կանոնակարգող նորմերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը, որն անձանց մոտ ձևավորված լինելով դեռևս նախքան զորակոչվելը, զորակոչվելուց հետո նման վարքագծի նկատմամբ անհանդուրժողական մոտեցում չցուցաբերելու պայմաններում շարունակում է ամրապնդվել ու զարգանալ[31]:

[31] ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2022թ. հաղորդում, էջ 80, հասանելի է https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf

- *կարգավիճակ*

Դիտարկված գործերով մեղադրյալները հիմնականում եղել են պարտադիր ժամկետային զինծառայողներ, որոնց վերագրվել է կամ համածառայակիցների, կամ կոչման բերումով նրանց ստորադասների նկատմամբ բռնություն կատարելը և/կամ վիրավորանք հասցնելը: Այդպես, 81 մեղադրյալներից 55-ը (68%) եղել են ժամկետային, իսկ 24-ը (30%)՝ պայմանագրային զինծառայողներ: Երկու մեղադրյալի դեպքում դատալեքսում առկա տվյալներից կարգավիճակը պարզ չէր:

Գծապատկեր 6. Մեղադրյալների կարգավիճակը զինված ուժերում.



Պայմանագրային զինծառայողներից ամենաբարձր կոչումով մեղադրյալը եղել է գնդապետ: Ըստ գործով վճռի, քննիչը դիտավորությամբ դատավարական քայլեր չի ձեռնարկել, արդյունքում առաջին ատյանի դատարանը քրեական հետապնդումը դադարեցրել է ժամկետը լրանալու հիմքով: Հաշվի առնելով մեղադրյալի բարձր պաշտոնը և կոչումը՝ այս գործով իրավասու մարմնի մոտեցումը լրջագույն մտահոգությունների տեղ է տալիս, հատկապես վերադասի կողմից ստորադասի նկատմամբ բռնություն գործադրելու հանդեպ անհանդուրժողակության և պատժի անխուսափելիության ապահովման առումով[32]:

Դատալեքսում առկա տվյալներից հնարավոր չէ ստանալ ամբողջական պատկերն առ այն, թե արդյո՞ք պայմանագրային զինծառայող մեղադրյալները շարունակել են ծառայել ՀՀ զինված ուժերում դատապարտվելուց հետո, թե ոչ:

- *տուժողի և մեղադրյալի միջև պաշտոնական կապը*

Ելնելով ուսումնասիրության հիմքում ընկած խախտումների բնույթից և քրեական օրենսգրքի հոդվածներից՝ առանձնակի կարևորվել է քրեական գործերով ներգրավված մեղադրյալների և տուժողների հարաբերությունների բնույթն ու կապը: Ըստ այդմ, պարզվել է, որ մեղադրյալներից 32-ի (40%) դեպքում խախտումները իրականացվել են վերադասության հարաբերությունների պայմաններում, այսինքն՝ տուժողը հանդիսացել է

[32] ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598

ստորադաս (ենթակա), 17 (21%) դեպքում՝ վերադաս, 28 դեպքում (35%)՝ համածառայակիցներ, որոնց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունները բացակայում են, իսկ 4 դեպքում մի քանի տուժող է եղել, որոնց թվում եղել են ինչպես ստորադաս կամ վերադաս, այնպես էլ համածառայակիցներ (ենթակայության հարաբերությունների բացակայությամբ):

Գծապատկեր 7. Տուժողի կարգավիճակը մեղադրյալի հանդեպ.



Հարկ է նշել նաև, որ ոչ բոլոր այն դեպքերում, երբ գործով արձանագրվել է փոխադարձ ծեծկռտուք, մեղադրյալը նույն գործով ներգրավվել է նաև որպես տուժող կամ անգամ եթե ներգրավվել է, դրա մասին որևէ մատնանշում դատալեքսում առկա չէ: Այս առումով պրակտիկան հակասական է[33]:

- *Նախկին դատվածության առկայություն*

Դիտարկված գործերով մեղադրյալներից միայն 5-ն են ունեցել նախկինում դատվածություն, որոնցից մի դեպքում՝ մարված:

Դատվածություն ունեցող մեղադրյալներից ոմանք դատապարտվել են զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված այլ հանցագործության համար[34]: Այլ դեպքերում դատվածությունը եղել է զինծառայության հետ չկապված արարքի համար, օրինակ՝ թմրամիջոց ձեռք բերելու ու պահելու[35]:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ որոշ մեղադրյալների դեպքում մինչև դիտարկված գործով դատարապարտվելն այլ գործով կայացվել է մեղադրական վճիռ: Նման դեպքում դատարանը չի համարել, որ նախկինում դատված է մեղադրյալը, քանի որ այդ գործոնը գնահատել է վերագրվող արարքը կատարելու պահին դատվածություն ունենալու կամ չունենալու տեսանկյունից:

Երկու գործով մեղադրողը առարկել է առաջին անգամ դատված լինելու հանգամանքը գնահատելու մոտեցմանը:

[33] Տե՛ս, օրինակ, ՍԴ3/0019/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594297
[34] Տե՛ս, օրինակ՝ ԵԴ1/2924/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=48976645947682736
[35] ԱՐԴ/0359/01/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786240576

Գործերից մեկով մեղադրյալը միջնորդել է դադարեցնել հետապնդումը, իսկ վարույթը կարճել տուժողի հետ հաշտվելու հիմքով: Մեղադրողն առարկել է՝ նշելով, որ մեղադրյալի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ և նման պայմաններում վերջինիս նկատմամբ կիրառելի չէ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու օրենսդրական նորմը: Ի պատասխան, դատարանը նշել է, որ հանցանքը կատարելու պահի դրությամբ մեղադրյալը համարվել է առաջին անգամ հանցանք կատարած անձ, քանի որ սույն քրեական վարույթով հանցանքը (արարքը) կատարելու պահին վերջինս չի ունեցել դատվածություն: Դատարանն ընդգծել է, որ հանցանք կատարելու ժամանակ է համարվում հենց արարքը կատարելու պահը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում նշվում է առաջին անգամ հանցանք կատարել հասկացությունը, ինչը ենթադրում է, որ առաջին անգամը վերաբերվում է հանցանքին, իսկ հանցանքի կատարման ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը, և օրենսդիրը որպես եզակետային հասկացություն օգտագործում է հանցանքը:

Այս հարցով դատախազը վերաքննիչ բողոք է բերել՝ վիճարկելով առաջին ատյանի դատարանի մեկնաբանությունը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը իրավացիորեն փաստել է, որ Ս.Բ.-ն իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարել է 2024 թվականի հունվարի 26-ին (մյուս արարքի համար դատապարտվել է ավելի ուշ ամսաթվի), ուստիև հանցանքը կատարելու պահի դրությամբ համարվել է առաջին անգամ հանցանք կատարած անձ, քանի որ այդ պահի դրությամբ չի եղել նախկինում հանցանք կատարած, քրեական պատասխանատվությունից ազատված կամ դատապարտված[36]:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ մեղադրյալներից ոմանք թեև դատվածություն չեն ունեցել, սակայն ունեցել են օրենքի հետ խնդիրներ, այդ թվում՝ ծառայության ընթացքում բռնության գործադրմամբ արարքներ կատարելու համար: Նշված դեպքերում անձինք պատասխանատվության չեն ենթարկվել դեռևս նախաքննության փուլում տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Գործերից մեկով մեղադրյալը մեղադրվել է մեկ այլ զինծառայողի՝ Հ.Պ.-ի կողմից իր և այլ զինծառայողի հասցեին սեռական բնույթի հայհոյանք տալու առիթով 2-3 անգամ բռունցքներով հարվածներ հասցնելու եղանակով բռնություն գործադրելու մեջ: Նախաքննության փուլում նույն մեղադրյալին վերագրվել է նաև մեկ այլ զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը, սակայն այդ դրվագով 29.02.2024թ. վարույթը կարճվել է՝ հաշտության հիմքով: Այս հիմքով էլ հենց մեղադրողն առարկեց արդեն դատարանում քննվող գործով 06.11.2024թ.-ին ներկայացված հաշտության հիմքով վարույթը կարճելու միջնորդության դեմ: Այդ առումով դատարանը նշել է, որ այդ

[36] ՏԴ/0216/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321792880

խրախուսական նորմից օգտվելու արգելքը կապված է «նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձ» հասկացության մեկնաբանությունից: Օրենսդիրը չի հստակեցրել՝ «նախկինում» ժամանակային միավորը բնութագրող եզրույթը՝ որ պահի դրությամբ պետք է հաշվարկել: Դատարանն ընդունելի և հիմնավորված է համարել «նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձ» հասկացության մեկնաբանումը ենթադրյալ հանցանքի կատարման պահի (որի կապակցությամբ քննարկվում է խրախուսական նորմի կիրառելիությունը) հաշվառմամբ իրականացնելը: Ըստ դատարանի՝ «նախկինում» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել հանցանքների կատարման և իրավասու մարմնի կողմից համապատասխան որոշման կայացման ժամանակագրական պարզ հաջորդականության հաշվառմամբ, քանի որ դա կբովանդակազրկի քննարկվող նորմի խրախուսական բնույթը (հանցանք կատարած անձին քննարկվող հիմքի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու միջոցով վերջինիս իրավահպատակ վարքագծի ապահովումը և նրա հետագա հանցավոր վարքագծի կանխումը): Այս դեպքում դատարանը նշել է, որ ըստ մեղադրյալին ներկայացված մեղադրանքի՝ վերջինս իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով վերագրվող արարքը կատարել է 2024 թվականի փետրվարի 11-ին, իսկ տուժողի հետ հաշտության հիմքով նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2024 թվականի փետրվարի 29-ին, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերագրվող արարքի կատարումը ոչ թե հաջորդել է, այլ նախորդել է տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուն, ուստի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նրան վերագրվող արարքի կատարման պահին մեղադրյալը նախկինում նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված չի եղել:

Վերաքննիչ բողոքում դատախազը նշել է, որ «*նախկինում քրեական պատասխանատվությունից ազատված անձ*» հասկացությունը ևս պետք է հասկանալ իրավասու մարմնի կողմից համապատասխան վարութային ակտը կայացնելու պահին նախորդող ժամանակահատվածում անձի քրեական պատասխանատվությունից ազատված չլինելը: Ըստ դատախազի՝ մեղադրյալը կատարել է հանցագործությունների համակցությամբ հանցանք, սակայն դրանք քննվել են տարբեր քրեական վարույթների շրջանակներում: Նախաքննության ընթացքում հսկող դատախազը, պահպանելով անմեղության կանխավարկածը, մեղադրյալի կատարած արարքներից ժամանակագրական առումով նախորդը՝ 08.09.2023թ.-ին կատարածը, դիտել է որպես վերջինիս կողմից առաջին անգամ կատարած արարք և ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի ուժով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցել: Մինչդեռ հանցագործությունների համակցությունը կազմող մյուս արարքի՝ 11.02.2024թ.-ին կատարածի մասով, քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան: Ավելին, Դատարանը իր վարութային ակտով, ըստ

էության, հաստատված է համարել, որ մեղադրյալը 11.02.2024թ.-ին հանցանք է կատարել, իսկ մինչդատական վարույթում իրավասու մարմնի կողմից անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ակտով, ըստ էության, հաստատված է համարվել, որ մեղադրյալը 08.09.2023թ.-ին է հանցանք կատարել: Ստացվում է մի իրավիճակ, որ անձը հանցագործությունների համակցությամբ, ընդ որում՝ պատմական տարբեր իրադարձություններ ընդգրկող ռեալ համակցությամբ կատարված արարքների համար ազատվել է քրեական պատասխանատվությունից տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արգելքը վերաբերում է այն դեպքերին, երբ անձն իրեն մեղսագրվող արարքը կատարելու պահին արդեն իսկ նույն հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից, սակայն տվյալ պարագայում մեղադրյալը իրեն մեղսագրվող արարքը կատարելու պահին նախկինում նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված չի եղել[37]:

Իսկ գործերից մեկով, որով մեղադրյալին, ի թիվս այլ հանցագործությունների, վերագրվում էր առողջությանը ծանր վնաս պատճառելը, դատարանը անգամ ստիպված է եղել անհստակության մեկնաբանություն անել վճիռը կայացնելուց հետո: Այդպես, դատարանը նշել է, որ *18.03.2021 թվականին կայացած դատավճռի մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, այն է՝ դատավճռի «3. Դատարանի իրավական վերլուծությունները.» բաժնում՝ 6-րդ էջում, նշվել է «- ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հետևյալ հանգամանքը՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը (ըստ քրեական գործում առկա ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ Տ.Ա.-ի դատվածության վերաբերյալ տեղեկություններ պարունակող ձև 8 տեղեկանքի՝ վերջինս 27.01.2015 թվականին դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցանքի համար, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ սահմանվել է փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով, իսկ փորձաշրջանի ժամկետն ավարտվել է 20.03.2018 թվականին: Ամբաստանյալի կատարած հանցավոր արարքում հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը գնահատելիս Դատարանը հիմք է ընդունում ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 1-ին մասը և 84-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, (...)», սակայն սույն գործով ռեցիդիվ առկա չէ, քանի որ ամբաստանյալ Տ.Ա-ն նախորդ հանցանքը կատարել է անչափահաս տարիքում, ուստի դատավճռի մեջ պետք է նշվեր «ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը»*[38]:

Ըստ հարցված քննչական մարմինների ներկայացուցիչների՝ առանձին դեպքերում նրանք փորձում են ոչ շատ խիստ մոտենալ և կարճել վարույթը, հատկապես երբ երիտասարդներ են ներգրավված, իրավիճակը վերահսկելի է, և լուրջ վտանգներ չկան, որպեսզի

[37] ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598
[38] ԱՐԴ/0078/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786183573

երիտասարդների համար ավելի վատ հետևանքներ չառաջանան: Եթե միջադեպը լուրջ է, և կասկածներ կան դեպքի ու հաշտության հիմքերի առնչությամբ, ապա վարույթին ընթացք են տալիս:

Այս առումով խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ դեպքերի, հարուցված և կարճված գործերի վիճակագրություն Քննչական կոմիտեում և դատախազությունում չի վարվում: Չեն ուսումնասիրվում նաև կարճման հիմքերն ու պատճառները[39]:

- *Կրթություն*

Ուսումնասիրությամբ հետաքրքիր պատկեր է արձանագրվել քրեական գործերով ներգրավված մեղադրյալների կրթության վերաբերյալ: Դիտարկված գործերի գերակշիռ մեծամասնության դեպքում մեղադրյալները ունեցել են միջնակարգ կրթություն՝ 56 մեղադրյալ (69%), 12-ը՝ բարձրագույն, ևս մեկը՝ թերի բարձրագույն, 5 մեղադրյալ՝ 8 կամ 9-ամյա կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական, իսկ 6 մեղադրյալի դեպքում կրթության վերաբերյալ տեղեկություն գործով հասանելի չի եղել: Եթե ժամկետային զինծառայողների դեպքում նման հանգամանքը կանխատեսելի է, ապա հատկանաշական է, որ մեղադրյալի կարգավիճակում հայտնված 24 պայմանագրային զինծառայողներից 8-ը, այսինքն՝ մեկ երրորդը ունեցել է միջնակարգ կամ ութամյա կրթություն:

Ուսումնասիրության շրջանակներում իրականացված առանձնազրույց քննարկումներում մասնագետների կողմից մշտապես նշվել է կրթության կարևորությունը՝ զինված ուժերում բռնությունն ու արատավոր բարքերը կանխելու և վերացնելու համար, քանի որ մինչ զինված ուժեր մուտք գործելը երիտասարդները պետք է արդեն բավարար պատրաստված լինեն և հնարավորինս զերծ փողոցային բարքերից: Այս առումով նշվել է նաև, որ զինված ուժերի խնդիրների պատճառների մեջ գերակշիռ դեր ունի այն հանգամանքը, որ հաճախ երիտասարդները, ովքեր ուսումը կիսատ են թողնում և այլ զբաղմունք չեն գտնում, որոշում են զինվորական դառնալ: Մինչդեռ ռազմագիտությունը պահանջում է լուրջ գիտելիքներ: Ավելին, զինծառայության ընթացքում նույնպես կրթությունը պետք է շարունակել:

- *առողջական վիճակ*

Դիտարկված գործերով մեղադրյալի առողջական վիճակին գրեթե անդրադարձ չի կատարվել, բացառությամբ փոխադարձ բռնության արդյունքում հանցագործությամբ պատճառված առողջական վնասը նշելուց: Գործերի վերաբերյալ դատական տեղեկատվական համակարգում հասանելի տեղեկություններում մեղադրյալների հոգեկան առողջության խնդիրների մասին տվյալներ արձանագրված չեն եղել: Մատնանշում առկա է միայն տուժողներից մեկի հոգեկան առողջության վերաբերյալ:

[39] ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության 19-ԵԳ 1288-26 առ 25.02.2026թ. գրություն, հարցազրույցներ Քննչական կոմիտեի ներկայացուցիչների հետ

➢ *ընտանեկան կարգավիճակ*

Դատական գործերի ուսումնասիրությունից պարզվել է, որ գործերի մեծամասնության դեպքում՝ 81 մեղադրյալներից 66-ը (81%) եղել են ամուրի, 9-ը՝ ամուսնացած, 1-ը՝ ամուսնալուծված, իսկ 5 մեղադրյալի դեպքում ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկությունը հասանելի չի եղել: Ամուրի են եղել ինչպես պարտադիր զինվորական ծառայողները, այդպես էլ պայմանագրային զինծառայողներից 14-ը (58%):

Ինչ վերաբերում է մեղադրյալների խնամքին այլ անձ ունենալու հանգամանքին, ապա ուսումնասիրված գործերի մեծամասնության դեպքում մեղադրյալների խնամքին այլ անձ չի եղել կամ դրա վերաբերյալ որևէ մատնանշում առկա չէր, միայն 8 դեպքում է արձանագրվել մեղադրյալի խնամքին այլ անձ լինելու հանգամանքը: Այս հանգամանքը բոլոր դեպքերում դատարանի կողմից մեկնաբանվել է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Այս համատեքստում հատկանշական է, որ գործերից մեկով մեղադրյալը նախկինում դատապարտվել է համանման արարքների համար, իսկ դիտարկվող գործի շրջանակներում դատարանը որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հաշվի է առել մեղադրյալի խնամքին անչափահաս երեխաներ ունենալը: Մեղադրողը վերաքննիչ բողոքում անդրադարձել է այդ հանգամանքին:

Գործերից մեկով դատախազը մասնավորապես շեշտել է, որ մեղադրյալը նախկինում մի քանի անգամ դատապարտվել է /հիմնականում առանց վարորդական իրավունքի տրանսպորտային միջոց վարելու համար/, բոլոր դեպքերում պատիժը պայմանականորեն չի կիրառվել, քանի որ դատարանը հաշվի է առել մեղադրյալի խնամքին անչափահաս երեխաներ ունենալու հանգամանքը: Սակայն ամեն անգամ Վ.Բ.-ն կատարել է նոր հանցանք, այսինքն՝ խնամքին անչափահաս երեխաներ ունենալու հանգամանքը չի կանխում վերջինիս հետագա հակահիրավական վարքագծի դրսևորումը: Դատախազն ընդգծել է նաև, որ մեղադրյալը ՁՈՒ-ի կողմից բնութագրվում է միայն բացասականորեն: Վերոգրյալից ելնելով՝ խնդրել է փոփոխել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Վ.Բ.-ի նկատմամբ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով[40]: Պետք է նշել, որ Վերաքննիչ քրեական դատարանում պաշտպանը միջնորդել է կիրառել վաղեմության ժամկետ, ու քրեական հետապնդումը այս հիմքով դադարեցվել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ դատական գործերի գերակշիռ մասը քննվել է մարզային դատարաններում, հատկապես՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Դիտարկված գործերով նախաքննությունը որոշ դեպքերում չափազանց կարճ է տևել (9 օր), արձանագրվել են դեպքեր, երբ նախաքննությունը ձգձգվել է, առնվազն մեկ դեպքում՝ դիտավորյալ, որի արդյունքում մեղադրյալները խուսափել են

[40] ՍԴ1/0099/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065627513

պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Դատարանում գործի քննությունը մեծամասամբ տևել է մինչև հինգ ամիս, գործերի զգալի մասում կիրառվել է գործի քննության արագացված կարգ կամ կնքվել է հաշտություն, այսինքն՝ գործի հանգամանքները բազմակողմանի պարզելու հնարավորություն չի եղել: Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ դատարանում քննությունը ողջամիտ ժամկետում չի ավարտվել, հիմնականում նախագահող դատավորի պարբերական փոփոխության պատճառով (առավել երկար քննված գործը քննվել է շուրջ 5 տարի 8 ամիս):

Գործերի մեծ մասով՝ 59% գործերով ներգրավված է եղել մեկ մեղադրյալ և մեկ տուժող, սակայն արձանագրվել են նաև ընդհուպ մինչև վեց մեղադրյալի ներգրավմամբ գործեր: Այնուամենայնիվ, դատարանի առաջ կանգնած մեղադրյալների թիվը միշտ չէ, որ արտացոլում է միջադեպի մասնակիցների թիվը, քանի որ մասնակիցների մի մասի դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է դեռևս նախաքննության փուլում: Խմբով բռնություն կիրառելու դեպքերով ոչ բոլոր մասնակիցներին պատասխանատվության ենթարկելու պրակտիկան լուրջ մտահոգությունների տեղ է տալիս և հանգեցնում է անպատժելիության:

Մեղադրյալների մեծ մասը եղել են 18–20 տարեկան (62%), հանդիսացել են ժամկետային զինծառայողներ (68%), ունեցել են միջնակարգ կրթություն (69%), եղել են ամուրի (81%), չեն ունեցել դատվածություն (94%): Վերջին գործոնի առնչությամբ պետք է նշել, որ թեև մեղադրյալների ճնշող մեծամասնությունը չեն ունեցել դատվածություն, այնուամենայնիվ, նրանցից մի մասը նախկինում արդեն ունեցել են օրենքի հետ խնդիրներ, սակայն նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով նախաքննության փուլում կամ դատվածությունը մարված է եղել կամ քննարկվող հանցանքը կատարելու պահին այլ գործով դատավճիռը դեռևս կայացված չի եղել: Թեև մեղադրյալների մեծամասնությունը եղել են շարքային կամ սերժանտ, որոշ գործերով մեղադրյալները եղել են սպա, ընդհուպ մինչև գնդապետ կոչումով:

3.3 Գործով տուժողը

Դիտարկված գործերով տուժողների ճշգրիտ թիվ պարզելը եղել է խնդրահարույց, քանի որ դատալեքսում արտացոլված տեղեկություններից միշտ չէ որ պարզ է եղել, թե արդյոք գործով մեղադրյալը, ով նույնպես ենթարկվել է բռնության գործով ներգրավված այլ մեղադրյալի կողմից, պաշտոնապես հանդիսացել է տուժող, թե ոչ: Որոշ դեպքերում այդ հարցի պատասխանը հնարավոր է եղել պարզել, եթե մեղադրյալները միմյանց հետ հաշտվել են: Այնուամենայնիվ, այն դեպքերում երբ կիրառվել է գործի քննության արագացված կարգ, տուժողի առկայության հարցին անդրադարձ հաճախակի չի կատարվել:

Հասանելի տվյալների հիման վրա եզրահանգում ենք, որ դիտարկված գործերով հիմնականում եղել է մեկ տուժող: Մասնավորապես՝

- 31 գործերով՝ 1 տուժող.
- 8 գործով՝ 2 տուժող.
- 4 գործով՝ 3 տուժող.
- 8 գործով՝ որևէ տուժող պաշտոնապես նշված չէ, թեև մեղսագրվող գործողությունները փոխադարձ բռնություն է:

Այս առումով կարևոր է արձանագրել, որ գործերից մի մասով նախաքննության փուլում ներգրավվել է մեկից ավելի տուժող, սակայն մինչդատական վարույթում այդ դրվագով/դրվագներով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով: Ուստի միայն դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ հնարավոր չէ բացահայտել բռնության զոհ դարձած զինծառայողների թիվը:

Տուժողներից առնվազն 32-ը հանդիսացել են պարտադիր ժամկետային զինծառայողներ, առնվազն 17-ը՝ պայմանագրային, իսկ մնացածի կարգավիճակը հայտնի չէ:

Դատալեքսում առկա տվյալները տուժողների վերաբերյալ բավականին թերի են, այդ թվում՝ տուժողի տարիքի առումով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ տուժողներից շատերը պարտադիր ժամկետային զինծառայողներ են, նրանց տարիքային խումբը հիմնականում 18-21 է:

Ըստ դատալեքսում առկա տվյալների՝ տուժողների մեծ մասը տուժել են համածառայակիցների /20 տուժող/ և վերադասի (այդ թվում՝ կոչման բերումով վերադասների, որոնք նույնպես ժամկետային զինծառայողներ են եղել) /25 տուժող/ կողմից կիրառված բռնությունից: Իսկ 10 դեպքում տուժողը հանդիսացել է մեղադրյալի վերադասը: Որոշ դեպքերում տարբեր կարգավիճակ ունեցող մեղադրյալներ են եղել:

IV. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Դիտարկված ոչ մի գործով արդարացման դատավճիռ չի կայացվել: Հիմնական պատճառն այն է, որ մեղադրյալները հիմնականում միջնորդել են արագացված կամ համաձայնեցված վարույթով գործի քննություն անցկացնել, որը ենթադրում է մեղքի ընդունում, իսկ գործերից մի մասն ավարտվել է հաշտություն կնքելով:

Ինչպես նշել են հարցված մասնագետները, արագացված կարգի կիրառման արդյունքում դիտավորության գործոնը պատշաճ չի քննարկվում և պրակտիկան աղավաղվում է: Ընդհանուր առմամբ այս տեսակի գործերի քննման և լուծման մոտեցումն ընդունելի է արդարադատության համակարգի բոլոր դերակատարների համար: Արդյունքում ստացվում է, որ ֆորմալ իմաստով ապահովվում է քրեական պատասխանատվության

ենթարկելը, սակայն գործնականում բռնության և վատ վերաբերմունքի որոշ դրսևորումներ չեն ստանում պատշաճ որակում, չեն պարզվում գործի բոլոր հանգամանքները, որոնք կարող են ազդել արդարացի պատժի սահմանման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուժողն ու մեղադրյալը հիերարխիկ համակարգի մաս են, հաճախ վերադառնալու են նույն զորամաս, ուստի հարցական է մնում տուժողի կամքի լիարժեք ազատ արտահայտվելու հանգամանքը:

4.1 Խախտման բնույթը և մեղադրանքը

Ուսումնասիրված գործերի մի մասով մեղադրանքները ներառել են ինչպես բռնության գործադրումը, այնպես էլ վիրավորանք հասցնելը կամ այլ հարակից հանցակազմեր: Գործերից մեծ մասով մեղադրյալին ներկայացվել է մեղադրանք երկու և ավելի հոդվածներով:

Բռնության դրսևորումների և արարքների որակման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ բռնության բնույթից ու պատճառված ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ուժգնությունից, որևէ դեպքում մեղադրանք չի առաջադրվել խոշտանգման հոդվածով: Արդյունքում նույն իրավական գնահատականի ներքո են հայտնվել թե՛ մեկանգամյա բռնության դեպքերը, օրինակ՝ մեկական հարված, որոնք պայմանավորված են եղել, օրինակ, սեռական բնույթի հայհոյանքին արձագանքով, և թե՛ շարունակական, նվաստացնող ու ճնշող վարքագիծը: Նման բոլոր հանցանքները որակվել են որպես ստորադասի նկատմամբ բռնություն:

Նման մոտեցման պայմաններում, նույնիսկ այն դեպքերում, երբ առերևույթ կարող են առկա լինել խոշտանգման հանցակազմի տարրեր, քննությունը չի իրականացվում այդ տրամաբանությամբ: Հետևաբար համապատասխան հանգամանքները չեն գնահատվում խոշտանգման արգելքի համատեքստում, իսկ կիրառելի են դառնում պատասխանատվությունից կամ պատժից ազատման այնպիսի մեխանիզմներ, որոնք չէին կարող կիրառվել, եթե արարքը որակվեր որպես խոշտանգում՝ հանցակազմի բոլոր տարրերի առկայության պայմաններում:

Միաժամանակ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքեր իրենց բնույթով կարող էին դիտարկվել ոչ թե քրեական, այլ կարգապահական պատասխանատվության շրջանակում:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրված գործերով մեղադրանքը ներկայացվել է հետևյալ կերպ.

- *հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը զինվորական ծառայության վայրում* (ՀՀ ՔՕ 519-րդ հոդված, 2003թ. ՔՕ 358-րդ հոդված)՝ **19** մեղադրյալ,

- *ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը* (ՀՀ ՔՕ 520-րդ հոդված, 2003թ. ՔՕ 358.1-րդ հոդված)՝ **27** մեղադրյալ,
- *զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտումը ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում* (ՀՀ ՔՕ 521-րդ հոդված, 2003թ. ՔՕ 359-րդ հոդված)՝ **25** մեղադրյալ,
- *զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորանք հասցնելը զինվորական ծառայության ընթացքում* (ՀՀ ՔՕ 524-րդ հոդված, 2003թ. ՔՕ 360-րդ հոդված)՝ **19** մեղադրյալ:
- *Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը* (ՀՀ ՔՕ 522-րդ հոդված, 2003թ. ՔՕ 360.1-րդ հոդված)՝ **4** մեղադրյալ:

Գծապատկեր 8. Մեղադրյալների թիվն ըստ մեղադրանքի հիմքում ընկած հոդվածների.



4.2 Վեճերի պատճառները

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանում քննված գործերով զինվորական ծառայության ընթացքում կարգապահական հարաբերությունների խախտումները հիմնականում ծագել են կենցաղային կամ միջանձնային հարցերից և հաճախ ուղեկցվել են բռնությամբ կամ վիրավորանքով՝ անկախ նրանից, թե դրանք կապված են ծառայողական պարտականությունների կատարման հետ, թե ոչ:

Մեղադրական եզրակացությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որ բռնության հիմնական դրդապատճառներից են եղել՝

- սեռական բնույթի հայհոյանքները,

- Կենցաղային մանր հարցեր,
- կարգապահության վերաբերյալ նկատողությունները/ Ծառայողական պարտականությունների կատարման շուրջ առաջացած խնդիրներ,
- ոչ պատշաճ հաղորդակցությունը,
- վերադաս–ստորադաս հարաբերություններում լարվածությունը,
- հոգեբանական ճնշումն ու նվաստացումը:

Այս բոլոր գործոնները հիմնականում փոխկապակցված են. հաճախակի փոքր կոնֆլիկտը սկսվում է բանավոր վիրավորանքից կամ ծառայողական խնդրից, այնուհետև վերածվում է ֆիզիկական բռնության՝ անկախ ներգրավվածների կարգավիճակից:

➢ *Բանավոր վիրավորանքներ և հայհոյանքներ որպես բռնության նախադրյալ*

ՀՀ քրեական օրենսգրքի 524-րդ հոդվածով քրեականացվում է զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը մեկ այլ զինծառայողի կողմից: Դիսպոզիցիան ընդհանրական է, որը գնահատողական կարծիքի և հայեցողության տեղ է թողնում, և տեսականորեն կարող է առաջացնել իրավական որոշակիության հարց:

Ի թիվս այլ հիմքերի՝ երկրորդ մասով ավելի խիստ պատիժ է սահմանված վիրավորանք հասցնելը ստորադասի (ենթակայի) կողմից հրամանատարի (պետի) նկատմամբ, կամ հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ: Նշվածը պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Մեղադրանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնությամբ զուգորդված վեճերի ամենատարածված պատճառներից են զինծառայողների միջև բանավոր վիրավորանքներն ու սեռական բնույթի հայհոյանքները: Նման արտահայտությունները հաճախ ընկալվել են որպես պատվի և արժանապատվության ոտնահարում, ինչը հետագայում վերածվել է ֆիզիկական բռնության:

Զինվորական միջավայրում պատվի և հեղինակության ընկալումը կարևոր դեր ունի: Այդ պատճառով նույնիսկ բանավոր վիրավորանքը հաճախ ընկալվում է որպես սոցիալական դիրքին ուղղված անմիջական սպառնալիք, ինչը նպաստում է ուժի կիրառմանը:

Գործերից միայն մեկով է, որ մեղադրանքը միայն վիրավորանք հասցնելու համար է: Մնացած դեպքերում մեղադրանքը ներկայացվել է համակցությամբ:

Մշտադիտարկման ամփոփումը ցույց է տալիս, որ այդ հոդվածով քրեական հետապնդում հարուցվել է հետևյալ դեպքերում՝ զինծառայողները միմյանց հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել, մեկին «գործ տվող» կամ սրբապիղծ անվանել, կոպիտ արտահայտություններ վերադասի կամ համածառայակցի հասցեին հնչեցրել:

Գ.Ա-ի և Ռ.Ի-ի միջև կոնֆլիկտը սկսվել է այն բանից հետո, երբ Գ.Ա-ն Ռ.Ի.-ին անվանել է «գործ տվող», ինչին հաջորդել են փոխադարձ հայհոյանքներ և բռնություն[41]:

➢ *Ծառայողական պարտականությունների կատարման շուրջ առաջացած խնդիրներ*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնության տարածված պատճառներից են ծառայողական կարգապահության պահպանման հետ կապված խնդիրները: Դրանք հիմնականում վերաբերել են ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը կամ կարգապահական պահանջների խախտմանը, որոնց արձագանքելիս առաջացել են կոնֆլիկտներ:

Նման իրավիճակները ներառել են հերթապահության ընթացքում քնելը, ուշ արթնանալը, վերկացը պատշաճ չկազմակերպելը, շարքից բացակայելը կամ առանց թույլտվության շարքից դուրս գալը, տարածքի մաքրության կազմակերպման հարցում թերանալը և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերադասների կողմից արված դիտողությունները հաճախ ընկալվել են որպես անձնական վիրավորանք, ինչի հետևանքով առաջացել են վիճաբանություններ: Մի շարք դեպքերում վերադասները կարգապահական միջոցների փոխարեն կիրառել են ֆիզիկական բռնություն, ինչը խորացրել է կոնֆլիկտը: Այսպիսով, թեև վեճերը ծագել են կարգապահական պահանջների կատարման շուրջ, դրանց լուծման համար հաճախ կիրառվել է ոչ իրավաչափ ուժ:

Հատկանշական է, որ նման արձագանքներ արձանագրվել են ինչպես պարտադիր ժամկետային զինծառայող սերժանտների, այնպես էլ պայմանագրային զինծառայող սպաների նկատմամբ: Սա վկայում է, որ կարգապահության, ենթակայության և կանոնադրային հարաբերությունների ընկալումը զինծառայողների շրջանում միշտ չէ, որ առաջնային նշանակություն ունի:

Վ.Մ.-ն բռնություն է գործադրել շարքային Ժ.Գ.-ի նկատմամբ՝ մարտական հերթապահության ընթացքում զինծառայողներին ուշ արթնացնելու և ստելու պատճառով[42]:

Պարտադիր ժամկետային զինծառայող Ն.Ե.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ներգրավված լինելով մարտական հերթապահության մեջ՝ որպես դիտորդ,

[41] ՍԴ/0007/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594293
[42] ՍԴ3/0027/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594324

չի կատարել իրեն տրված հանձնարարությունը՝ դիրքի ստուգման մատյանը դրսից գետնատնակ տանելու, ինչի պատճառով որոշակի վիճաբանություն է առաջացել իր և դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Գ.Զ.-ի միջև: Գ.Զ.-ն ծեծի է ենթարկել վերջինիս՝ պատճառելով նրան առողջության թեթև վնաս: Ն.Ե.-ն, սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելով, կացին է նետել կրտսեր սերժանտ Գ.Զ.-ի ուղղությամբ, սակայն կացինը նրան չի դիպչել, քանի որ վերջինս թաքնվել է դիտակետում: Այնուհետև, Ն.Ե.-ն, վերցնելով քլունգը, մոտեցել է Գ.Զ.-ին և սպառնացել նրան՝ հնչեցնելով սպանելու սպառնալիքներ, սակայն համածառայակիցները բռնել են նրան և խլել քլունգը՝ այդպիսով կանխելով հանցագործության ավարտը[43]:

Մի խումբ պարտադիր ժամկետային զինծառայողներին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք զինվորական ծառայություն կրելու վայրում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, այն է՝ օրվա կարգացուցակով սահմանված ժամին քնած չլինելու վերաբերյալ նույն գումարտակի վաշտի հրամանատար, կապիտան Է.Դ.-ի կողմից իրենց ուղղված դիտողություն անելու պատճառով վիճաբանել են Է.Դ.-ի հետ, որի ընթացքում ծեծի են ենթարկել իրենց նկատմամբ պետ հանդիսացող, կապիտան Է.Դ.-ին՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել վերջինիս մարմնի տարբեր հատվածներին՝ Է.Դ.-ին պատճառելով առողջությանը միջին ծանրության վնաս պարունակող մարմնական վնասվածքներ[44]*:*

❖ *Վերադաս–ստորադաս հարաբերությունների խախտում*

Մյուս խումբ գործերով բռնության գործադրումը կապված է եղել ենթակայության հարաբերությունների խախտման հետ: Այս դեպքերը ցույց են տալիս, որ զինվորական հիերարխիան երբեմն վերածվում է կոնֆլիկտի, հատկապես երբ վերադասները կարգապահական միջոցների փոխարեն կիրառում են ուժ, կամ ստորադասները չեն ընդունում նրանց հեղինակությունը, հատկապես եթե վերադասը (պետը) նույնպես պարտադիր ժամկետային զինծառայող է:

Պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով եֆրեյտոր Ի.Գ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա վաշտում առավոտյան վերկացը ճիշտ չկազմակերպելու պատճառով շարքային Կ.Ա.-ի հետ միասին ծեծի է ենթարկել իր նկատմամբ պետ հանդիսացող կրտսեր սերժանտ Հ.Հ.-ին: Դրանից հետո, նկատելով Հ.Հ.-ի ձեռքում դանակի բռնակ, Կ.Ա.-ն վերցրել է դանակը և այն օգտագործելով՝ դիտավորությամբ երկու հարված է հասցրել Հ.Հ.-ի մեջքին, ինչի հետևանքով վերջինիս պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս[45]*:*

[43] ՍԴ3/0030/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594453
[44] ՍԴ3/0196/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065631459
[45] ՍԴ3/0016/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594109

Պարտադիր ժամկետային զինծառայող Գ.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ընդգրկված լինելով մարտական դիրքում՝ որպես դիտորդ, մարտական դիրքում քնելու պատճառով ստացած դիտողության համար վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ պետ հանդիսացող, նույն զորամասի հրամանատար Տ.Ե.-ի հետ, որի ընթացքում հարվածել է վերջինիս՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Իսկ Տ.Ե.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ծեծի է ենթարկել Գ.Ա.-ին:[46]

Վ.Բ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ավագ լեյտենանտ Հ.Հ.-ի կողմից դիտակետի թաքստոցների համար նախատեսված գերաններից անձնական կարիքների համար վառելափայտ առանձնացնելու գործընթացը չթույլատրելու պատճառով վիրավորանք է հասցրել ծառայողական դիրքով և զինվորական կոչումով պետ հանդիսացող, ավագ լեյտենանտ Հ.Հ.-ի հասցեին: Այս միջադեպից հետո գումարտակի շտաբի պետ, մայոր Ա.Ա.-ն, կարգապահական միջոցներ կիրառելու փոխարեն, ավագ լեյտենանտ Հ.Հ.-ի կողմից զինծառայողին ոչ վայել կերպով պահելու՝ անհասցե հայհոյանքներ հնչեցնելու պատճառով, բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ՝գլխով և ոտքով հարվածներ հասցրել նրա դեմքին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ[47]*:*

Մայոր Ա.Դ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով գումարտակի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, գումարտակի զորանոցում գտնվող ժամկետային զինծառայողների մոտ նկատել է ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի հրամանով չթույլատրված "Սմարտֆոն" տեսակի բջջային հեռախոսներ, ինչից հետո օրինական պահանջ է ներկայացրել նշված բջջային հեռախոսները իրեն ներկայացնելու վերաբերյալ, սակայն տեղեկանալով, որ նույն գումարտակի ժամկետային զինծառայող շարքային Վ.Հ.-ն առանց բջջային հեռախոսն իրեն փոխանցելու դուրս է եկել զորանոցից, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ Վ.Հ.-ի համածառայակից ընկերների ներկայությամբ սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Վ.Հ.-ի հասցեին: Պարտադիր ժամկետային զինծառայող Զ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ չկապված ծեծի է ենթարկել իր նկատմամբ պետ հանդիսացող մայոր Ա.Դ.-ին, այն է՝ վերջինիս կողմից իր համածառայակից ընկերոջ հասցեին հնչեցված հայհոյանքին ի պատասխան, աջ բռունցքով երկու անգամ հարվածել է Ա.Դ-ի դեմքի շրջանին[48]*:*

- *Կենցաղային մանր հարցեր*

---

[46] ԳԴ/0490/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228678042
[47] ՍԴ1/0099/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065627513
[48] ԱՐԴ/0284/01/21, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786222120

Հաճախ վեճերը սկսվել են աննշան կենցաղային հարցերից, որոնք զինվորական միջավայրում արագ վերածվել են լուրջ կոնֆլիկտների՝ տիրող հատուկ միջավայրի պատճառով: Օրինակ՝ սուլելով կանչելը, մահճակալների բաշխում, անձնական իրերի տեղադրում: Այն միջավայրում, որտեղ զինվորները երկար ժամանակ գտնվում են սահմանափակ տարածքում և մշտական լարվածության պայմաններում, փոքր առօրյա խնդիրները հաճախ դառնում են կոնֆլիկտի պատճառ:

Պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով՝ կրտսեր սերժանտ Վ.Ռ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա գումարտակի զորանոցում, ներկոտ ձեռքերն իր համազգեստին քսելու փորձ կատարելու պատճառով վիճաբանել է զինվորական կոչման բերումով իր նկատմամբ ստորադաս /ենթակա/ հանդիսացող, նույն գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ի.Հ.-ի հետ, երկուսն էլ հնչեցրել են փոխադարձ հայհոյանքներ, որից հետո զինանոցի սեղանին առկա կողպեքը Վ.Ռ.-ն նետել է Ի.Հ.-ի ուղղությամբ, որը դիպչել է վերջինիս դեմքի հատվածին[49]:

Վ.Դ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա զորամասում գտնվող հիվանդասենյակում, զինվորական ծառայության հետ չկապված հարցի կապակցությամբ վիճաբանել է պարտադիր ժամկետային զինծառայող Տ.Տ.-ի հետ, այն է՝ վերջինիս կողմից ատամի մածուկը կողապահարանին դնելու կապակցությամբ վերջինիս անվանել է "փնթի", որից հետո Վ.Դ-.ն բռունցքով հարվածներ է հասցրել Տ.Տ.-ին[50]:

❖ *Հոգեբանական ճնշում, նվաստացում և բռնություն*

Մի շարք դեպքեր ցույց են տալիս նաև ոչ կանոնադրային հարաբերությունների կամ ճնշման, նվաստացումների ենթարկելու պրակտիկան, որն առավել մտահոգիչ է: Դրանք արտահայտվել են նվաստացումներով, շանտաժով կամ շորթմամբ, ինչպես նաև դաժան վերաբերմունքով համածառայակցի նկատմամբ:

Թեև նման դեպքերը համեմատաբար ավելի քիչ են, քան այլ պատճառով բռնությունը, հենց այս տեսակի միջադեպերը պահանջում են առանձնակի ուշադրություն ու պատշաճ գնահատական: Հատկապես մտահոգիչ է, որ նման վարքագիծ դրսևորվել է տևական ժամանակ և/կամ մի քանի զինծառայողների նկատմամբ, սակայն որևէ միջամտություն հրամանատարության կողմից չի եղել:

Այսինքն՝ ՄԻԵԴ-ի վճիռներում արձանագրված պրակտիկան այս առումով դեռևս պահպանվում է:

Ժ.Ն.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա որպես դիրքի ավագ հանդիսանալով պետ, սուրճ դնելու կապակցությամբ իրեն խաբելու համար, տվյալ մարտական դիրքի կացարանում սեռական բնույթի հայհոյանքներ է հասցրել իր նկատմամբ

[49] ԱԴ3/0075/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065630469
[50] ԵԴ1/2924/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=48976645947682736

ստորադաս հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայողներին, ապա ստիպել է վերջիններիս հանել համազգեստներն ու մերկանալ, որից հետո կացարանում ջուր է լցրել Ա.Հ.-ի վրա, իսկ Ա.Մ.-ի վրա ջուր լցնելով, նրան կիսամերկ վիճակում հագցրել է սաղավարտ ու զրահաբաճկոն և դուրս հանելով կացարանից, վերջինիս ստիպել է շուրջ 30 րոպե տևողությամբ մնալ դրսում: Բացի այդ, Ժ.Ն.-ն, ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ՝ արյուն հերթափոխում քնելու համար, նույն մարտական դիրքի կացարանում վիճաբանության մեջ է մտել և իր նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Ա.Մ.-ի նկատմամբ կիրառել բռնություն՝ բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի պարբեր մասերին, ինչպես նաև թքել է նրա վրա ու անվանել «Սրբապիղծ չ-լախ»[51]:

Վ.Մ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելով, դիրքի ավագ Վ.Հ.-ի հետ միասին, նույն հենակետում որպես դիտորդ հերթապահության ընդգրկված, շարքային Ա.Ե.-ի նկատմամբ, վերջինիս կողմից դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում քնած լինելու համար, մարտական դիրքի գետնատնակում սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել Ա.Ե.-ի հասցեին, նրա արարքը բնութագրել պարսավանքի արժանի՝ որպիսի հանգամանքը բնորոշելով զինծառայողների շրջանում որպես արատավոր երևույթ՝ այդ կերպ նվաստացնելով Ա.Ե.-ի անձնական պատիվն ու արժանապատվությունը: Մեկ այլ օր շարքային Ա.Ե.-ի կողմից քնից ուշ արթնանալու համար, քաշելով նրան վայր է գցել գետնատնակում տեղադրված երկհարկանի մահճակալի վերնահարկից, ձեռքերով հարվածներ հասցնելով ծեծի ենթարկել, սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել վերջինիս հասցեին՝ միաժամանակ Ա.Ե.-ին հիշեցնելով, որ նա դասվում է այն «սրբապիղծ և պատվազուրկ» զինծառայողների շարքին, որոնք դիտորդի պարտականությունների կատարման ընթացքում քնում են՝ այդկերպ դաժան վերաբերմունք դրսևորելով վերջինիս նկատմամբ, որից հետո Ա.Ե.-ն՝ որպես դիտորդ հերթապահություն իրականացնելու ընթացքում, ինքնաձիգից մեկ կրակոց արձակելով իր կրծքավանդակի շրջանին՝ ինքնասպան է եղել:[52]

Դիրքում քնող զինծառայողների վերաբերյալ առկա կարծրատիպերի և դրանով պայմանավորված վերաբերմունքի մասին խոսել են գործով վկաները: Նրանցից մեկը մասնավորապես նշել է, որ «*մեր զորամասի զինծառայողների շրջապատում ձևավորված է այն հասկացությունը, որ մարտական դիրքում դիտորդ կանգնելու ժամանակ քնող զինծառայողին լավ չեն վերաբերվում՝ վերջինիս ընդունելով «Բ-ի տղա» սեռական բնույթի վիրավորական արտահայտությունը»*: Մեկ այլ վկա նշել է, որ «*ՀՀ ՊՆ զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի որոշ զինծառայողների մոտ ձևավորված է այն կարծրատիպը, որ մարտական հերթապահության ընթացքում դիտակետում դիտորդի քնելը նշանակում է, որ նա անինքասեր, սրբապիղծ անձնավորություն է, ով չի մտահոգվում դիրքի մյուս*

[51] ԳԴ3/0062/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228674558
[52] ԳԴ3/0070/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228675050

զինծառայողների անվտանգության մասին, ինչը և հեղինակագրկում է նրան համածառայակիցների շրջանում»:

Ի դեպ, հարցված մասնագետներից մեկը նշել է, որ «խրամատում քնելը պատժվում է նախ հայհոյանքով՝ ընդհուպ մինչ ծնողներին ուղղված, բռնությամբ, ու սա չգրված կանոն է»: Քնելու պատճառով վատ վերաբերմունքի և բռնության արժանանալը, որը հանգեցրել է ընդհուպ մինչև ինքնասպանության, հաստատել են նաև հարցված այլ մասնագետներ:

Հատկանշական է, որ դատախազությունը, ի թիվս այլնի, իր տարեկան հաղորդումներում անդրադառնում է հատկապես զինված ուժերում բռնություններով պայմանավորված դեպքերի, և որպես պատճառ նշում զինծառայողների կողմից կանոնագրքով նախատեսված փոխհարաբերությունների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելը: Ըստ դատախազության՝ «զինծառայողների վարքագիծն ու փոխհարաբերությունները կանոնակարգող նորմերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը անձանց մոտ ձևավորված լինելով դեռևս նախքան զորակոչվելը, զորակոչվելուց հետո նման վարքագծի նկատմամբ անհանդուրժողական մոտեցում չցուցաբերելու պայմաններում շարունակում է ամրապնդվել ու զարգանալ»: Համաձայն պաշտոնական տվյալների՝ այդպիսի վարքագծի դրսևորումներ կան նաև սպաների շրջանում, ինչը մտահոգիչ է որակվել:[53]

Ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցազրույց-քննարկումներում անդրադարձ է եղել նաև խախտումների պատճառներին, որոնք հիմնականում հաստատում են դատական գործերի ուսումնասիրությամբ արձանագրված խնդիրները: Մասնավորապես, նշվել է, որ ինչպես համածառայակիցների միջև հարաբերություններում, այնպես էլ վերադաս և ստորադաս հարաբերություններում արժեքների վրա հիմնված մոտեցումները բացակայում են, փոխարենը՝ այդ հարաբերությունները կառուցվում են փողոցային բարքերի և դրա հիման վրա ձևավորված մտածելակերպի վրա: Ըստ այդմ՝ որպես լուծում առաջնային է դիտարկվել մտածողության փոփոխությունն ու արժեքահեն կրթությունը: Այս առումով սպաների դերը հատկապես կարևորվել է, քանի որ վերջիններս էական դերակատարում ունեն և օրինակ պետք է ծառայեն շարքային զինծառայողներին:

> *Կարևոր է նաև, որ հասարակությունը ինքը մասնակցի զինվորի դաստիարակությանը՝ սկսած տնից և ինքն իրենից: Չպետք է բանակի մասին մտածելն ու հոգալը իրավիճակային և էմոցիոնալ լինի:*
>
> *Հարցված մասնագետ*

Խախտումների պատճառների մեջ նշվել է նաև զինված ուժերի կանոնագիրքը չգործելու հանգամանքը, ինչը կրկին կապվել է գործող բարքերի հետ: Մասնավորապես, նշվել է, որ

[53] Տե՛ս, օրինակ՝ 2023թ., 2024թ. հաղորդում Ազգային Ժողովին, հասանելի է https://www.prosecutor.am/dynamicWebPages/report

բռնությունները հաճախ տեղի են ունենում, քանի որ կարգապահական կանոնագիրքը չի գործում, այն ձևական բնույթ է կրում, չկա հարգանք դրա նկատմամբ և գիտակցում դրա կարևորության մասին:

Կանոնագիրքը գործում է ֆորմալ, ՊՆ նախարարի հրամանները դեր չունեն, մինչդեռ նախկինում այդ հրամաններին լուրջ էին վերաբերում, դա նաև ինչ-որ տեղ իրավունք էր զարգացնում, հիմա այդպես չէ:

Հարցված մասնագետ

Խախտումների պատճառների առնչությամբ ներկայացվել է նաև, որ բռնությունների ուսումնասիրությունները խոսում են ավելի լուրջ ակունքների մասին, որը սկսվում է ընդհուպ զորակոչից: Հատկապես այն դեպքերում, երբ դեռևս զորակոչի փուլում հայտնաբերվում են առանձնահատկություններ, որոնք ծառայության համար էական են, քանի որ ծառայության ընթացքում դրսևորվելու ռիսկերը մեծ են, սակայն այդ խնդիրները պատշաճ չեն ամրագրվում: Մինչդեռ դեռևս զորակոչի ժամանակ հնարավոր է դրանք պարզելով կանխել նաև հետագա դրսևորումներով պայմանավորված միջադեպերն ու խախտումները:

Օրինակ, եղել է դեպք, երբ մտավոր հետամնացություն ունեցող անձը զորակոչվել է և հետո բարձրացել դիրքեր: Համածառայակիցները հասկացել են այդ խնդիրը և սկսել օգտագործել, նվաստացրել են այդ զինծառայողին, ներքաշել ընդհուպ մինչև կենդանիների հետ սեռական հարաբերությունների մեջ: Միջադեպերից մեկի ժամանակ հայհոյել են այդ զինծառայողին, ինչից հետո հրազենը վերցրել է և կրակելով սպանել հայհոյողին: Զինծառայողի հետ հետագա աշխատանքը պարզել է, որ զինծառայողի ընկալմամբ, հայհոյանքը ավելի արատավոր բան է, քան մնացած նվաստացումները, որոնց ենթարկվել է, քանի որ բովանդակային մեկնաբանության ունակություն այդ տղան չի ունեցել: Միջավայրի տղաները բանակ գնալիս իրեն ասել են, եթե քեզ հայհոյեն, այլևս իրավունք չունես վերադառնալ այս հասարակություն:

Հարցված մասնագետ

Որպես խնդիր նշվել է նաև, որ չնայած զորակոչի ժամանակ կարող են անձի խնդիրները վեր հանվեն, արձանագրվի ծառայության ընթացքում սահմանափակումների անհրաժեշտությունը, սակայն պրակտիկայում և բուն զինվորական ծառայության ընթացքում իրավասու մարմինների կողմից դրանք հաշվի չառնվեն:

Այնպիսի հարցեր կարող են լինել, որոնք վերաբերեն, օրինակ, անձի կենսունակությանն ու արյուն մնալու կարողությանը: Փորձը ցույց է տալիս, որ խնդիրների մեծ մասի պատճառը հերթապահության ու անքուն մնալու հարցից է առաջանում: Ինչը խնդիր է դառնում և նրա համար, ով կարող է անքուն մնալ ավելի երկար, և նրա համար, ով ունակ չէ, ու հանգեցնում է երկուսի մոտ էլ ագրեսիվ ռեակցիաների և բախման:

Խախտումների պատճառահետևանքային դրսևորումների առնչությամբ հարցված մասնագետների կողմից նշվել է նաև, որ զինված ուժերում նման դրսևորումներ դառնում են համակարգային, քանի որ զինծառայողների մոտ եղած առանձնահատկությունների հետ գործ ունեցողները զինված ուժերում հաճախ մատնված են անգործության, զինծառայողների խնդիրները հաշվի չեն առնում, և միջադեպերը չեն կանխվում: Չնայած բռնությունները կանխելու ուղղությամբ շարունակ ինչ-որ աշխատանքներ են տարվում, սակայն դրանք մեծամասամբ ֆորմալ բնույթի են և արդյունք չեն տալիս: Այսինքն՝ կա որոշակի քաղաքականություն, բայց որակական ցուցանիշը չի ապահովվում:

4.3 Կարգապահական և քրեական պատասխանատվության տարանջատում

Մեղադրանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում հստակ չէ կարգապահական և քրեական պատասխանատվության միջև սահմանագիծը, հատկապես այն իրավիճակներում, երբ խոսքը վերաբերում է հայհոյանքներին կամ այնպիսի գործողություններին, որոնք չեն հանգեցրել առողջության վնասի:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում քրեական պատասխանատվության կիրառումը միշտ չէ, որ նպաստում է կարգապահության վերականգնմանը: Գործերի մեծ մասով մեղադրյալների նկատմամբ կիրառվել է փորձաշրջան կամ կնքվել է հաշտություն: Արդյունքում քրեական հետապնդման հիմնական հետևանքը հաճախ դարձել է դատվածության առկայությունը, մինչդեռ կանխարգելիչ կամ կարգապահական ազդեցությունը մնում է վիճելի:

Բացի այդ, նման գործերի քրեականացման արդյունքում լրացուցիչ ծանրաբեռնվում են նախաքննություն իրականացնող մարմիններն ու դատարանները՝ առանց ակնհայտ արդյունավետության:

Ստորև նշված օրինակները կարող էին քննարկվել և լուծվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով:

> *Գործերից մեկով զորամասի թերապևտիկ բաժանմունքում ստացիոնար բուժման մեջ ժամկետային զինծառայողը ատամի մածուկը կողապահարանին դնելու պատճառով վիճաբանել է մեկ այլ ժամկետային զինծառայողի հետ, վերջինիս անվանել է «փնթի» և բռունցքով հարվածել ձախ բազկին՝ պատճառելով թեթև, առողջությանը վնասի հատկանիշներ չպարունակող ձախ բազկի շրջանի արյունազեղման ձևով մարմնական վնասվածք*[54]:

[54] ԵԴ1/2924/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=48976645947682736

Մեկ այլ գործով շարքային մեղադրյալը զորամասի մասնաշենքում սուլելու միջոցով իրեն մոտ կանչելու հարցի շուրջ վիճաբանել է մեկ այլ շարքային զինծառայողի հետ, վերջինիս հասցեին հասցրել սեռական բնույթի հայհոյանք, ապա քաշել թևերից և գցել գետնին՝ պատճառելով քերծվածք[55]:

Հատկանշական է, որ գործերից մեկով տուժողը ցուցմունքում նշում է, որ որոշ ժամանակ անց է կացրել կարգապահականում, սակայն գործի նյութերից հստակ չէ, թե արդյոք անձը փաստացի կրկնակի պատասխանատվության է ենթարկվել նույն արարքի համար, թե ոչ: Մասնավորապես, տուժողը նշել է, որ ներկայումս մեղադրյալի հետ նորմալ, մարդկային հարաբերությունների մեջ է. «*Դեպքից հետո՝ նույնիսկ կարգապահականում, հետո նաև զորամասում զրուցել են իրար հետ, հասկացել են ինչ է տեղի ունեցել, հաշտվել են իրար հետ ու դրանից հետո եզրակացրել, որ նման դեպք չպետք է տեղի ունենար*» [56]:

Այս առումով պետք է նշել, որ ՄԻԵԴ-ը կարգապահական խիստ միջոցները (հատկապես ազատության սահմանափակման հետ կապված) և քրեական պատասխանատվության ենթարկելը նույնացնում է և կիրառում է կրկնակի պատասխանատվության ենթարկելու՝ ne bis in idem արգելքը[57]:

Նման դեպքերը ցույց են տալիս, որ ոչ բոլոր միջանձնային կոնֆլիկտներն են պահանջում քրեական արդարադատության մեխանիզմների ներգրավում, հատկապես երբ վնասի աստիճանը նվազագույն է, իսկ արարքները կարող են արդյունավետորեն կարգավորվել զինվորական կարգապահական մեխանիզմների միջոցով:

Հարցված մասնագետները նույնպես կարևորել են կարգապահական պատասխանատվության մեխանիզմների կիրառելիությունը՝ քրեական պատասխանատվության փոխարեն: Նշվել է, որ «*կանոնադրային հարաբերությունների խախտման համար առաջին հիմքը պետք է զինվորական կանոնագիրքը լինի, հետո նոր քրեական օրենսգիրքը, արհեստական խստությունը արդյունավետ չէ*»:

4.4 Պաշտպանության իրավունք

Ուսումնասիրված ոչ բոլոր գործերով մեղադրյալները դատարանում ունեցել են պաշտպան:

[55] ՍԴ/0101/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065630442
[56] ՍԴ3/0075/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065630469
[57] Ավելին տե՛ս Council of Europe, Guide on Article 4 of Protocol No. 7 to the European Convention on Human Rights Right not to be tried or punished twice, հասանելի է https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/guide_art_4_protocol_7_eng

5 մեղադրյալի դեպքում որևէ նշում պաշտպան ունենալու մասին առկա չէ, անգամ այն պարագայում, երբ գործով ներգրավված այլ մեղադրյալների պաշտպանի մասին հստակ նշվում է:

> *Գործերից մեկով ներգրավված է երեք մեղադրյալ, որոնցից մեկը նշված է նաև որպես տուժող: Երեքից երկու մեղադրյալները մեղադրվել են իրենց նկատմամբ պետ հանդիսացող երրորդ մեղադրյալ-տուժողին ծեծի ենթարկելու մեջ: Հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման և արագացված կարգի կիրառմամբ դատավճռում նշված է միայն մեկ պաշտպանի ազգանուն: Վերջին դեպքում հստակ նշված է, որ նա մեղադրյալի պաշտպան է, իսկ տուժողը ներկայացուցիչ չունի: Ավելին՝ անգամ եթե նա ներկայացրել է երեք մեղադրյալին էլ, նրանց միջև կարող էր լիներ շահերի բախում*[58]:

Դիտարկված գործերով արձանագրվել են այլ դեպքեր ևս, երբ մի քանի մեղադրյալի շահերը պաշտպանել է նույն պաշտպանը[59]:

32 (40%) մեղադրյալներ ներկայացված են եղել հանրային պաշտպանի կողմից, 25 (31%) մեղադրյալ մասնավոր փաստաբան են ունեցել, իսկ 19-ը (23%) ներկայացված են եղել Արցախի փաստաբանների պալատի անդամների կողմից: Ինչպես նշվեց, 5 (6%) մեղադրյալի դեպքում պարզ չէ, թե արդյոք ունեցել են պաշտպան, թե ոչ:

Գծապատկեր 9. Գործով փաստաբանը.



Դատալեքսում արտացոլված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ գործով պաշտպանները հիմնականում խորհուրդ են տվել կնքել հաշտություն կամ գործուն զղջալու հիմքով դադարեցնել քրեական հետապնդումը (25 մեղադրյալի դեպքում) կամ

[58] ՍԴ3/0016/01/20, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065594109
[59] Տե՛ս, օրինակ՝ ՏԴ/0216/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321792880

միջնորդել արագացված կամ համաձայնեցված վարույթ (48 մեղադրյալ), ևս 3 դեպքում գործը կարճվել է մեղադրյալի մահվան հիմքով:

Փաստացի 81 մեղադրյալներից միայն 5-ի (6%) մասով է ընթացել ընդհանուր կարգով դատավարություն, որոնցից չորսը մեղադրվել են այլ զինծառայողներին ինքնասպանության հասցնելու մեջ (երկու գործով): Միայն գործերից մեկով զարմանալիորեն մեղադրյալները չեն միջնորդել հաշտության հիմքով դադարեցնել հետապնդումը և վարույթը կարճել, թեև դատարանում տված ցուցմունքում երկուսն էլ նշել են, որ վաղուց հաշտվել են միմյանց հետ: Այս գործով պաշտպանը հանրային պաշտպան էր: Դատարանը մեղավոր է ճանաչել մեղադրյալին, սակայն պատժից ազատել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով[60]:

4.5 Տուժողի շահերի պաշտպանություն

Դիտարկված գործերով տուժողների մեծամասնությունը եղել են նաև մեղադրյալ, ուստի նրանց շահերի պաշտպանությունը իրականացվել է այդ ձևաչափով: Դիտարկված գործերով միայն 2 տուժողի իրավահաջորդներն և մեկ տուժող[61] է ունեցել ներկայացուցիչ:

Տուժողներից մեծ մասը չեն առարկել արագացված կարգով գործի քննության դեմ, դրա մասին հայտնել են կա՛մ գրավոր, կա՛մ հեռախոսազանգի միջով, կա՛մ նիստում: Հատկանշական է, որ 51 գործից միայն մեկով է տուժողն առարկել քրեական հետապնդման դադարեցմանը, նույն դիրքորոշումը հայտնել է նաև մեղադրողը:

> *Այս գործով մեղադրյալ Ա.Ս.-ն մեղադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելու համար, քանի որ նա, հաղիսանալով զորամասի հրամանատար, կոչումով գնդապետ, զորամասի ճամբարի հրամանատարական վրանում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, այն է՝ ֆիզիկական պատրաստությանը չմասնակցելու շուրջ առաջացած խոսակցության ընթացքում վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադաս, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային Հ.Պ.-ի հետ, բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ՝ բռունցքով հարվածներ է հասցրել նրա դեմքին և քաշքշել: Այս գործով քննչական գործողությունները այնքան էին ձգձգվել, որ նախնական դատապարտումներին պաշտպանը դատարանին միջնորդեց քրեական հետապնդումը դադարեցնել՝ օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը լրանալու հիմքով[62]:*

[60] ՍԴ3/0075/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065630469
[61] ՏԴ/0002/01/20, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321760590
[62] ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598

Ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել է, որ մեղադրյալ չհանդիսացող տուժողներից շատերը չեն մասնակցել դատական նիստին, որոշ դեպքերում հեռախոսով են հայտնել կարծիքը, օրինակ՝ արագացված կարգ կիրառելու հարցի վերաբերյալ, ու պարզ չէ, թե արդյոք պատշաճ կերպով հասկացել են իրենց իրավունքները:

Իսկ քանի որ հաշտեցման, արագացված կամ համաձայնեցված կարգով գործի քննության անցկացման վերաբերյալ միջնորդությունները ներկայացվել են նախնական նիստին, ապա տուժողի ցուցմունք տալու փուլին գրեթե ոչ մի դատավարությամբ, բացառությամբ երեքի, չեն հասել:

Այս առումով որպես համակարգային և օրենսդրական խնդիր ներկայացվել է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսդրության ներկայիս կարգավորումներով արգելվում է ոչ փաստաբաններին ներգրավել որպես տուժողի ներկայացուցիչ: Մինչդեռ նախկինում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեին ներգրավվել վարույթին և իրացնել տուժողների պաշտպանությունը:

«Փաստաբանության մասին» օրենքում 2022 թվականի հոկտեմբերի 5-ին կատարված փոփոխություններով սահմանվել է, որ տուժողի կարգավիճակ ունեցող զինծառայողները իրավունք ունեն ստանալ անվճար իրավաբանական օգնություն հանրային պաշտպանի գրասենյակից կողմից[63]: Իրավական այս կարևոր երաշխիքը սակայն գործնականում այդքան էլ արդյունավետ չէ՝ հաշվի առնելով հանրային պաշտպանների փաստացի ահռելի ծանրաբեռնվածությունը, մարզերում հանրային պաշտպանների փոքր թիվը և գործով մի քանի մեղադրյալ ու տուժող լինելու դեպքում՝ հնարավոր շահերի բախումը:

4.6 Խափանման միջոցի կիրառում

Մինչդատական վարույթի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառվել է միայն 5 գործով՝ 7 մեղադրյալի նկատմամբ, որոնցից 4-ը մեղադրվել են այլ զինծառայողին ինքնասպանության հասցնելու մեջ[64]: Մնացյալ դեպքերում մեղադրյալի նկատմամբ ընտրվել է կամ զինվորական հսկողություն, կամ բացակայելու արգելք (ստորագրություն չհեռանալու մասին) միջոցը, կամ խափանման միջոց չի կիրառվել: Հատկանշական է, որ բռնություն գործադրելու մեջ մեղադրյալների նկատմամբ, որը հանգեցրել է ինքնասպանության,[65] կալանավորում չի կիրառվել ոչ նախաքննության, ոչ էլ դատաքննության ընթացքում, ի տարբերություն ինքնասպանության հասցնելու երկու

[63] «Փաստաբանության մասին» օերնքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, Ընդունված է 2022 թվականի հոկտեմբերի 5-ին, հասանելի է https://www.arlis.am/hy/acts/169828
[64] ԳԴ3/0062/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228674558, ԳԴ5/0005/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228669823, ԳԴ3/0070/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228675050, ՍԴ3/0014/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594108, ՍԴ1/0176/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065629083
[65] ՍԴ1/0001/01/20, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065593922

դեպքի, երբ մեղադրյալները նախաքննության փուլում որոշակի ժամկետով կալանավորված են եղել:

Դատարանում քննության ընթացքում կալանավորված եղել են մեղադրյալներից երկուսը: Ընդ որում՝ այս գործերից մեկով դատաքննության փուլում է խափանման միջոց փոխվել՝ խստացնելու միջոցով, քանի որ մեղադրյալը չէր ներկայանում նիստերի[66]:

Խափանման միջոցի ընտրությունը հիմնականում պայմանավորված է եղել մեղադրյալի կարգավիճակով (ժամկետային զինծառայող է, թե ավարտել է ծառայությունը և այլն):

> *Մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառված գործերից մեկով մեղադրյալը, հանդիսանալով պարտադիր զինծառայող, կոչումով շարքային, մի քանի դրվագով խախտումներ է թույլ տվել իր նկատմամբ պետ հանդիսացող, կրտսեր սերժանտ Հ.Խ.-ի նկատմամբ, վիճաբանել է վերջինիս հետ, հարվածել, մեկ այլ դրվագով՝ դիտողություն ստանալու պատճառով պարզաբանում պահանջել Հ.Խ.-ից, վիճաբանել, քաշքշել և ծեծի ենթարկել: Մեղադրյալը սույն գործով կալանքի տակ գտնվել է մեկ ամիս 19 օր, գործով կիրառվել է արագացված դատաքննություն, որով կայացված որոշմամբ լուծվել է նաև կալանքի հարցը՝ կալանավորումը փոփոխվել է և նրա նկատմամբ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը*[67]:
>
> *Կալանքի կիրառման մյուս գործով մեղադրյալը, հանդիսանալով կրտսեր սերժանտ, զինվորական պարտականությունները կատարելու հետ չկապված պատճառով վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող պայմանագրային զինծառայող Մ.Ս.-ի հետ, բռնություն գործադրել վերջինիս նկատմամբ, վերցրել մեկ այլ զինծառայողի ինքնաձիգը, լիցքավորել և մենահատ կրակոցներ արձակել դեպի օդ, այնուհետև բռնություն գործադրել և կրակոց արձակել Մ.Ս.-ի ոտքին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր վնասվածք: Սույն գործով մեղադրյալը ձերբակալությունից անմիջապես հետո կալանավորվել է մեկ ամիս ժամկետով: Կալանքի ժամկետը լրանալուց հետո վերջինիս նկատմամբ խափանման միջոց ընտրվել է բացակայելու արգելքը*[68]:
>
> *Մեկ այլ դեպքում երկու մեղադրյալների նկատմամբ նախ կիրառվել է կալանք 6 և 4 ամիս համապատասխանաբար, հետո փոխարինվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցով, հետո բացակայելու արգելքով: Այս գործով մեղադրյալ Ա.Ս.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, մարտական հերթապահություն կրելու ընթացքում, համածառայակից Ա.Ա.-ի օժանդակությամբ նույն գումարտակի պայմանագրային զինծառայող, շարքային Գ.Ա.-ի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, նրա անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով,*

[66] ՍԴ3/0014/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594108
[67] Նույն տեղում
[68] ՍԴ1/0176/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065629083

վերջինիս անզգուշությամբ հասցրել է ինքնասպանության: Բացի այդ, մեղադրյալները մարտական հենակետի ճաշարանում ծեծի են ենթարկել նույն մարտական հենակետում մարտական հերթապահության ընդգրկված պայմանագրային զինծառայող շարքային Ա.Ա.-ին՝ պատճառելով ֆիզիկական ցավ[69]:

Չորրորդ գործով նույնպես մեկ այլ զինծառայողին ինքնասպանության հասցնելու մեղադրանքով երկու մեղադրյալների նկատմամբ կիրառվել է կալանք: Մեղադրյալներից մեկի դեպքում այն երկարաձգվել է ևս 2 անգամ, այսինքն՝ նա կալանավորված է եղել վեց ամիս ժամկետով, իսկ մյուսը՝ 2 ամիս 9 օր, որը հետագայում փոխարինվել բացակայելու արգելքով[70]: Այս գործով ևս նշանակվել է ազատագրկման ձևով պատիժ:

Հինգերորդ գործով մեղադրյալ Ժ.Ն.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելով՝ որպես ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ, որպես դիրքի ավագ, հանդիսանալով պետ, սուրճ դնելու կապակցությամբ իրեն խաբելու համար, տվյալ մարտական դիրքի կացարանում վիրավորանք է հասցրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Ա.Հ.-ին և Ա.Մ.-ին՝ նվաստացնելով նրանց պատիվն ու արժանապատվությունը, ստիպել է վերջիններիս հանել համազգեստներն ու մերկանալ, որից հետո կացարանում ջուր է լցրել Ա.Հ.-ի վրա, իսկ Ա.Մ.-ի վրա ջուր լցնելով՝ նրան կիսամերկ վիճակում հագցրել է սաղավարտ ու զրահաբաճկոն և դուրս հանելով կացարանից, վերջինիս ստիպել է շուրջ 30 րոպե տևողությամբ մնալ դրսում: Դեպքը տեղի է ունեցել սեպտեմբերի 12-ի գիշերը: Բացի այդ, Ա.Ն.-ն ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ՝ արթուն հերթափոխում քնելու համար, նույն մարտական դիրքի կացարանում վիճաբանության մեջ է մտել շարքային Ա.Մ.-ի հետ, որի ընթացքում բռնություն գործադրելով իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Ա.Մ.-ի նկատմամբ՝ բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի պարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք, ինչպես նաև թքել է նրա վրա ու վերջինիս անվանել «Սրբապիղծ չ.-լախ»[71]: Այս գործով մեղադրյալը կալանավորված է եղել 1 ամիս 17 օր:

Ներկայացվածը ցույց է տալիս, որ նախաքննության և դատաքննության փուլերում կալանքը որպես խափանման միջոց կիրառվել է բացառիկ դեպքերում՝ հիմնականում ծանր հետևանքներ ունեցող, զենքի գործադրմամբ և բարձր հասարակական վտանգավորությամբ բնութագրվող հանցագործությունների դեպքում: Մնացյալ գործերով նախապատվություն է տրվել ավելի մեղմ խափանման միջոցների՝ բացակայելու արգելք, հրամանատարության հսկողության կամ չհեռանալու մասին ստորագրության կիրառմանը:

[69] ԳԴ5/0005/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228669823
[70] ԳԴ3/0070/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228675050
[71] ԳԴ3/0062/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228674558

Դիտարկված գործերից մեծամասնության դեպքում դատալեքսում հասանելի չէ խափանման միջոցի ընտրության առնչությամբ կայացված որոշումը և կողմերի դիրքորոշումները, քանի որ ոչ բոլոր դատական կազմերն են տեղադրել խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումները:

V. ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Դիտարկված 51 դատական գործերով՝ 81 մեղադրյալի նկատմամբ դատարանի կողմից կայացվել են հետևյալ դատական ակտերը՝

- 52 մեղադրյալ մեղավոր է ճանաչվել.
- 29 գործով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում է կայացվել (կարճվել է):

Գծապատկեր 10. Գործով դատական ակտը.



5.1 Քրեական գործով վարույթի կարճելը

Դիտարկված գործերից 29 մեղադրյալի քրեական հետապնդումը դադարեցվել է: Մասնավորապես՝ 17 դեպքում՝ կողմերի հաշտության հիմքով, 5-ը՝ վաղեմության ժամկետի անցման, 4-ը՝ գործուն զղջալու, իսկ 3-ը՝ մեղադրյալի մահվան հիմքով:

Գծապատկեր 11. *Քրեական գործով վարույթի կարճելը՝ ըստ հիմքերի.*



Այս առումով հարցված մասնագետներից ոմանք նշել են, որ կարճված գործերի քանակի և բնույթի, կարճման հիմքերի վերլուծություն չի իրականացվում, դրա պատճառով էլ խախտումները կրկնվում են և մնում չբացահայտված: Նշված պնդումը հաստատվում է ՀՀ զինվորական դատախազությունից ստացված տեղեկություններով: Այդպես, ի պատասխան ԻՊԱՍ-ի հարցմանն առ այն, թե *քանի քրեական վարույթով է նախաքննությունն ավարտվել քրեական վարույթի կարճմամբ՝ ըստ վերոգրյալ հանցագործությունների և ի՞նչ հիմքով* և *քանի՞ քրեական վարույթով է քրեական հետապնդումը դադարեցվել՝ ըստ վերոգրյալ հանցագործությունների, քանի՞ անձի նկատմամբ և ի՞նչ հիմքով, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունը պատասխանել է, որ նման ձևաչափով վիճակագրություն չեն վարում*[72]*:*

5.1.1 Քրեական գործով վարույթ կարճելը կողմերի հաշտության հիմքով

Դիտարկված գործերով դատարանի կողմից կողմերի միջև հաշտության հիման վրա 17 (21%) մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Այս դեպքերով 10 տուժող եղել է մեղադրյալի ստորադասը:

Բոլոր գործերով դատարանը նշել է վճռում, որ հաշտության գալը ազատ կամարտահայտության արդյունք է: Այս առումով պետք է նշել, որ միայն դատալեքսում հրապարակված տվյալների հիման վրա հնարավոր չէ գնահատել, թե արդյոք կամարտահայտության ազատ լինելը խորացված, պատշաճ եղանակով է ստուգվել, հատկապես հաշվի առնելով ենթակայության հարցերը, թե դա կրել է ձևական բնույթ, և կողմերի հայտարարությունը բավարար է եղել:

Հիմնականում մեղադրողը չի առարկել հաշտության հիմքով գործի կարճմանը, բացառությամբ երկու գործերի:

[72] ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության 19-ԵԳ 1288-26 առ 25.02.2026թ. գրություն

Մեղադրողը մի դեպքում առարկել է՝ պնդելով, որ մեղադրյալը նախկինում արդեն օգտվել է հաշտության մեխանիզմից, իսկ մյուս դեպքում՝ նախկինում դատապարված է եղել: Երկու դեպքում էլ դատարանը չի կիսել մեղադրողի մեկնաբանությունը, թե որ պահը պետք է հաշվի առնել՝ որոշելու, թե արդյոք նախկինում անձը ենթարկվել է քրեական պատասխանատվության կամ դատապարտված է եղել՝ գտնելով, որ խոսքը գնում է հանցավոր արարքը կատարելու պահի մասին:

Այդպես, գործերից մեկով մեղադրողը մասնավորապես նշել է, որ մեղադրյալի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, և նման պայմաններում վերջինիս նկատմամբ կիրառելի չէ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու օրենսդրական նորմը, քանի որ, ըստ էության, մեղադրյալը չի համարվում առաջին անգամ հանցանք կատարած անձ: Ի պատասխան, դատարանը նշել է, որ հանցանքը կատարելու պահի դրությամբ մեղադրյալը համարվել է առաջին անգամ հանցանք կատարած անձ, քանի որ սույն քրեական վարույթով հանցանքը (արարքը) կատարելու պահին (2024 թվականի հունվարի 26-ին) վերջինս չի ունեցել դատվածություն (այլ գործով վճիռը կայացվել է ավելի ուշ, բայց մինչև սույն գործով որոշում կայացնելը): Դատարանն ընդգծել է, որ հանցանք կատարելու ժամանակ է համարվում հենց արարքը կատարելու պահը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում նշվում է առաջին անգամ հանցանք կատարել հասկացությունը, ինչը ենթադրում է, որ առաջին անգամը վերաբերվում է հանցանքին[73]*:*

Մյուս գործով մեղադրյալը մեղադրվել է մեկ այլ զինծառայողի՝ Հ.Պ.-ի կողմից իր և այլ զինծառայողի հասցեին սեռական բնույթի հայհոյանք տալու առիթով 2-3 անգամ բռունցքներով հարվածներ հասցնելու եղանակով բռնություն գործադրելու մեջ: Նախաքննության փուլում նույն մեղադրյալին վերագրվել է նաև մեկ այլ զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը, սակայն այդ դրվագով նիստից մի քանի ամիս առաջ վարույթը կարճվել է՝ հաշտության հիմքով: Այս հիմքով էլ հենց մեղադրողն առարկել է արդեն դատարանում քննվող գործով հաշտության հիմքով վարույթը կարճելու միջնորդության դեմ: Այդ առումով դատարանը նշել է, որ այդ խրախուսական նորմից օգտվելու արգելքը կախված է «նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձ» հասկացության մեկնաբանությունից: Օրենսդիրը չի հստակեցրել՝ «նախկինում» ժամանակային միավորը բնութագրող եզրույթը՝ ո՞ր պահի դրությամբ պետք է հաշվարկել: Դատարանն ընդունելի և հիմնավորված է համարել «նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձ» հասկացության մեկնաբանումը ենթադրյալ հանցանքի կատարման պահի (որի կապակցությամբ քննարկվում է խրախուսական նորմի կիրառելիությունը) հաշվառմամբ իրականացնելը: Ըստ դատարանի՝ «նախկինում» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել հանցանքների

[73] ՏԴ/0216/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321792880: Այս հարցով դատախազը վերաքննիչ բողոք է բերել՝ վիճարկելով առաջին ատյանի դատարանի մեկնաբանությունը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի ատարանը ճիշտ է մեկնաբանել այդ նորմը

կատարման և իրավասու մարմնի կողմից համապատասխան որոշման կայացման ժամանակագրական պարզ հաջորդականության հաշվառմամբ, քանի որ դա կբովանդակի քննարկվող նորմի իրախուսական բնույթը (հանցանք կատարած անձին քննարկվող հիմքի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու միջոցով վերջինիս իրավահպատակ վարքագծի ապահովումը և նրա հետագա հանցավոր վարքագծի կանխումը): Այս դեպքում դատարանը նշել է, որ ըստ մեղադրյալին ներկայացված մեղադրանքի՝ վերջինս իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով վերագրվող արարքը կատարել է 2024 թվականի փետրվարի 11-ին, իսկ տուժողի հետ հաշտության հիմքով նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2024 թվականի փետրվարի 29-ին, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերագրվող արարքի կատարումը ոչ թե հաջորդել է, այլ նախորդել է տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուն, ուստի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նրան վերագրվող արարքի կատարման պահին մեղադրյալը նախկինում նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված չի եղել[74]:

Վերաքննիչ բողոքում դատախազը նշել է, որ *«նախկինում քրեական պատասխանատվությունից ազատված անձ»* հասկացությունը ևս պետք է հասկանալ իրավասու մարմնի կողմից համապատասխան վարութային ակտը կայացնելու պահին նախորդող ժամանակահատվածում անձի քրեական պատասխանատվությունից ազատված չլինելը: Ըստ դատախազի՝ մեղադրյալը կատարել է հանցանք հանցագործությունների համակցությամբ, սակայն դրանք քննվել են տարբեր քրեական վարույթների շրջանակներում: Նախաքննության ընթացքում հսկող դատախազը, պահպանելով անմեղության կանխավարկածը, մեղադրյալի կատարած արարքներից ժամանակագրական առումով նախորդը՝ 08.09.2023թ.-ին կատարածը, դիտել է որպես վերջինիս կողմից առաջին անգամ կատարած արարք և ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի ուժով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցել: Մինչդեռ հանցագործությունների համակցությունը կազմող մյուս արարքի՝ 11.02.2024թ.-ին կատարածի մասով, քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան: Ավելին, դատարանը իր վարութային ակտով, ըստ էության, հաստատված է համարել, որ մեղադրյալը 11.02.2024թ.-ին հանցանք է կատարել, իսկ մինչդատական վարույթում իրավասու մարմնի կողմից անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ակտով, ըստ էության, հաստատված է համարվել, որ մեղադրյալը 08.09.2023թ.-ին է հանցանք կատարել: Ստացվում է մի իրավիճակ, որ անձը հանցագործությունների համակցությամբ, ընդ որում՝ պատմական տարբեր իրադարձություններ ընդգրկող ռեալ համակցությամբ կատարված արարքների համար ազատվել է քրեական պատասխանատվությունից տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով:

[74] ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արգելքը վերաբերում է այն դեպքերին, երբ անձն իրեն մեղսագրվող արարքը կատարելու պահին արդեն իսկ նույն հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից, սակայն տվյալ պարագայում մեղադրյալը իրեն մեղսագրվող արարքը կատարելու պահին նախկինում նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված չի եղել:

Գործերից մեկով դատարանը մերժել է հաշտության հիմքով հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունը: Որպես մերժման հիմնավորում դատարանը նշել է, որ անդրադառնալով հաշտության իրավաչափության վերոնշյալ պայմանների առկայությանը, գործի փաստական տվյալները համադրելով վերաբերելի իրավական նորմերի հետ՝ դատարանը փաստում է, որ Ռ.Խ.-ի և Մ.Մ.-ի հաշտությունը սույն քրեական գործով տեղի է ունեցել: Մինչդեռ, 2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված բոլոր պայմանների առկայությունն ինքնին իմպերատիվ կերպով դատարանի համար պարտավորություն չի սահմանում կոնկրետ անձի նկատմամբ այդ հիմքով դադարեցնել քրեական հետապնդումը, այսինքն՝ նման լիազորությունը հայեցողական է, և այդ համոզման դատարանը կարող է գալ այս կամ այն հանգամանքների հետազոտման արդյունքում: Սույն գործով, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, նկատի ունենալով Մ.Մ.-ի արարքի հանրային վտանգավորության բնույթը, հանցագործության նպատակը և շարժառիթը, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը, ինչպես նաև նրա արարքի հանրային վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, դատարանը գտել է, որ ամբաստանյալ Մ.Մ.-ն ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի, հետևաբար՝ պաշտպան Յու.Դ.-ի միջնորդությունը ենթակա է մերժման: Միևնույն ժամանակ այս գործով կիրառվել է արագացված վարույթ, իսկ ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ և նրան նշանակվել է երեք ամսվա ազատազրկման ձևով պատիժ, որը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով մեկ տարվա փորձաշրջան[75]:

➢ *Քրեական հետապնդում դադարեցնելը մեղադրյալի մահվան հիմքով*

Ուսումնասիրված գործերից 3 դեպքում մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է մեղադրյալի մահվան հիմքով: Երեք դեպքում էլ մեղադրյալները զոհվել են Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծած 44-օրյա պատերազմի ժամանակ: Նշված գործերով մեղադրյալներին վերագրվել է ՀՀ

[75] ՍԴ3/0020/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594299

քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով թույլ տրված մի քանի դրվագով ենթադրյալ հանցագործություններ /ստորադասների ծեծ, սպառնալիք, նվաստացում՝ թքել զինվորականի վրա, ածելիով մաքրել ունքը և այլն/:

➢ *Քրեական գործով վարույթ կարճելը օրենսդրական ժամկետների խախտման հիմքով*

Հինգ մեղադրյալի դեպքում քրեական հետապնդումը դադարեցվել և վարույթը կարճվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական օրենսդրությամբ սահմանված ժամկետները խախտելու հիմքով: Հատկանշական է, որ հինգից երեքը նույն գործով էին ներգրավված:

Գործերից մեկով դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից բաց են թողնվել քրեական հետապնդման 5-ամսյա ժամկետը: Այս գործով հանրային քրեական հետապնդումը հարուցվել է բավականին ուշացումով, այնուհետև քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է: Դատարանը գտել է, որ Ա.Ս.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով, այն է՝ լրացել է սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան: Դատարանն արձանագրել է, որ վարույթ իրականացնող մարմինը ցուցաբերել է անգործություն, որը գնահատել է որպես ոչ միայն օրենսդրական պահանջների խախտում, այլև՝ արդարադատությունից խուսափելու օժանդակություն: Վերոնշյալ գործով բռնությունը գործադրվել է վերադաս հրամանատարի կողմից, կոչումով՝ գնդապետ, ով ֆիզիկական պատրաստությանը չմասնակցելու շուրջ առաջացած խոսակցության ընթացքում վիճաբանության մեջ է մտել իր ստորադասի նկատմամբ և ծեծի ենթարկել վերջինիս[76]*:*

Մյուս գործով ինքնասպանությամբ ավարտված զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ մեղադրվող երեք մեղադրյալները ազատվել են քրեական պատասխանատվությունից, քանի որ գործով քննությունը այնքան երկար է տևել, այդ թվում՝ 5 դատավոր է փոխվել, որ լրացել է օրենքով սահմանված ժամկետը: Այս գործով թեև առերևույթ առկա էին խոշտանգման հանցակազմի տարրեր, քննությունը այսպես չի դիտարկել հարցը, դատարանն էլ չի քննարկել, թե արդյոք արարքը ճիշտ է որակված ու արդյոք կիրառելի է վաղեմության ժամկետը[77]:

Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել առաջին ատյանի որոշումը: Երիտասարդ մեղադրյալների նկատմամբ գործող քրեական օրենսգրքում ամրագրված նորմի կիրառելիության մասով Վերաքննիչ դատարանը մասնավորապես նշել է.

[76] ԱՐԴ/0587/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786264598
[77] ՍԴ1/0001/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065593922

«Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից մեջբերված այն դիտարկմանը, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածով, անդրադառնալով 18-ից մինչև 21 տարեկան հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետների կրճատմանը, հղում է տվել հենց նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետներին, ուստի այդ կարգավորումը վերաբերելի է միայն գործող օրենսգրքին, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ այդ ձևակերպումը զուտ օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ընդհանուր ժամկետներին հղում կատարելու համար է արված և օրենսդրական ձևակերպման հարց է, ուստի դա չպետք է մեկնաբանվի այնպես, որ օրենսդիրը «սույն օրենսգրքի» ձևակերպմամբ արգելք է սահմանել նախկին օրենսգրքի գործողության պայմաններում հանցանք կատարած անձանց նկատմամբ այդ կանոնը կիրառելու համար։»

➢ *Գործի կարճումը գործուն զղջալու հիմքով*

ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանում է գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու հիմքը, եթե՝

- անձն առաջին անգամ է հանցանք կատարել,
- եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և
- նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ,
- չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը,
- վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Իսկ եթե անձի՝ առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

2003թ. քրեական օրենսգրքով նախատեսված կարգավորումների համաձայն՝ անձը կարող էր ազատվել պատասխանատվությունից գործուն զղջալու հիմքով, եթե առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք էր ու եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Դիտարկված գործերից 4 մեղադրյալի նկատմամբ հետապնդումը դադարեցվել է գործուն զղջալու հիմքով:

Գործերից մեկով Դ.Լ.-ն, լինելով պարտադիր ժամկետային զինծառայող և կոչումով շարքային, զորամասի սպայական սենյակում իր մոտ պահել է չթույլատրված տեսակի բջջային հեռախոս: Երբ դասակի հրամանատար, կրտսեր սերժանտ Ռ.Հ.-ն պահանջել է նրանից գրել բացատրագիր այդ խախտման համար, Դ. Լ.-ն դրա փոխարեն հայհոյել է իր նկատմամբ պետ հանդիսացող սերժանտին: Դրանից հետո նրանց միջև առաջացել է վիճաբանություն, որի ընթացքում փոխադարձ բռնություն է գործադրվել: Երկու մեղադրյալների դեպքում էլ հետապնդումը դադարեցվել է գործուն զղջալու հիմքով: Դատարանն արձանագրել է, որ մեղադրյալները գործուն աջակցություն են ցուցաբերել վարույթն իրականացնող մարմնին գործի համար կարևոր հանգամանքները պարզելու ուղղությամբ, որը դրսևորվել է քննության առաջին իսկ պահից խոստովանական բացատրություն ու ցուցմունքներ տալով, առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր ճանաչելով: Դատարանը նաև նշել է միմյանց նկատմամբ բողոք ու պահանջ չունենալը, ինչպես նաև հանցագործությունը կատարելուց հետո դրսևորած դրական վարքագիծը[78]:

Հատկանշական է, որ 2003թ. օրենսգրքով քննվող գործերից մեկով այդ հիմքով գործը կարճելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է այն հիմքով, որ գործում առկա չէ ապացույց առ այն, որ ամբաստանյալը մեղայականով ներկայացել է և տեղեկացրել տեղի ունեցած միջադեպի մասին, թեև պաշտպանն իր խոսքում դա պնդել է[79]:

5.2 Արագացված վարույթի կիրառում

Քրեական դատավարության օրենսգիրքը մանրամասն կարգավորել է արագացված վարույթ կիրառելու կարգը, պայմաններն ու հիմքերը: Օրենսդրական կարգավորումների համաձայն՝ Դատարանը արագացված վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատալսումների ընթացքում՝ մեղադրյալի միջնորդության հիման վրա: Արագացված վարույթ չի կարող կիրառվել, եթե՝

1) մեղադրյալը մեղադրվում է առանձնապես ծանր հանցանք կատարելու համար.

2) վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալից առնվազն մեկն առարկում է արագացված վարույթ կիրառելու դեմ.

3) մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու.

[78] ՍԴ3/0019/01/20, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065594297
[79] ՍԴ3/0020/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594299

4) արագացված վարույթ կիրառելու դեմ փաստարկված առարկում է հանրային մեղադրողը կամ տուժողը (հոդված **464.1**):

Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննարկում է նախնական դատալսումների ընթացքում՝ մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի պարտադիր մասնակցությամբ: Դատարանը միջոցներ է ձեռնարկում արագացված վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ տուժողի կարծիքը պարզելու համար (հոդված **464.2**):

Միջնորդությունը քննարկելիս դատարանը մեղադրյալին հարցնում է, թե արդյոք նրան պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք նա խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արդյոք արագացված վարույթ կիրառելու հետևանքները (Հոդված **464.1-464.2**):

Արագացված վարույթի արդյունքով դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով այս կարգի նախատեսված առանձնահատկությունները (Հոդված **464.4**):

Հարկ է նշել, որ 1998թ. Քրեական դատավարության օրենսգրքով նույնպես սահմանված էր արագացված վարույթի մեխանիզմ, սակայն այն չեղյալ համարվեց 2021թ. մայիսին ընդունված փոփոխություններով, և փոխարենը սահմանվեց համաձայնեցման վարույթ[80]:

1998թ. ՔԴՕ-ով նախատեսված և ներկայումս կիրառվող արագացված կարգի հիմնական փոփոխությունները վերաբերում են տուժողի փաստարկված առարկության դերին, մերժման հիմքերին, ինչպես նաև նշանակվող պատժի կանոններին:

Ի տարբերություն 1998թ. քրեական դատավարության օրենսգրքի, որը դատարանին վերապահում էր հայեցողություն՝ մերժելու արագացված կարգով անցնելու վերաբերյալ միջնորդությունը, եթե տուժողը փաստարկված առարկում է, ապա այժմ դա արագացված կարգով քննություն անցկացնելու մերժման հիմք է: Ավելին՝ ամրագրվել է դատարանի կողմից տուժողի՝ արագացված վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ կարծիքը պարզելու համար միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Մերժման հիմքերին ավելացել է այն դեպքը, երբ մեղադրյալին մեղսագրվող արարքն ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ, և հստակեցվել է իրավական գնահատականի՝ մեղադրանքի

[80] Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-200-Ն ՀՀ օրենք, ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել *ուժի մեջ կմտնի 27.07.21թ.*, հասանելի է https://www.arlis.am/hy/acts/153064

փաստական հանգամանքներին անհամապատասխանության ակնհայտ լինելու անհրաժեշտությունը:

Ներկայումս գործող կարգավորման համաձայն՝ պատիժը չի կարող գերազանցել սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափի կամ ժամկետի ¾-ը՝ նախկինում սահմանված ⅔-ի փոխարեն:

Ինչպես նշվեց, 81 մեղադրյալների մեծամասնության նկատմամբ՝ **43**-ի (53%) դեպքում կիրառվել է արագացված, իսկ **4** մեղադրյալի՝ համաձայնեցման վարույթ:

Սույն հետազոտության շրջանակում քննարկվող բոլոր հանցատեսակներով թույլատրելի է արագացված կարգի կիրառումը /բացառությամբ ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում զինծառայողին ինքնասպանության հասցնելու հանցակազմից և զինծառայողին ինքնասպանության հասցնելու որակյալ հանցակազմերից/:

Դիտարկված գործերից ոչ մեկով արագացված կարգով գործի քննություն իրականացնելու միջնորդությունը չի մերժվել:

Հարկ է նշել, որ Օրենսգիրքը պահանջում է տուժողի կողմից փաստարկված առարկություն: Թեև «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված է, որ զինծառայող-տուժողները իրավունք ունեն անվճար իրավաբանական օգնությունից օգտվել Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից, գործնականում այդ երաշխիքը արդյունավետ չէ: Քրեական գործերով հանրային պաշտպանները գերծանրաբեռնված են, մարզերում նրանց թիվը բավարար չէ, իսկ եթե առկա է շահերի բախում մեղադրյալների, տուժողների միջև, ապա խնդիրն ավելի է բարդանում: Արդյունքում տեսնում ենք, որ տուժողները գործնականում հազվադեպ են առարկում, մեղադրյալները խրախուսվում են արագացված վարույթով ավարտել գործը, իսկ գործի հանգամանքները մնում են չուսումնասիրված:

Դիտարկված գործերով, ըստ դատալեքսում առկա տվյալների, ընթացակարգը պահպանվել է. նախնական նիստին մեղադրյալները միջնորդել են արագացված կարգով գործի քննությունը իրականացնել, ըստ վճռում արտացոլված տվյալների՝ նշել են, որ գիտակցում են հետևանքները, խորհրդակցել են պաշտպանի հետ և այլն:

Այս կարգով գործի քննության դեպքում բոլոր մեղադրյալներն ունեցել են պաշտպան, որոնցից առնվազն 15-ը եղել են մասնավոր:

Արագացված վարույթի կիրառումը թեև սահմանված է օրենքով, զինված ուժերում ծառայողների կողմից/նկատմամբ գործադրված բռնության գործերով ունի առանձնահատկություն: Գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արագացված վարույթի կիրառումը հիմնական մեխանիզմն է, եթե քրեական հետապնդումը

դադարեցնելու հիմքով հնարավոր չէ կարճել վարույթը: Ավելին՝ անգամ եթե նշանակվում է երկարաժամկետ ազատազրկում, այն պայմանականորեն չի կիրառվում՝ փոխարինվելով փորձաշրջանով: Նման դեպքում թեև մեղադրյալը պնդում է, որ հետևանքները հասկանալի են, կարելի է եզրահանգել, որ նա նկատի ունի իրական պատժից խուսափելը, այլ ոչ թե դատապարտված լինելը: Ավելին՝ նման մոտեցման լայնածավալ կիրառումը թույլ չի տալիս իրականում պարզել գործի բոլոր հանգամանքները՝ հասկանալու, թե արդյոք արարքը ճիշտ է որակվել, հատկապես միջազգային պարտավորությունների ներքո:

Ավելին՝ չի ծառայում նաև որպես կանխարգելիչ միջոց այլ զինծառայողների համար:

- ***Տուժողի մասնակցությունը արագացված վարույթ կիրառելու միջնորդության քննությանը***

Ինչպես արդեն նշվեց, գործող քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ դատարանը միջոցներ է ձեռնարկում արագացված վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ տուժողի կարծիքը պարզելու համար:

Արագացված վարույթով քննված մի շարք գործերով միջնորդության քննությանը տուժողը չի մասնակցել և դիրքորոշում չի հայտնել, իսկ դատարանը կիրառել է արագացված վարույթ[81], ուստի հարկ է անդրադառնալ «միջոցներ ձեռնարկելու» պարտավորությունը իրացնելու ակնկալվող ջանասիրության ծավալին:

Որոշ դեպքերում տուժողները արագացված վարույթի կիրառման վերաբերյալ դիրքորոշումը հայտնել են հեռախոսազանգի միջոցով, հետագայում նրանցից մի մասը ներկայացրել են նաև գրավոր դիմում, սակայն պարզ չէ դիրքորոշման հիմքում ընկած հանգամանքներն ու տուժողների կողմից այդ վարույթի բնույթի գիտակցումը[82]:

Ավելին, որոշ գործերով դատարանը բավարարվել է միայն արձանագրելով, որ պատշաճ ծանուցված տուժողը չի ներկայացել նախնական նիստերին, ուստի դատարանը համարել է իր պարտավորությունը կատարած:

Այդպես, դատական ակտով անդրադառնալով քննարկվող հարցի վերաբերյալ տուժողի դիրքորոշմանը՝ դատարանը նշել է, որ իր կողմից «ապահովվել է նշված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու՝ տուժողի իրավունքի իրականացման պատշաճ և իրական հնարավորությունը, սակայն վերջինս, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի մասին, չի ներկայացել նախնական դատալսումներին և չի հայտնել իր չներկայանալու պատճառների մասին՝ դրանով իսկ չիրացնելով նշված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու իրավունքը»[83]:

[81] Տե՛ս, օրինակ՝ ՍԴ3/0158/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065631112
[82] ՍԴ3/0029/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065630238
[83] ՍԴ/0101/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065630442

Այս առնչությամբ առկա է մտահոգություն, որ քրեական գործերի քննության ընթացքում արագացված վարույթի լայնածավալ կիրառումը կարող է չապահովել կատարված արարքի էության, պատճառների և հետևանքների լիարժեք բացահայտում, ինչպես նաև պատժի անհատականացման անհրաժեշտ մակարդակը: Քանի որ հիմնականում նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում, նման մոտեցումը նվազեցնում է քրեական պատասխանատվության կանխարգելիչ և դաստիարակչական ազդեցությունը, ինչի հետևանքով չի ձևավորվում իրավախախտման անթույլատրելիության գիտակցում, ինչը իր հերթին կարող է նպաստել կրկնահանցագործության ռիսկի աճին:

Արագացված կարգի առնչությամբ փաստաբանների և դատախազական համակարգի ներկայացուցիչների կարծիքները հաճախ իրար հակասում են: Դատախազական ոլորտի ներկայացուցիչները արագացված կարգի կիրառման առնչությամբ խնդիրներ չեն արձանագրել: Սակայն ուսումնասիրության ընթացքում առանձնազրույցներին մասնակցած փաստաբանները, կարևորելով հանդերձ արագացված վարույթների գոյությունը, բարձրացրել են դրա հետ կապված մի շարք խնդիրներ: Մասնավորապես այն, որ հաճախ քրեական նման գործերով արագացված կարգ կիրառելով՝ դիտավորության գործոնը պատշաճ չի քննարկվում և նման հարցերը մնում են չպարզված, ինչը բացասաբար է անդրադառնում պրակտիկայի ձևավորման վրա: Այս առումով առանձնակի շեշտադրվել է հատկապես վատ վերաբերմունքի գործերով արագացված կարգի կիրառման խնդիրը, քանի որ նման դեպքերում արագացված վարույթը կոծկում է դեպքի իրական պատճառներն ու կա վտանգ, որ դեպքի իրական հանգամանքները, զինծառայողի կրած նվաստացումները չեն երևում և չեն քննվում, իսկ նշանակված պատիժը միշտ չէ, որ համարժեք է լինում արարքին:

Քննության հետ կապված նշվել է նաև նախաքննության և դատաքննության փուլերում դեպքի առնչությամբ ստացվող տվյալների հակասությունների մասին: Հատկապես սպանությունների և ինքնասպանությունների պարագայում շատ ավելի բարդություններ են ի հայտ գալիս, քանի որ վրա են հասնում նաև իրավական որակման լրջագույն խնդիրներ: Ինչպես վատ վերաբերմունքի, այնպես էլ մահվան դեպքերով մյուս զինծառայողներից տեղեկություն/ցուցմունք ստանալը բարդ է լինում:

Սովորաբար նախաքննության վաղ փուլում ինքնաբուխ ձևով ավելի բաց են լինում, քանի որ դեպքը նոր է եղել, անարդարության զգացողությունը դեռ թարմ է: Բայց պատկերը փոխվում է դատաքննության փուլում, հատկապես երբ երկար ժամանակ է անցնում, մոտիվացիան է փոխվում, այլ հարցեր են առաջ գալիս, փաստաբանները նույնպես իրենց դերն ունեն այս հարցում, քանի որ այս կամ այն ձևով կարող են ազդել ճշմարտության բացահայտման վրա:

Հարցված մասնագետ

Համանման վիճակներում այլ զինծառայողներ տեսնում են, որ լուծումը այլ է, հանգամանքները չեն պարզվում, և դատարանում շատ բան կարող է փոխվել, ըստ այդմ իրենց վարքագիծը նույնպես փոխում են:

Հարցված մասնագետ

Քննության ընթացքում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի տուժողներին և նրանց ընտանիքներին, ինչը ոչ միշտ է ապահովվում: Որպես օրինակ ներկայացվել է այն հանգամանքը, որ ինքնասպանության դեպքերով ծնողները հաճախ չեն հավատում դեպքին և կարծում են, որ դա կոծկված սպանություն է:

Ծնողները ոչ միշտ է, որ ճանաչում են իրենց զավակների արտաքին կերպարը, անկարողությունների չափը, և սովորաբար ավելի ուժեղ են պատկերացնում իրենց զավակներին, վերջիններս էլ փորձում են իրենց խնդիրները թաքցնել: Եվ միակ վարկածը, որ կարող է մնալ, դա սպանության վարկածն է:

Հարցված մասնագետ

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ դիտարկված բոլոր գործերով, բացի երեքից, որոնցից երկու գործով ինքնասպանության հասցնելու դեպք էր, գործի քննություն ընդհանուր կարգով տեղի չի ունեցել: Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ արագացված վարույթի կիրառումը գործնականում հաճախ կապվում է իրական պատժից խուսափելու հնարավորության հետ: Շատ դեպքերում մեղադրյալների նկատմամբ նշանակվել է փորձաշրջան, ինչի հետևանքով մեղադրյալների հիմնական մոտիվացիան, ըստ էության, դառնում է ոչ թե գործի հանգամանքների պարզաբանումը, այլ վարույթի արագ ավարտը և ազատազրկումից խուսափելը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև արագացված վարույթը նախատեսված է դատավարական արդյունավետությունն ապահովելու նպատակով, դրա լայնածավալ կիրառումը զինվորական գործերով առաջացնում է մի շարք համակարգային խնդիրներ: Մասնավորապես, նման վարույթների պայմաններում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի և լիարժեք ուսումնասիրությունը սահմանափակվում է, ինչը հատկապես խնդրահարույց է բռնության, նվաստացման կամ հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի պարագայում:

Հատկանշական է, որ արագացված վարույթի կիրառման պայմաններում տուժողների մասնակցությունը հաճախ կրել է ձևական բնույթ: Թեև օրենքը նախատեսում է դատարանի պարտականությունը՝ միջոցներ ձեռնարկելու տուժողի կարծիքը պարզելու համար, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում դատարանները բավարար են համարել միայն տուժողի պատշաճ ծանուցված լինելը կամ հեռախոսազանգով ստացված դիրքորոշումը: Այս խնդիրը առավել զգայուն է զինվորական ծառայության համատեքստում, որտեղ ենթակայական հարաբերությունները, ծառայողական կախվածությունը և ճնշման հնարավոր ռիսկերը կարող են էական ազդեցություն ունենալ տուժողների վարքագծի և դիրքորոշման վրա: Գործնականում անվճար իրավաբանական օգնության համակարգի սահմանափակ արդյունավետությունը

ևս նվազեցնում է տուժողների իրավունքների իրական պաշտպանության հնարավորությունը:

Առանձնակի մտահոգիչ է այն, որ նման գործերով ընդհանուր կարգով դատաքննությունը դարձել է բացառություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործընթացի բոլոր մասնակիցները՝ մեղադրյալները, պաշտպանները, մեղադրող կողմը և երբեմն նաև դատարանը, գործնականում շահագրգռված են վարույթի արագ ավարտով: Այս պայմաններում քրեական արդարադատությունը առավելապես ուղղված է դառնում գործերի ֆորմալ ավարտին, այլ ոչ թե դեպքերի պատճառների, համակարգային խնդիրների և պատասխանատվության ամբողջական բացահայտմանը:

Դիտարկման արդյունքները ցույց տվեցին արագացված և համաձայնեցված վարույթների լայն կիրառություն: Թեև այս ընթացակարգերը նպաստում են դատավարական արդյունավետության բարձրացմանը, դրանց հաճախակի կիրառումը կարող է սահմանափակել զինվորական միջավայրում բռնության դեպքերի առավել համապարփակ դատական քննության հնարավորությունները, ներառյալ բռնությունների համակարգային դրսևորումները, ինստիտուցիոնալ թերությունները, հրամանատարական վերահսկողության բացթողումները, ինչպես նաև այն գործոնները, որոնք կարևոր նշանակություն ունեն նման դեպքերի կանխարգելման տեսանկյունից:

VI. ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԻԺ

Այն դեպքերում երբ մեղադրյալները մեղավոր են ճանաչվել, դատարանը հիմնականում նշանակել է ազատազրկման ձևով պատիժ, որը փոխարինվել է փորձաշրջանով: Այդպես, **52** դեպքից՝

- 2 մեղադրյալի նկատմամբ կիրառվել է պատիժ զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով՝ որոշակի ժամկետով դրամական բավարարման գումարից 5 կամ 10 տոկոսի պահումով[84],
- **մեկ** դեպքում մեղավոր է ճանաչել, բայց պատիժ չի նշանակել[85], քանի որ մեղադրյալն ու տուժողը հաշտվել են,
- **4** մեղադրյալի նկատմամբ նշանակվել է ռեալ ազատազրկում (ինքնասպանության հասցնելու գործերով),
- մնացյալ **45** մեղադրյալի դեպքում նշանակվել է փորձաշրջան:

Գծապատկեր 12. Մեղավոր ճանաչված մեղադրյալներին նշանակված պատիժը.

[84] ՏԴ/0002/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=32369622321760590; ԳԴ/0490/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228678042
[85] ՍԴ3/0075/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065630469



Նշանակված պատիժը տատանվել է 15 օր կալանքից մինչև 8 տարի ազատազրկում, իսկ դրանց փոխարեն նշանակված փորձաշրջանը՝ 1-ից 4 տարի:

Այս առումով արձանագրվել է, որ փորձաշրջանի տևողությունը չի հիմնավորվել: Օրինակ՝ նույն տևողությամբ՝ մեկ տարի փորձաշրջան նշանակվել է և՛ 15 օր կալանք, և 4 տարի ազատազրկման փոխարեն:

Ռ.Խ.-ին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 3 մասի 4–րդ կետով նախատեսված հանցանքում և դատապարտել ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն՝ Ռ.Խ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան 1 /մեկ/ տարի ժամկետով[86]:

Մ.Մ.-ին ճանաչել է մեղավոր *ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ և նրան նշանակել է երեք ամսվա ազատազրկման պատիժ: Միևնույն ժամանակ, կիրառելով ՀՀ ՔՕ 70-րդ հոդվածը, դատարանը որոշել է պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով մեկ տարվա փորձաշրջան[87]:*

Ս.Ս.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ կապված բռնություն գործադրելու հետ: Դատարանը նրան նշանակել է 15 օր կալանք, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն, պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է 1 տարվա փորձաշրջան[88]:

Միևնույն ժամանակ փորձաշրջան է կիրառվել անգամ ութ տարի ազատազրկում պատիժ նշանակելու դեպքում:

[86] ԵԴ/0055/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204010422
[87] ՍԴ3/0020/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594299
[88] ՍԴ3/0031/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065594818

Մեղադրյալը, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, հայտարարված ռազմական դրության ժամանակ, ալկոհոլի ազդեցության տակ վիճաբանել է մի քանի զինծառայողների, այդ թվում՝ վերադասի հետ, կիրառել է բռնություն: Նախ, արված կատակը դուր չգալու պատճառով արմունկով մեկ անգամ հարվածել է ավագ, ենթասպա Հ.Ա.-ի դեմքի հատվածին, որի արդյունքում վերջինս վայր է ընկել և գլորվել: Նույն օրը մեկ այլ համածառայակցի հետ վիճաբանելու արդյունքում ձեռքով հարվածել է նրա գլխի հատվածին, ինչի արդյունքում վերջինս վայր է ընկել, գլխով հարվածել է գետնին: Նույն օրը քննությամբ դեռևս չհայտնաբերված սուր ծակող-կտրող առարկայով թվով 2 հարվածներ է հասցրել վիճաբանությունը դադարեցնելու նպատակով նույն վայրում գտնվող կոչման բերումով իր նկատմամբ պետ հանդիսացող, կրտսեր սերժանտ Բ.Ա.-ի մարմնի տարբեր հատվածներին: Տուժողները և մեղադրողը չեն առարկել արագացված վարույթ կիրառելու դեմ[89]: Վճռից պարզ է դառնում, որ մեղադրյալը այլևս չի ծառայում զինված ուժերում:

Դատարանը նշանակված պատժից պայմանականորեն ազատել է՝ սահմանելով 3 տարի փորձաշրջան, իսկ որոշումը հիմնավորել է հետևյալ հանգամանքներով՝ Հ.Հ-ն ամուսնացած է և վարքագիծը դրականորեն է բնութագրվում, մասնակցել է Արցախյան 44-օրյա պատերազմին և նախկինում դատապարտված չի եղել: Դատարանը հաշվի է առել այն, որ Հ.Հ.-ն զղջացել է կատարած հանցանքների համար և ընդունել իր մեղքը, արժանացել է տուժողների ներողամտությանը, իսկ վերջիններս գույքային պահանջ չեն ներկայացրել մեղադրյալի նկատմամբ: Հետևաբար՝ Դատարանը գտել է, որ սոցիալական արդարությունն այդ մասով վերականգնված է: Բացի այդ, Դատարանը հաշվի է առել նաև այն, որ մեղադրյալի խնամքի տակ գտնվում է երեք անչափահաս երեխա, ավելին՝ նա հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, ուստի Դատարանը հաշվի է առել վերջինիս նկատմամբ նշանակվող պատժի ազդեցությունը՝ նրա ընտանիքի անդամների և կենսապայմանների վրա[90]:

Դատարանի կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել անգամ տուժողին կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք պատճառված լինելու դեպքում: Այս դեպքում կիրառվել է համաձայնեցման վարույթ:

Ն.Գ.-ին մեղադրանք է առաջադրված եղել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պայմանագրային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, ընդգրկված լինելով մարտական հերթապահության որպես հրանոթի հրամանատար, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված պատճառով, վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող պայմանագրային զինծառայող, շարքային Մ.Ս.-ի հետ, որի ընթացքում բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ, քաշքշել նրան, այնուհետև վերցնելով նույն կրակային դիրքում հերթապահության ընդգրկված՝ իր հարազատ եղբայր, պայմանագրային զինծառայող,

[89] ՍԴ3/0018/01/25, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065631735
[90] ՍԴ3/0018/01/25, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065631735

կրոսեր սերժանտ Մ.Գ.-ին ամրակցված ինքնաձիգը, ապահովիչը դրել է մենահատ կրակահերթի դիրքում, լիցքավորել և մենահատ կրակոցներ արձակել դեպի օդ, որից հետո զենքի գործադրմամբ բռնություն գործադրել՝մեկ մենահատ կրակոց արձակել իր ենթակա զինծառայող, շարքային Մ.Ս.-ի աջ ոտքի շրջանին՝ վերջինիս պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք: Կողմերը համաձայնեցրել են հետևյալ պատժատեսակը և պատժաչափը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով /Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար/՝ ազատազրկում՝ երեք տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով (Ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, որը կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ)՝ ազատազրկում՝ երեք տարի ժամկետով, նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ վեց տարի ժամկետով, որը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան՝ չորս տարի ժամկետով: Դատարանը հաստատել է այս համաձայնության արձանագրությունը: Հարկ է նշել, որ տուժողը դիմումով հայտնել է, որ մեղադրյալ Ն.Գ.-ից բողոք չունի, այդ թվում՝ ֆինանսական: Միաժամանակ հայտնել է, որ դեմ չէ, որպեսզի վերոնշյալ քրեական գործով կիրառվի համաձայնեցման վարույթ[91]: Տուժողի ներկայացուցիչ ներգրավված չի եղել:

Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու առումով դատարանի կողմից ներկայացվել է հիմնականում համանման հիմնավորում: Դատարանը նշում է մեղադրյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև նրա կողմից կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանը, ու եզրահանգում, որ հնարավոր է պատիժը պայմանականորեն չկիրառել՝ նշանակված պատիժը նրա կողմից փաստացի կրելու անհրաժեշտության բացակայության հիմնավորմամբ[92]:

Առանձին գործերով դատարանը հիմնավորումներ չի ներկայացրել՝ պարզապես նշելով, որ վարույթում առկա՝ մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները բավարար չափով նվազեցնում են կատարված հանցագործությունների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և հիմք են տալիս եզրահանգելու, որ ազատազրկման ձևով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակներին, ու եզրահանգել է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակված պատիժը՝ կարճաժամկետ ազատազրկում 2 (երկու) ամիս ժամկետով պետք է պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով[93]:

---

[91] ՍԴ1/0176/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065629083
[92] Տե՛ս, օրինակ, ԳԴ/0490/01/24, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228678042
[93] ՍԴ3/0029/01/24, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065630238

Դիտարկված գործերով ամենաերկար փորձաշրջանը՝ 4 տարին, սահմանվել է վերը նշված՝ կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք հասցնելու գործով: Մեղադրյալը դատապարտվել է վեց տարի ազատազրկման, որը փոխարինվել է փորձաշրջանով:

4 տարի փորձաշրջան նշանակվել է նաև 1 տարի 2 ամիս ազատազրկման դատապարտված մեղադրյալին[94]: Այս գործով մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, կոչումով կրտսեր սերժանտ, սուրճ դնելու կապակցությամբ իրեն խաբելու համար վիրավորանք է հասցրել երկու պարտադիր ժամկետային զինծառայողներին՝ նվաստացնելով նրանց պատիվն ու արժանապատվությունը, և արթուն հերթափոխում քնելու համար վիճաբանության մեջ է մտել շարքային Ա.Մ.-ի հետ, որի ընթացքում բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

6.1 Մեղմացնող հանգամանքների գնահատում

Դատարանները բազմաթիվ գործերով հաշվի են առել մեղադրյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները:

Առավել հաճախ որպես մեղմացնող հանգամանքներ գնահատվել մեղքն ընդունելը, զղջալը, նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագիրը, տուժողի հետ հաշտելը, խնամքին երեխաներ ունենալը, երիտասարդ լինելը, պատերազմին կամ մարտական հերթապահության մասնակցելը և այլն:

Դատարանները, որպես կանոն, կարևորել են նաև տուժողի դիրքորոշումը: Մասնավորապես, այն դեպքերում, երբ տուժողը հայտնել է, որ մեղադրյալի նկատմամբ բողոք չունի, այդ հանգամանքը դատարանի կողմից գնահատվել է որպես պատիժը մեղմացնող հանգամանք:

Գործերից մեկով մեղադրողը վերաքննիչ բողոքում նշել է, որ հանցանք կատարած անձի վերաբերյալ այնպիսի բնութագրական տվյալները, ինչպիսիք են դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված կամ արատավորված չլինելը, առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելը, կատարած արարքի համար զղջալը և խնամքին անչափահաս երեխաներ ունենալը, ինքնին բավարար հիմք չեն պատիժը պայմանականորեն չկիրառելու համար: Ըստ մեղադրողի՝ Անձը դրական բնութագրող տվյալները, առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելը, կատարած արարքի համար զղջալը հանդիսանում են յուրաքանչյուր անձի իրավահպատակ վարքագծի դրսևորում, ինչը չի կարող, միանշանակ, այլ ապացույցների համակցությամբ, դիտվել պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք[95]:

---

[94] ԳԴ3/0062/01/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228674558
[95] ՍԴ1/0099/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065627513

VII. ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկված քրեական գործերի շրջանակում արձանագրվել է զինծառայողի ինքնասպանության երեք դեպք, որոնցից երկուսի դեպքում մեղադրանք է առաջադրվել ինքնասպանության հասցնելու, իսկ մեկ դեպքում՝ բռնություն գործադրելու հատկանիշներով: Ուսումնասիրված դեպքերը տեղի են ունեցել համապատասխանաբար 2018, 2021 և 2022 թվականներին:

Հարկ է արձանագրել, որ սույն ուսումնասիրության շրջանակներում նշված ժամանակահատվածի համար Datalex համակարգում ինքնասպանության դեպքերի վերաբերյալ հասանելի են եղել միայն այս երեք քրեական գործերը: Միաժամանակ, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունից ստացված վիճակագրական տվյալները վկայում են ավելի մեծ թվով դեպքերի առկայության մասին: Մասնավորապես, պաշտոնական տվյալների համաձայն՝ արձանագրվել է ինքնասպանության հասցնելու 38 դեպք, որոնցից 18-ը ուղարկվել են դատարան[96]:

Աղյուսակ. Զինված ուժերում 2020-2025թթ. արձանագրված ինքնասպանության հասցնելու դեպքերը.

Տարեթիվը	Դեպքերի քանակ	Ուղարկվել են դատարան	Կարճվել են	Նախաքննությունը շարունակվում է
2020	13	3	3	7
2021	5	2	1	2
2022	5	3	0	2
2023	6	5	1	0
2024	7	4	0	3
2025	2	1	0	1

Տվյալների անհամապատասխանությունը հիմք է տալիս ենթադրելու, որ դատական տեղեկատվական համակարգում գործերի հասանելիությունը լիարժեք չէ, ինչը խոչընդոտում է նմանատիպ դեպքերի ամբողջական ուսումնասիրմանը և հանրային վերահսկողության արդյունավետ իրականացմանը: Գործող պրակտիկայի համաձայն՝ եթե որևէ դատական նիստ անցկացվում է դռնփակ կարգով, Datalex համակարգում փակվում են ամբողջ գործի տվյալները, ներառյալ՝ մեղադրանքի բովանդակությունը և

[96] ՀՀ Զինվորական կենտրոնական Դատախազության 25.02.2026 թ գրությամբ ստացված վիճակագրական տվյալներ

դատական ակտի եզրափակիչ մասը: Նման մոտեցումը խնդրահարույց է թափանցիկության սկզբունքի տեսանկյունից:

Դեպքերի նկարագրություն

- *Բռնության ենթարկելու գործ, որից հետո զինծառայողը գործել է ինքնասպանություն*

Առաջին գործը, որոց տուժողը ինքնասպանություն է գործել, որպես մեղադրյալ ներգրավված երեք ժամկետային զինծառայողները մեղադրվել են ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում տուժողին պարբերաբար ծեծի ենթարկելու և նվաստացրելու մեջ: Վերջինս, ըստ գործի նյութերի, հետագայում ինքնասպանություն է գործել[97]:

Գործի փաստական հանգամանքները վկայում են, որ բռնության առաջին դրսևորումը տեղի է ունեցել 2018 թվականի օգոստոսի կեսերին, սակայն կոնկրետ օրը չի պարզվել: Հետագայում՝ սեպտեմբերի 2-ին, բռնությունը կրկնվել է: Ըստ գործի նյութերի՝ տուժողը, չդիմանալով իր նկատմամբ իրականացվող գործողություններին և գտնվելով «դեպրեսիվ իրավիճակային հակազդում» ախտորոշմամբ հոգեկան խանգարման վիճակում, նույն օրը կախվելու միջոցով ինքնասպանություն է գործել:

Զինծառայողների միջև վեճը առաջին անգամ ծագել է կոշիկի քսուք ունենալու հարցի շուրջ, ինչից հետո մեղադրյալներից առաջինը մեկ անգամ ձեռքի բաց ափով հարվածել պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վ.Գ.-ին դեմքին: Օրեր անց՝ սեպտեմբերի 2-ին կրկին վիճաբանություն է առաջացել նույն զորամասի նույն զինծառայողների միջև, այս անգամ զինվորական շապիկ ունենալու հարցի շուրջ: Մեղադրյալը ձեռքերով երեք անգամ հարվածել է տուժողի դեմքին, ապա բռունցքով հարվածել մարմնի կողային հատվածին, վերջինիս վայր ընկնելուց հետո երկու անգամ հարվածել ոտքով, ապա մեկ անգամ էլ՝ ձեռքով, ինչից հետո կիսածալած զինվորական գոտիով մեկ անգամ հարվածել է մեջքին: Այնուհետև, բոպեներ անց, սպայական սենյակում, դարձյալ համածառայողների ներկայությամբ՝ հայհոյանքների ուղեկցությամբ ծեծել է տուժողին՝ ձեռքերով հարվածել դեմքին, ապա՝ գլխին, իսկ վերջինս վայր ընկնելուց հետո, ևս երկու անգամ ձեռքերով հարվածել գլխին:

Մեղադրյալներից մեկի նկատմամբ սկզբնապես կիրառվել է հրամանատարության հսկողությանը հանձնելու խափանման միջոցը, որը հետագայում փոխարինվել է տնային կալանքով: Դատարանը նման փոփոխությունը հիմնավորել է մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծով և դատական նիստերին չներկայանալով: Հետագայում տնային կալանքը փոխարինվել է բացակայելու արգելքով: Մյուս մեղադրյալների նկատմամբ ևս կիրառվել է բացակայելու արգելք խափանման միջոցը:

[97] ՍԴ1/0001/01/20, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065593922

Գործի դատական քննությունը տևել է շուրջ **հինգ տարի ու ութ ամիս**: Արդյունքում քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Ընդ որում, դատավարության ընթացքում փոփոխվել են քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, և գործող օրենսգրքով մինչև 21 տարեկան անձանց համար նախատեսվել է վաղեմության ժամկետի 1/3-ով կրճատում /ՀՀ ՔՕ 106-րդ հոդվածի 2-րդ մաս/: Դատարանի որոշումը բողոքարկվել է դատախազության կողմից, սակայն վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը:

Գործի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցները եղել են մեղմ, ինչը կարող է գնահատվել որպես ոչ համաչափ արձագանք՝ հաշվի առնելով հանցագործության ծանր հետևանքները: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ քրեական հետապնդման դադարեցումը վաղեմության հիմքով փաստացի հանգեցրել է պատասխանատվությունից խուսափելուն և տուժողի իրավունքների արդյունավետ պաշտպանության բացակայությանը: Բացի այդ, խոշտանգման իրավական որակման բացակայությունը և պատժի անխուսափելիությունն ապահովող մեխանիզմների անբավարարությունը վկայում են, որ համակարգը չի ապահովել համարժեք արձագանք նման ծանր դեպքի նկատմամբ: Այս հանգամանքները միասին կարող են հիմք հանդիսանալ կյանքի իրավունքի, ինչպես նաև խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի խախտումների վերաբերյալ հիմնավոր մտահոգությունների համար, ներառյալ՝ դրանց ընթացակարգային բաղադրիչների՝ արդյունավետ, ամբողջական և անկախ քննության պահանջների տեսանկյունից:

- *Ժամկետային զինծառայողի դեպք*

Զինծառայողին ինքնասպանության հասցնելու երկրորդ գործով նույնպես ներգրավված են եղել մեկից ավելի մեղադրյալներ և տուժողի նկատմամբ վատ վերաբերմունքը կրել է շարունակական բնույթ: Ըստ գործով մեղադրանքի՝ պարտադիր ժամկետային զինծառայող Վ.Հ.-ն զորամասի պահպանության տեղամասում գտնվող մարտական դիրքերում 2021թ. օգոստոս ամսից մինչև 2022թ. մայիս ամիսը՝ զորամասի հրամանատարի համապատասխան հրամաններով սահմանված ժամանակահատվածներով մարտական հերթապահություն կրելու ընթացքում, որպես դիրքի ավագ հանդիսանալով պետ, պարտադիր ժամկետային զինծառայող Վ. Մ.-ի հետ միասին՝ խմբի կազմով, իրեն ստորադաս, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ա.Ե.-ի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, նրա անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով, վերջինիս անզգուշությամբ հասցրել է ինքնասպանության: Մեղադրյալներից մեկը տուժողի նկատմամբ հանդիսացել է պետ, մյուսը՝ համածառայակից[98]:

[98] ԳԴ3/0070/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228675050

Սույն դեպքում զինծառայողների միջև վիճաբանությունը վրա է հասել քնելու հարցի շուրջ: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ կիրառվել է կալանք խափանման միջոց, ղեկավար պաշտոն զբաղեցնող զինծառայողը՝ 6 ամսով, մյուս զինծառայողը՝ 2 ամսով: Ինչը հետագայում փոխարինվել է բացակայելու արգելքով: Խափանման միջոցների ընտրության և դատարանի հիմնավորումների մասով սակայն տեղեկություններ հասանելի չեն: Գործով մեղադրյալները դատապարտվել են ազատազրկման՝ համապատասխանաբար 5 և 4 տարի 9 ամիս ժամկետով:

Հատկանշական է, որ սույն գործով դատարանի վճիռը բողոքարկվել է ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալների կողմից: Պաշտպանության կողմը բողոքի հիմքում դրել է ինչպես գործով հարցաքննված վկաների նախաքննական և դատական փուլի ցուցմունքների հակասությունները, այնպես էլ միմյանց հակասող ցուցմունքներն ու դատարանի կողմից այդ հակասությունները չպարզելը: Նմանապես, բարձրացվել է այլ վկաներ հրավիրելու հարցը, ինչը դատարանի կողմից չի իրականացվել:

Ավելին, բողոքով բարձրացվել է նաև տուժող զինծառայողի կողմից թողնված նամակի հարցը: Մասնավորապես, նշվել է, որ ինքնասպան եղած զինծառայողը զորակոչվել է բանակ 2021 թվականի փետրվարի 28-ին և ինքնասպանությունից առաջ թողնված նամակը գրել է 7 ամիս հետո, այսինքն՝ առավելագույնը 2021 թվականի սեպտեմբեր ամսին, իսկ դեպքը տեղի է ունեցել 2022 թվականի մայիսի 11-ին, այսինքն՝ նամակի գրելուց շուրջ 8 ամիս հետո: Հետազոտելով նամակի բովանդակությունը՝ նշվել է, որ զինծառայողը դեռևս 2021 թվականի սեպտեմբեր ամսին նպատակ և դիտավորություն է ունեցել ինքնասպանություն գործելու, իսկ թե որն է եղել դրա դրդապատճառը ո՛չ նախաքննության, և ո՛չ էլ դատաքննության ընթացքում չի պարզվել, դրա վերաբերյալ որևէ քննություն չի կատարվել:

Բողոքի առարկա է դարձել նաև այն հանգամանքը, որ գործով դեպքի վայրը չի պահպանվել նախնական տեսքով, դին մարտական հենակետից իջեցվել է նախօրոք՝ մինչև զննության մեկնարկի պահը դին արդեն դեպքի վայրում չի եղել, բնականաբար, չեն աշխատել փորձագետներ, հետքեր չեն վերցվել՝ ոտնահետքեր, մատնահետքեր, ինքնաձիգը տեղաշարժվել է, ավելին՝ կատարվել է գործողություն, պարկուճ է առանձնացվել այլ անձի կողմից, առկա չէ ելակետային տվյալ՝ դիակի առաջնային դիրքի հավանական փոփոխության վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը ներկայացրած բողոքը մերժել է՝ գտնելով, որ առաջին ատյանի դատարանի հիմնավորումները հիմնավոր են, դատավճիռը՝ օրինական:

Գործի ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ սույն դեպքի շրջանակներում հարցաքննված վկաներից մեկի ցուցմունքների հիման վրա պաշտոնատար անձանց կողմից բռնության գործադրմամբ իրենց լիազորությունները չարաշահելու փաստի առթիվ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու

հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ: Վկան հայտնել է, որ դատարանում գտնվելով հուզված վիճակում՝ հայտնել է ոչ ճիշտ տվյալներ, իր նկատմամբ ոչ ոք բռնություն չի գործադրել, որևէ մեկը իրենից ցուցմունք չի կորզել և մինչդատական վարույթում տված ցուցմունքներում հայտնել է ողջ իրականությունը: Նշված վարույթը 24.06.2025թ. կարճվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատված լինելու հիմքով:

Ներկայացված գործի շրջանակներում փաստական հանգամանքների, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից կատարված իրավական գնահատականների ուսումնասիրությունը վեր է հանում մի շարք էական հարցադրումներ և հիմնավոր մտահոգություններ՝ ինչպես ենթադրյալ ինքնասպանության հանգամանքների, այնպես էլ դրան նախորդած և հաջորդած իրադարձությունների, ինչպես նաև իրականացված քննության արդյունավետության վերաբերյալ:

Մասնավորապես, դատարանների որոշումներով հաստատված փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ բավարար չափով հստակեցված չեն տուժողին ենթադրյալ վատ վերաբերմունքի ենթարկելու առաջին դեպքի ժամանակահատվածը, դրա տևողությունը և ինտենսիվությունը: Ավելին, առկա նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ հնարավոր են եղել նաև այլ, չարձանագրված կամ ոչ լիարժեք ուսումնասիրված դրվագներ, որոնց շրջանակներում տուժողը կարող էր ենթարկված լինել բռնության:

Նույն համատեքստում առանձնահատուկ մտահոգիչ է այն հանգամանքը, որ միջադեպին ենթադրյալ կենտրոնական դերակատարում է ունեցել զինվորական ծառայող, ով հանդիսացել է տուժողի անմիջական պետը, և որի կողմից ենթադրյալ իրավախախտ վարքագիծը, ըստ գործի նյութերի, ունեցել է շարունակական բնույթ, տեղի է ունեցել այլ զինծառայողների ներկայությամբ: Միաժամանակ, բացակայում են տվյալներ այն մասին, որ համապատասխան զորամասի հրամանատարությունը պատշաճ կերպով արձագանքել է նշված հանգամանքներին, իրականացրել է դրանց կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ կամ ապահովել է ծառայողական վերահսկողության պատշաճ մակարդակ:

Վերոնշյալից բացի, գործի նյութերում առկա են էական հակասություններ և անպատասխան մնացած հարցեր, որոնք էապես խոչընդոտում են դեպքի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ բացահայտմանը: Այս հանգամանքների համակցված գնահատումը թույլ է տալիս եզրակացնել, որ տվյալ կարգի գործերով իրականացվող քննությունը չի համապատասխանում արդյունավետության և ամբողջականության պահանջներին, ինչպես սահմանված են ներպետական օրենսդրությամբ և միջազգային իրավական չափանիշներով:

- *Պայմանագրային զինծառայողի դեպք*

Ինքնասպանություն գործելու դիտարկված հաջորդ գործով կրկին ներգրավված են եղել մեկից ավելի անձինք: Մասնավորապես, պայմանագրային զինծառայողներ Ա.Ս.-ն և Ա.Ա.-ն պարբերաբար նվաստացրել և բռնություն են կիրառել համածառայակից պայմանագրային Գ.Ա.-ի նկատմամբ, ով հերթական միջադեպից հետո ինքնասպանություն է գործել: Գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ միջադեպերը կրել են պարբերական բնույթ և դրսևորվել ինչպես ծեծով, այնպես էլ սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելով, տուժողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելով: Վիճաբանություններն առաջացել են տարբեր պատճառներով՝ հեռախոսային քարտով ինտերնետ տրամադրելու, միասին ճաշելու, ավելացված սնունդը վերցնելու և այլ նմանատիպ հարցերի շուրջ[99]:

Ըստ դատավճռի՝ ինքնասպանությունից առաջ ծագած միջադեպը տեղի է ունեցել մարտական հենակետում: Մասնավորապես, դեպքի օրը մարտական հենակետում հերթական վեճն է առաջացել գործով մեղադրյալների և տուժողի միջև հեռախոսի քարտի և ինտերնետի պատճառով, քանի որ տուժողը չի ցանկացել իր քարտով ինտերնետ ցրել: Ինչից հետո մեղադրյալները հայհոյել են, ծեծել, իսկ մեղադրյալ Ա.Ս.-ն սպառնացել է, որ «Եթե մինչև մեկ րոպեն քարտը չբերես, բերանդ ժ…ժ եմ տալու», որից հետո տուժող Գ.Ա.-ն գնացել է ննջարան և մոտ մեկ րոպե անց ննջարանից լսվել է կրակոցների ձայն: Դիրքում եղած անձնակազմը, մտնելով ննջարան, տեսել են, որ Գ.Ա.-ն ընկած է գետնին, վերջինիս կրծքավանդակի և որովայնի շրջաններում առկա են եղել վնասվածքներ, իսկ նրա մոտ՝ ոտքերի արանքում, առկա է եղել ԱԿ-74 տեսակի ինքնաձիգ:

Նախաքննության փուլում գործով մեղադրյալների նկատմամբ կիրառվել է կալանք խափանման միջոցը, համապատասխանաբար 6 և 4 ամիս ժամանակահատվածով, ինչը հետագայում փոխարինվել է բացակայելու արգելք խափանման միջոցով: Վերջնական դատական ակտով մեղադրյալները դատապարտվել են 6 և 5 տարի ժամկետով ազատազրկման:

Քրեական գործով հասանելի տվյալների ուսումնասիրությունը վեր է հանում դեպքի և քրեական գործի քննության հետ կապված առանձնահատկություններ: Մասնավորապես, դեպքի առնչությամբ ցուցմունք տված վկաները, նախաքննության և դատաքննության փուլում տվել են տարբեր և միմյանց հակասող ցուցմունքներ: Դեպքին ներկա վկաներից մեկի կողմից նշվել է, որ դեպքից անմիջապես հետո մեղադրյալները ցուցում են տվել, որ եթե հարցնեն՝ ինչու է Գ.Ա.-ն իրեն կրակել, ասեն, որ «Աջարաբեթ» էր խաղում, իրենք եղել են դիրքում, և Գ.-ն իրեն կրակել է, թե ինչ պատճառով՝ չգիտեն:

Նմանապես, հետաքրքիր դրվագ է արձանագրվել նաև դիրքի ավագ և պատասխանատու Բ.Ա.-ի՝ միջադեպին մասնակցության մասով: Մասնավորապես, վկաներից մեկը ցուցմունքով նշել են, որ Ա.Ս.-ն /գործով մեղադրյալը/, ասել է, որ *բոլորին ասեն, որ դեպքի ժամանակ, այսինքն՝ Գ.Ա.-ի կողմից իրեն կրակելու ժամանակ, նա և Բ.Ա.-ն գտնվել են*

[99] ԳԴ5/0005/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228669823

խրամատում: Այդ իսկ պատճառով ինքն իր կողմից նախկինում տրված ցուցմունքներում հայտնել է, որ Բ.Ա.-ն 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 09:20-ի սահմաններում, գտնվել է N մարտական հենակետի խրամատում և կատարելիս է եղել դիտորդի ծառայությունը: Ինքը գիտեր, որ Բ.Ա.-ն պետք է շուտով թոշակի գնար, իսկ նրա կողմից՝ դիրքից բացակայելը կարող էր վատ անդրադարձ ունենալ նրա թոշակի հետ կապված հարցերում: Մինչդեռ իրականում Բ.Ա.-ն դեպքի ժամանակ, լինելով դիրքի ավագ և պատասխանատու, եղել է տանը: Քննարկվող քրեական գործի շրջանակներում մեղադրյալ Բ.Ա.-ի վերաբերյալ քրեական վարույթն անջատվել է, Բ.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա սահմանված կարգի բացակայությամբ և առանց վերադաս հրամանատարության թույլտվության թողել է մարտական դիրքը: Հատկանշական է, որ հարուցված գործի շրջանակներում Բ.Ա.-ն պատասխանատվության չի ենթարկվել, քրեական հետապնդումը դադարեցվել է և վարույթը կարճվել՝ վաղեմության ժամկետները անցնելու հիմքով[100]:

Ներկայացված գործով հանգամանքների ուսումնասիրությունը վկայում է, որ գործը պարունակում է ինչպես մարդու հիմնարար իրավունքների խախտման, այնպես էլ արդյունավետ քննության ապահովման հետ կապված լուրջ խնդիրներ, մասնավորապես տուժողի նկատմամբ կիրառված պարբերական բռնությունը, նվաստացումները և սպառնալիքներն ըստ էության ստեղծել են այնպիսի միջավայր, որը կանխատեսելիորեն կարող էր հանգեցնել ինքնասպանության, և պետությունը, ի դեմս զինվորական հրամանատարության, չի ապահովել զինծառայողի կյանքի պաշտպանությունը՝ չկանխելով շարունակական վատ վերաբերմունքը: Միաժամանակ տուժողի նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնությունը, հոգեբանական ճնշումը, նվաստացումը կարող են որակվել որպես անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, որի կանխումը պետության պարտավորությունն էր:

Բացի այդ, վճռում արտացոլված հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս պատճառահետևանքային հնարավոր կապ ինքնասպանությանը նախորդած բռնության և սպառնալիքների միջև, որն առաջանում է ինքնասպանության նախորդած հանգամանքների և բոլոր ներգրավված անձանց, այդ թվում՝ հրամանատարության գործողությունների և անգործության լիարժեք իրավական գնահատման անհրաժեշտություն: Միևնույն ժամանակ քննության ընթացքում առկա են լուրջ թերություններ՝ վկաների հակասական և փոփոխվող ցուցմունքներ, հնարավոր ազդեցություն նրանց վրա և ցուցմունքների համաձայնեցում, ինչպես նաև դեպքի հանգամանքների ոչ լիարժեք և ոչ օբյեկտիվ պարզում, ինչը կասկածի տակ է դնում քննության անկախությունն ու արդյունավետությունը: Այս առումով զինծառայող լինելու կարգավիճակը, փակ հիերախիկ համակարգում լինելն ազդեցության լուրջ լծակ է, որը կարող է խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը և արդարադատության ապահովմանը:

[100] ԳԴ5/0008/01/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228669945

Լրացուցիչ խնդիր է նաև պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը, քանի որ դիրքի պատասխանատուի բացակայությունը և դրա թաքցնելը վկայում են հնարավոր պաշտոնեական խախտումների մասին, սակայն նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության հիմքով, ինչն իրականում հանգեցրել է պատասխանատվությունից խուսափելուն:

Վերոնշյալ հանգամանքները, իրենց ամբողջության մեջ դիտարկվելիս, վկայում են զինված ուժերում առկա ավելի լայն համակարգային խնդիրների մասին, ներառյալ ոչ կանոնադրային հարաբերությունների պահպանման, հրամանատարական վերահսկողության անբավարարության, վատ վերաբերմունքի նկատմամբ հանդուրժողականության, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգում արդյունավետ քննության և հաշվետվողականության ապահովման հետ կապված թերությունների մասին:

Մեղադրյալներին վերագրվող վարքագիծը որոշ դեպքերում ներառել է կրկնվող ծեծ, նվաստացումներ, ահաբեկում, արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք: Նման հանգամանքներում անհրաժեշտ էր գնահատել, թե արդյոք այդ վարքագիծը կարող էր որակվել որպես խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձև՝ ներպետական օրենսդրության և Հայաստանի միջազգային իրավական պարտավորությունների տեսանկյունից: Ուսումնասիրված դատական ակտերից չի երևում, որ նախաքննության մարմինները կամ դատարանը անդրադարձել են այդ հարցին և տվել իրավական գնահատական:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, ներառյալ մեղադրանքի և դատարանների որդեգրած մոտեցումները, ցույց է տալիս, որ զինված ուժերում բռնության դեպքերը քրեական արդարադատության համակարգի կողմից հիմնականում դիտարկվում են որպես միջանձնային կամ կարգապահական բնույթի հարց, այլ ոչ թե որպես հնարավոր իրավախախտումներ, որոնք առնչվում են մարդու իրավունքների խախտումներին, նվաստացմանը, հարկադրանքին կամ զինվորական ծառայության շրջանակներում առկա կառուցվածքային խնդիրներին:

Ինչպես վերը ներկայացվեց, նախաքննական մարմինները, ըստ երևույթին, կենտրոնացել են առանձին դրվագների ապացուցման վրա՝ առանց բռնության համակարգային բնույթի կամ կրկնվող օրինաչափությունների բացահայտման, մինչդեռ դատարանները չեն անդրադարձել այն հարցին, թե արդյոք տրված իրավական որակումը լիարժեքորեն արտացոլում է կատարված արարքների ծանրությունը:

Այս գործերով վաղեմության ժամկետների կիրառումը ևս ընդգծում է իրավական որակման գործնական նշանակությունը: Եթե վարքագիծը գնահատվեր որպես խոշտանգում, ապա հնարավոր էին այլ իրավական հետևանքներ:

Ինքնասպանության հասցնելու վերաբերյալ գործերը հատկապես ակնառու կերպով բացահայտում են հրամանատարության կողմից կարգապահության և զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման ոլորտում առկա կրկնվող ձախողումները, հատկապես խոցելի վիճակում գտնվող զինծառայողների նկատմամբ: Որոշ ոչ ընդունելի վարքագծային պրակտիկաներ և կարծրատիպեր տարիներ շարունակ պահպանվում և փոխանցվում են զորակոչից զորակոչ:

Այն հանգամանքը, որ բռնությունները շարունակվել են երկար ժամանակ, իրականացվել են մի քանի անձանց մասնակցությամբ և բազմաթիվ ականատեսների ներկայությամբ, հաճախ՝ բացահայտ կերպով, լուրջ հարցեր է առաջացնում այն մասին, թե որքանով էին հրամանատարական օղակները տեղյակ կամ ողջամտորեն պետք է տեղյակ լինեին տեղի ունեցողի մասին: Թեև սույն հետազոտության շրջանակներում չեն ուսումնասիրվել կարգապահական կամ հրամանատարական պատասխանատվության հարցերը դատական ակտերից դուրս, առկա նյութերը վկայում են, որ հրամանատարների գործողությունների կամ անգործության գնահատումը հաճախ մնացել է քրեական վարույթների լուսանցքում: Արդյունքում, պատասխանատվության հիմնական շեշտադրումը դրվել է անմիջական կատարողների վրա, մինչդեռ այն ինստիտուցիոնալ ձախողումները, որոնք կարող էին նպաստել բռնության ձևավորմանն ու շարունակականությանը, ստացել են համեմատաբար սահմանափակ ուշադրություն:

Ուսումնասիրված գործերը նաև հարցեր են առաջացնում զինծառայողների խոցելիությունների բացահայտման, մշտադիտարկման և արձագանքման գործող մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ: Մի շարք գործերում առկա էին հոգեբանական ճնշվածության, սոցիալական մեկուսացման, միջանձնային շարունակական հակամարտությունների, ինչպես նաև նվաստացման և բռնության երկարատև ազդեցության ցուցիչներ, և հասկանալի չէ, թե արդյոք նշվածի լույսի ներքո մշակվել է համապատասխան արձագանք իրավասու մասնագետների կողմից:

Դիտարկված գործերի մեկ այլ բնորոշ առանձնահատկություն նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների և դատարանում ներկայացված ցուցմունքների միջև առկա էական տարբերություններն էին: Որոշ դեպքերում առաջ են քաշվել պնդումներ, ըստ որոնց՝ վկաները համակարգել են իրենց ցուցմունքները կամ փորձել են պաշտպանել համածառայակիցներին կամ հրամանատարներին: Թեև դիտարկման արդյունքները չեն թույլ տալիս միանշանակ եզրակացություններ անել նման տարբերությունների պատճառների վերաբերյալ, գործերը ցույց են տալիս զինվորական ծառայության փակ և հիերարխիկ միջավայրում հավաստի ցուցմունքներ ստանալու հետ կապված առանձնահատուկ դժվարությունները:

Սույն ուսումնասիրության շրջանակում քննված ինքնասպանության հասցնելու դեպքերը խտացված կերպով արտացոլում են ուսումնասիրության շրջանակներում արձանագրված բազմաթիվ համակարգային խնդիրներ: Բոլոր երեք գործերով ուսումնասիրված նյութերը

պարունակում են տեղեկություններ երկարատև բռնության, նվաստացման, հարկադրանքի կամ այլ չարաշահումների մասին, որոնք տեղի են ունեցել փակ զինվորական միջավայրում և հաճախ՝ այլ զինծառայողների ներկայությամբ: Այս գործերը հարցեր են առաջացնում կանխարգելման մեխանիզմների արդյունավետության, հրամանատարական վերահսկողության պատշաճության, խոցելիությունների բացահայտման, քննությունների ամբողջականության և իրավական որակման համապատասխանության վերաբերյալ: Միաժամանակ, դրանք ցույց են տալիս հիերարխիկ կառույցներում տեղի ունեցած միջադեպերի փաստական ամբողջական պատկերը վերականգնելու դժվարությունները, հատկապես այն դեպքերում, երբ վկաների ցուցմունքները ժամանակի ընթացքում փոփոխվում են կամ առաջ են գալիս վարույթի մասնակիցների վրա ազդեցություն գործադրելու վերաբերյալ պնդումներ:

Թեև ուսումնասիրության համար հասանելի ինքնասպանության հասցնելու գործերի սահմանափակ քանակը թույլ չի տալիս կատարել լայնածավալ վիճակագրական ընդհանրացումներ, ստացված արդյունքները վկայում են, որ նման գործերը կարող են առավել տեսանելի դարձնել այն համակարգային ռիսկերը, որոնք առկա են նաև զինված ուժերում բռնության մյուս դեպքերում: Հետևանքների բացառիկ ծանրությունն ընդգծում է այն անհրաժեշտությունը, որ քննությունները չսահմանափակվեն առանձին դրվագների ուսումնասիրմամբ, այլ անդրադառնան բռնության ընդհանուր օրինաչափություններին, ինստիտուցիոնալ թերություններին և կանխարգելման ձախողումներին: Այս տեսանկյունից, ուսումնասիրված գործերը վկայում են զինված ուժերում բռնության և վատ վերաբերմունքի դեմ պայքարի առավել համապարփակ, կանխարգելիչ և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման անհրաժեշտության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացվել է ՀՀ զինված ուժերում տեղի ունեցած բռնության, նվաստացման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների վերաբերյալ 51 քրեական գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն և մի շարք փորձագիտական հարցազրույցներ: Թեև ուսումնասիրության արդյունքները հիմնված են բացառապես Datalex պաշտոնական դատական տեղեկատվական համակարգի միջոցով հասանելի դարձած գործերի վրա և, հետևաբար, ամբողջական պատկեր չեն տալիս զինված ուժերում տեղի ունեցած բռնության բոլոր դեպքերի վերաբերյալ, ուսումնասիրված նյութերը վեր են հանել մի շարք կրկնվող միտումներ, որոնք մարդու իրավունքների պաշտպանության, քրեական արդարադատության և զինված ուժերի կառավարման տեսանկյունից լուրջ ուշադրության են արժանի:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված գործերի մեծամասնությունը քննվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարաններում, հիմնականում՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Նախաքննության տևողությունը զգալիորեն տարբերվել է: Որոշ դեպքերում նախաքննությունն ավարտվել է բացառիկ կարճ ժամկետներում՝ ընդամենը ինը օրվա ընթացքում, մինչդեռ այլ դեպքերում արձանագրվել են էական ձգձգումներ: Առնվազն մեկ գործով նման ձգձգումը պայմանավորված է եղել քննիչի կողմից անհրաժեշտ դատավարական գործողությունները միտումնավոր չկատարելու հանգամանքով, որի հետևանքով մեղադրյալը խուսափել է քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետի լրանալու պատճառով:

Դատարանում գործի քննությունը, որպես կանոն, տևել է մինչև հինգ ամիս: Գործերի զգալի մասը քննվել է արագացված ընթացակարգերի կամ հաշտության մեխանիզմի կիրառմամբ, ինչը սահմանափակել է գործի փաստական հանգամանքների համակողմանի քննության հնարավորությունը: Միևնույն ժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ դատարանում գործի քննությունը չի ավարտվել ողջամիտ ժամկետում, հիմնականում՝ նախագահող դատավորների բազմակի փոփոխությունների պատճառով: Ամենաերկար քննված գործի քննությունը շարունակվել է շուրջ հինգ տարի ու ութ ամիս:

Ուսումնասիրված գործերի 59%-ում վարույթը վերաբերել է մեկ մեղադրյալի և մեկ տուժողի: Այնուամենայնիվ, արձանագրվել են նաև գործեր, որոնցում ներգրավված են եղել մինչև վեց մեղադրյալներ: Կարևոր է նշել, որ դատարանի առջև կանգնած մեղադրյալների վերջնական թիվը միշտ չէ, որ արտացոլել է միջադեպին փաստացի մասնակցած անձանց իրական քանակը, քանի որ որոշ մասնակիցների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է նախաքննության փուլում: Թեև որոշ ոչ ծանր դեպքերում նման մոտեցումը կարող է հիմնավորված լինել, ընդհանուր առմամբ խմբակային բռնության ոչ բոլոր մասնակիցների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու պրակտիկան լուրջ մտահոգություններ է առաջացնում հաշվետվողականության ապահովման տեսանկյունից և կարող է նպաստել անպատժելիության ավելի լայն մթնոլորտի ձևավորմանը: Սա հատկապես կարևոր է խմբի կողմից իրականացվող պարբերական բռնության և նվաստացման դեպքերի համատեքստում:

Մշտադիտարկված գործերի հիման վրա ձևավորված մեղադրյալի նկարագիրը հետևյալն էր. չամուսնացած, 18–20 տարեկան ժամկետային զինծառայող, միջնակարգ կրթությամբ և նախկինում դատվածություն չունեցող անձ: Մասնավորապես, մեղադրյալների 62%-ը եղել է 18–20 տարեկան, 68%-ը՝ ժամկետային զինծառայող, 69%-ը՝ միջնակարգ կրթությամբ, 81%-ը՝ չամուսնացած, իսկ 94%-ը նախկինում դատվածություն չեն ունեցել:

Միևնույն ժամանակ, նախկին դատվածության բացակայությունը պարտադիր չէ, որ վկայի անձի՝ նախկինում օրենքի հետ խնդիրներ չունենալու մասին: Մի շարք գործերով մեղադրյալները նախկինում ներգրավված են եղել տարբեր միջադեպերում, այդ թվում՝ զինվորական ծառայության ընթացքում բռնի վարքագծի դրսևորումներով, սակայն նրանց նկատմամբ քրեական վարույթները նախաքննության փուլում դադարեցվել են ոչ արդարացնող հիմքերով, նրանց դատվածությունները մարվել կամ հանվել են, կամ այլ քրեական գործերով կայացված դատավճիռները տվյալ հանցանքը կատարելու պահին դեռևս օրինական ուժի մեջ չէին մտել: Գործող օրենսդրության համաձայն՝ նման բոլոր դեպքերում նրանք համարվում են առաջին անգամ

հանցագործություն կատարած անձինք: Այս հանգամանքը էական նշանակություն ունի հաշտության և արագացված ընթացակարգերի կիրառման հնարավորության տեսանկյունից:

Թեև մեղադրյալների մեծամասնությունը եղել են շարքային կամ սերժանտ, մշտադիտարկված գործերում ներգրավված են եղել նաև սպաներ, այդ թվում՝ գնդապետի զինվորական կոչում ունեցող անձ:

Ուսումնասիրված գործերը ցույց են տալիս, որ զինված ուժերում բռնությունը շարունակում է դրսևորվել բազմազան ձևերով՝ առանձին ֆիզիկական բռնություններից մինչև նվաստացման, ահաբեկման, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պաշտոնեական կամ փաստացի իշխանության չարաշահման երկարատև դրսևորումներ: Մի շարք դեպքերում բռնությունը չի սահմանափակվել մեկ առանձին միջադեպով, այլ կրկնվել է ժամանակի ընթացքում՝ հաճախ ոչ կանոնադրական հարաբերությունների, հիերարխիկ կախվածության կամ մի քանի զինծառայողների խմբային մասնակցության պայմաններում: Ուսումնասիրված դատական ակտերը վկայում են, որ նման վարքագիծը հաճախ ձևավորվում է այնպիսի միջավայրում, որտեղ բռնարար պրակտիկաները նորմալացվում են և ժամանակին չեն բացահայտվում կամ կանխվում: Նման իրավիճակները նաև վկայում են հրամանատարական կառույցների ձախողումների մասին՝ կանխելու նման վարքագիծը, ինչը որոշ դեպքերում հանգեցրել է ինքնասպանության:

Ուսումնասիրված գործերը բացահայտում են միտում՝ զինվորական բռնությունը դիտարկելու հիմնականում որպես կարգապահական կամ միջանձնային հարաբերությունների դրսևորում, և չի գնահատվում մարդու իրավունքների ավելի լայն շրջանակի ներքո: Թեև բազմաթիվ դեպքեր ներառել են կրկնվող նվաստացում, հարկադրանք, իշխանության չարաշահում կամ երկարատև արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, դատական ակտերում չեն քննարկվել խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքին վերաբերող հարցերը:

Ուսումնասիրված դատական ակտերը հարցեր են առաջացնում զինծառայողների նկատմամբ առկա ռիսկերը բացահայտելու և դրանց արձագանքելու համար նախատեսված մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ: Մի շարք գործերով ազդակներ, ինչպիսիք են շարունակական միջանձնային կոնֆլիկտ, բռնության կրկնվող դեպքերը, սոցիալական մեկուսացումը, հոգեբանական ճնշվածությունը կամ շարունակական նվաստացումը, առկա են եղել նախքան հանցանքի կատարումը կամ առանձնապես ծանր հետևանքների առաջացումը: Այնուամենայնիվ, ուսումնասիրված նյութերում որևէ տեղեկություն չի պարունակվել այն մասին, թե կանխարգելիչ ինչպիսի միջամտություններ են իրականացվել հրամանատարների, հոգեբանների, բուժանձնակազմի կամ այլ պատասխանատու անձանց կողմից:

Ինքնասպանությամբ ավարտված գործերը հատկապես ցցուն օրինակ են նշված խնդիրների կուտակային ազդեցության տեսանկյունից: Թեև մանրամասն վերլուծության համար հասանելի են եղել ընդամենը երեք նման գործեր, բոլոր դեպքերում առկա են եղել որոշակի

ժամանակահատվածում շարունակվող բռնության, նվաստացման, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, ինչպես նաև հարկադրանքի վերաբերյալ տվյալներ: Ուսումնասիրված նյութերը հարցեր են առաջացնում կանխարգելման միջոցների բավարարության, հրամանատարական վերահսկողության, խոցելիությունների ժամանակին բացահայտման և մահվանը նախորդած հանգամանքների վերաբերյալ քննության արդյունավետության առնչությամբ: Նման հետևանքների ծանրությունն ընդգծում է բռնության դեմ պայքարը ոչ միայն հետագա քրեական հետապնդման, այլև կանխարգելիչ և ինստիտուցիոնալ միջոցների միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական վարույթները հիմնականում կենտրոնացած են եղել կոնկրետ կատարողների կողմից իրականացված բռնության առանձին դրվագների հաստատման և ապացուցման վրա: Թեև այս մոտեցումը համահունչ է քրեական պատասխանատվության անհատականացման պահանջին, այն հաճախ հանգեցրել է ավելի լայն համատեքստի սահմանափակ ուսումնասիրության, որի պայմաններում տեղի է ունեցել բռնությունը, ներառյալ միջադեպին նախորդած հանգամանքները և տուժողի ու իրավախախտի միջև հարաբերությունների բնույթը: Հրամանատարական վերահսկողությանը, ինստիտուցիոնալ պատասխանատվությանը, ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորումներին, կրկնակի զոհացման դեպքերին և համակարգային ռիսկի գործոնների առկայությանը վերաբերող հարցերը հաճախ դուրս են մնացել վարույթների հիմնական ուշադրության շրջանակից: Արդյունքում, բռնությանը նպաստած խորքային պայմանները հաճախ ավելի քիչ ուշադրության են արժանացել, քան առանձին միջադեպերը: Այս հանգամանքը, զուգակցված քրեական հետապնդման դադարեցման հիմքերի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության բացակայության հետ, նվազեցնում է զինված ուժերում նման պրակտիկաների նկատմամբ պետական արձագանքի արդյունավետությունն ու համապարփակությունը:

Մշտադիտարկման ընթացքում բացահայտվել են մի շարք մտահոգիչ հանգամանքներ, որոնք վերաբերում են նախաքննության և դատարանում քննության արդյունավետությանը: Կրկնվող խնդիրների շարքում առանձնանում էին որոշ զգայուն գործերով վարույթների անհարկի ձգձգումները, որոնք հանգեցրել են պատասխանատվությունից խուսափելուն, ինչպես նաև հաշտության կամ արագացված վարույթների կիրառման պրակտիկան այն դեպքերում, երբ վարույթը դադարեցնելու այլ իրավական հիմքեր առկա չեն եղել: Արձանագրվել են նաև վկաների ցուցմունքների անհամապատասխանություններ նախաքննության և դատաքննության փուլերում, ինչպես նաև պնդումներ՝ վկաների նկատմամբ հնարավոր ազդեցության կամ բռնության մասին հաղորդելու և ցուցմունք տալու դեպքում հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ առկա կարծրատիպերի մասին: Թեև առկա նյութերը հնարավորություն չեն տալիս վերջնական եզրակացություններ անել նման խնդիրների պատճառների վերաբերյալ, դրանք ակնհայտորեն արտացոլում են զինվորական ծառայության փակ և հիերարխիկ միջավայրում կատարված հանցագործությունների քննությանը բնորոշ առանձնահատուկ մարտահրավերները:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ տուժողների իրավունքները լիարժեքորեն ապահովված չեն: Թեև օրենսդրությունը հանցագործությունից տուժած

զինծառայողների համար նախատեսում է պետության կողմից անվճար իրավաբանական օգնության իրավունք, գործնականում այդ աջակցությունը միշտ չէ, որ արդյունավետ է: Մի կողմից՝ հատկապես մարզերում հանրային պաշտպանների թիվը սահմանափակ է, մյուս կողմից՝ անհրաժեշտություն է առաջանում ապահովել ինչպես տուժողների, այնպես էլ մեղադրյալների շահերի պաշտպանությունը, մինչդեռ որոշ դեպքերում նրանց շահերը կարող են հակասել միմյանց: Արդյունքում, կողմերին հաճախ խրախուսվում է հաշտվել, իսկ մեղադրյալներին՝ ընդունել մեղքը՝ գործի արագ ավարտն ապահովելու նպատակով:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենքով թույլատրելի է, կողմերը հակված են դատարանում հաշտության գալու: Թեև այս ընթացակարգը, ըստ էության, կոչված է ապահովելու սոցիալական արդարության վերականգնումը և վեճի լուծումը, զինվորական ենթակայության և հիերարխիայի պայմաններում այն կարող է հիմնավոր մտահոգություններ առաջացնել այն հարցի շուրջ, թե արդյոք կողմերը, հատկապես մեղադրյալից ենթակա կարգավիճակում գտնվող տուժողը, իրականում ազատ կամք են դրսևորում հաշտության գնալու հարցում:

Թեև արագացված վարույթը օրինական և կայացած դատավարական մեխանիզմ է, զինծառայողների կողմից կամ նրանց նկատմամբ գործադրված բռնության դեպքերում դրա լայն կիրառումը մտահոգություններ է առաջացնում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ արագացված վարույթը փաստացի դարձել է հիմնական մեխանիզմ այն բոլոր դեպքերում, երբ օրենսդրական սահմանափակումների պատճառով հնարավոր չէ եղել դադարեցնել հետապնդումը: Արագացված վարույթների լայն կիրառումը սահմանափակում է դատարանների հնարավորությունը՝ բացահայտելու միջադեպերի ամբողջական փաստական համատեքստը, գնահատելու, թե արդյոք իրավական որակումը պատշաճ կերպով արտացոլում է կատարված արարքի բնույթն ու ծանրությունը, ինչպես նաև ստուգելու պետության միջազգային պարտավորությունների կատարման աստիճանը: Բացի այդ, առկա տվյալները չեն վկայում, որ այս պրակտիկան զինվորական միջավայրում իրական կանխարգելիչ նշանակություն ունի:

Ավելին, ինչպես ցույց տվեց մշտադիտարկումը, տուժողները հաճախ չեն մասնակցում դատական նիստերին և իրենց համաձայնությունը արագացված վարույթ կիրառելու վերաբերյալ հայտնում են հեռախոսազանգի միջոցով կամ գրավոր, իսկ երբեմն ընդհանրապես չեն մասնակցում նիստերին: Սա հատկապես բնորոշ է այն դեպքերին, երբ տուժողն արդեն ավարտել է զինվորական ծառայությունը: Արդարադատության հասնելու նկատմամբ հետաքրքրվածությունն ու ներգրավվածությունը ժամանակի ընթացքում, հատկապես տարիներով ձգվող վարույթների պայմաններում, հակված են նվազելու:

Արագացված վարույթը ենթադրում է մեղադրյալի կողմից մեղքի ընդունում: Արդյունքում, նույնիսկ այն դեպքերում, երբ նշանակվում են համեմատաբար խիստ ազատազրկման ձևով պատիժներ, դրանց կատարումը մշտապես պայմանականորեն չի կիրառվում՝ փոխարինվելով փորձաշրջանով և պրոբացիոն վերահսկողությամբ: Նման պայմաններում մեղադրյալների շարժառիթը, ըստ երևույթին, առավելապես պայմանավորված է ոչ թե

պատասխանատվությունն ընդունելու պատրաստակամությամբ, այլ ազատությունից փաստացի զրկումից խուսափելու ձգտմամբ:

Պատիժների նշանակման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները հաճախ կիրառել են պատժից պայմանականորեն ազատելու ինստիտուտը և պրոբացիայի կողմից վերահսկողություն, այդ թվում՝ լուրջ բռնության դեպքերում: Թեև դատարանները սովորաբար հողում են կատարել մեղմացնող հանգամանքներին, մեղադրյալների անձնական բնութագրերին և պատժի նպատակներին, ներկայացված հիմնավորումները միշտ չէ, որ բավարար չափով մանրամասն են եղել՝ բացատրելու պատժաչափերի տարբերությունների պատճառները: Ուսումնասիրված դատական ակտերը բացահայտում են ինչպես ազատազրկման ժամկետների, այնպես էլ փորձաշրջանի տևողության էական տարբերություններ, ինչը հարցեր է առաջացնում պատիժների նշանակման պրակտիկայի հետևողականության և կանխատեսելիության վերաբերյալ:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են ավելի լայն մտահոգություններ՝ կապված թափանցիկության և հանրային հաշվետվողականության հետ: Որոշ կատեգորիայի գործերով դատական տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը, մասնավորապես այն դեպքերում, երբ վարույթը մասամբ իրականացվել է դռնփակ կարգով, սահմանափակում է հանրային վերահսկողության և անկախ գնահատման հնարավորությունները: Սա խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն հետազոտական և մշտադիտարկման աշխատանքների, այլև զինված ուժերում տեղի ունեցող լուրջ միջադեպերի նկատմամբ արձագանքի արդյունավետության նկատմամբ հանրային վստահության ձևավորման համար:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ զինվորական բռնությունը չպետք է դիտարկվի բացառապես որպես առանձին անձանց ոչ պատշաճ վարքագծի դրսևորում: Ուսումնասիրված գործերը վկայում են, որ զինված ուժերում բռնության արդյունավետ հաղթահարումը պահանջում է ավելին, քան առանձին իրավախախտների քրեական հետապնդումը: Արդյունավետ կանխարգելումը ենթադրում է համալիր մոտեցում, որը համատեղում է հաշվետվողականությունը վաղ արձագանքման մեխանիզմների, արդյունավետ հրամանատարական վերահսկողության, խոցելի զինծառայողների պաշտպանության, անկախ և բազմակողմանի քննությունների, ինչպես նաև զինվորական ծառայության և քրեական վարույթների ողջ ընթացքում մարդու իրավունքների չափանիշների հետևողական կիրառման հետ: Այս մեխանիզմների ամրապնդումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն զինված ուժերում բռնության նվազեցման, այլև բոլոր զինծառայողների արժանապատվության, անվտանգության և հիմնարար իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրության համապատասխանեցում

1. Քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 521.1 հոդվածով՝ նախատեսելով զինված ուժերում խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի քրեականացումը:
2. Քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներում կատարել փոփոխություններ՝ խոշտանգման և զինված ուժերում կատարված խոշտանգման նկատմամբ սահմանելով միատեսակ իրավական երաշխիքներ՝ ներառելով ՀՀ քրեական օրենսգրքի 521.1 հոդվածը սահմանափակումների ցանկում. ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում; 81-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում; 83-րդ հոդվածի 9-րդ մասում; 90-րդ հոդվածի 7-րդ մասում; 91-րդ հոդվածի 2-րդ մասում; 92-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչպես նաև 473-րդ հոդվածի 1-ին մասում՝ նախատեսելով տվյալ հանցագործության մասին չհաղորդելու քրեական պատասխանատվություն:
3. Քրեական դատավարության օրենսգրքի 464.1 հոդվածի 2-րդ մասը լրացնել 5-րդ կետով՝ սահմանելով, որ արագացված ընթացակարգով վարույթը չի կարող կիրառվել ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասով, 450-րդ հոդվածով և առաջարկվող 521.1 հոդվածով նախատեսված արարքների դեպքերում:
4. Քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 6-րդ ենթակետով՝ սահմանելով, որ համաձայնեցման ընթացակարգով վարույթը չի կարող կիրառվել ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասով, 450-րդ հոդվածով և առաջարկվող 521.1 հոդվածով նախատեսված արարքների դեպքերում:
5. Վերանայել Քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը՝ սահմանելով, որ հաշտության վարույթի կիրառումը դատավորի հայեցողական լիազորություն է, այլ ոչ թե պարտադիր է հաստատման միայն կողմերի դիմումի հիման վրա, եթե արդարադատության շահերը պահանջում են այլ լուծում:

Բռնության և վատ վերաբերմունքի կանխարգելում

6. Ամրապնդել բարձր ռիսկային իրավիճակներում գտնվող զինծառայողների վաղ բացահայտման և մշտադիտարկման մեխանիզմները՝ ներառյալ այն անձանց, ովքեր ներքաշված են կրկնվող միջանձնային կոնֆլիկտներ մեջ, ենթարկվում են սոցիալական մեկուսացման կամ հոգեբանական ճնշվածության, ունեն նախկինում զոհայնացման փորձառություն կամ առկա են խոցելիության այլ ցուցիչներ:
7. Զինվորական ստորաբաժանումներում ներդնել կանոնավոր ռիսկերի գնահատման ընթացակարգեր և մեխանիզմներ՝ ուղղված բռնության օրինաչափությունների, ոչ կանոնադրական հարաբերությունների, խմբային ահաբեկման, խոցելիությունների և բռնարար վարքագծի այլ դրսևորումների վաղ բացահայտմանը՝ նախքան դրանք կվերաճեն ծանր միջադեպերի:
8. Հզորացնել զինվորական հոգեբանների և այլ աջակցող ծառայությունների դերն ու կարողությունները՝ բռնության, նվաստացման, բուլինգի և ինքնասպանության ռիսկերի բացահայտման, փաստաթղթավորման և համապատասխան արձագանքման նպատակով:
9. Ապահովել մարդու իրավունքների վերաբերյալ կանոնավոր և պարտադիր վերապատրաստումներ զինծառայողների, հրամանատարների, ռազմական

ոստիկանության ծառայողների, զինվորական գործերով քննիչների և դատախազների համար՝ հատուկ շեշտադրելով խոշտանգման և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը, բռնության կանխարգելումը և խոցելի զինծառայողների պաշտպանությունը:
10. Իրականացնել բազմամասնագիտական ուսումնասիրություն՝ համակողմանի գնահատելու խոշտանգմանանման վարքագծի և ինքնասպանությունների առաջացման պատճառներն ու նպաստող գործոնները՝ ներառյալ նախորդ բռնության դեպքերի, հրամանատարական արձագանքների, հոգեբանական խոցելիությունների և այլ ազդող հանգամանքների ուսումնասիրությունը:

Հրամանատարական վերահսկողություն և հաշվետվողականություն

11. Սահմանել հստակ պահանջներ՝ կրկնվող բռնության, նվաստացման և բռնարար վարքագծի այլ դրսևորումների վերաբերյալ միջադեպերի փաստաթղթավորման և վերանայման համար, ներառյալ գնահատումը, թե արդյոք հրամանատարները տեղեկացված են եղել կամ ողջամտորեն պետք է տեղեկացված լինեին ստեղծված իրավիճակի մասին, և արդյոք ձեռնարկվել են բավարար կանխարգելիչ միջոցներ:

12. Վերանայել հրամանատարների և այլ պատասխանատու անձանց նկատմամբ կիրառելի կարգապահական և հաշվետվողականության մեխանիզմները, որոնց գործողությունները կամ անգործությունը կարող էին նպաստել բռնության, վատ վերաբերմունքի կամ մարդու իրավունքների լուրջ խախտումների շարունակականությանը:

Զինծառայողների շրջանում բռնության դեպքերով քննություն

13. Մշակել և ընդունել քննության ուղեցույցներ զինված ուժերում բռնության, երկարատև վատ վերաբերմունքի, ինքնասպանության և ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ՝ ապահովելով, որ քննիչները ուսումնասիրեն ոչ միայն առանձին միջադեպերը, այլև վարքագծի ընդհանուր օրինաչափությունները, հրամանատարական ձախողումները և ինստիտուցիոնալ գործոնները:

14. Ապահովել, որ կրկնվող բռնության, նվաստացման, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, հարկադրանքի կամ վատ վերաբերմունքի այլ ծանր ձևերի վերաբերյալ պնդումները կանոնավոր կերպով գնահատվեն խոշտանգման և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի տեսանկյունից՝ ՀՀ օրենսդրության և մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան:

15. Ամրապնդել երաշխիքները, որոնք ուղղված են զինվորական գործերով ապացույցների և վկաների ցուցմունքների ամբողջականության պաշտպանությանը՝ ներառյալ վկաների

վրա ազդեցության, ահաբեկման, վրեժխնդրության կամ ցուցմունքների համաձայնեցման ռիսկերի նվազեցման միջոցները:

16. Ապահովել, որ ինքնասպանության հասցնելու դեպքերի քննության ընթացքում ուսումնասիրվի նաև հրամանատարական պատասխանատվության հարցը:

Քրեական արդարադատության ոլորտ

17. Քննարկել արագացված և համաձայնեցման ընթացակարգերի կիրառման սահմանափակման հնարավորությունը զինված ուժերում կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքների, ենթադրյալ խոշտանգման կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի երկարատև դրսևորումների դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքների համակողմանի ուսումնասիրությունը բխում է արդարադատության շահերից:

18. Ապահովել զինված ուժերում բռնության և ինքնասպանությունների վերաբերյալ գործերի մասին տվյալների պարտադիր և պարբերական հավաքագրում՝ քաղաքականությունների մշակման և վերլուծության նպատակով:

Թափանցիկություն և հանրային հաշվետվողականություն

19. Բարելավել թափանցիկությունը և զինխառայողների շրջանում բռնության վերաբերյալ գործերի մասին տեղեկատվության հանրային հասանելիությունը՝ վերանայելով դատական ակտերի հրապարակման գործող սահմանափակումները և ապահովելով, որ հնարավորության դեպքում դատական ակտերը և հիմնական դատավարական տեղեկությունները մնան հանրամատչելի, այդ թվում՝ այն դեպքերում, երբ վարույթի առանձին հատվածներ իրականացվել են դռնփակ կարգով՝ օրենքոց պաշտպանվող գաղտնիքի պահպանմամբ: